

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ԱՐԱՄ-ՇԻՆ2007»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԶԻԼԻ ԿՈՆԳԼՈՒԲՐԵԿՉԻԱՆՆԵՐԻ
ՀԱՆՔԱՎԱՅՐԻՑ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
(լրամշակված)

«ԱՐԱՄ-ՇԻՆ2007» ՍՊԸ ՏՆՕՐԵՆ՝

Կ.ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Ներկայացվող սահմանումները և եզրույթները /տերմիններ/ բերվում են ՀՀ բնապահպանական ոլորտի օրենքներից և նորմատիվ փաստաթղթերից:

Շրջակա միջավայր՝ բնական եւ մարդածին տարրերի (մթնոլորտային օդ, ջրեր, հողեր, ընդերք, լանդշաֆտ, կենդանական ու բուսական աշխարհ, ներառյալ անտառ, բնության հատուկ պահպանվող տարածքներ, բնակավայրերի կանաչ տարածքներ, կառույցներ, պատմության եւ մշակույթի հուշարձաններ) եւ սոցիալական միջավայրի (մարդու առողջության եւ անվտանգության), գործունեների, նյութերի, երեւոյթների ու գործընթացների ամբողջությունը եւ դրանց փոխազդեցությունը միմյանց ու մարդկանց միջեւ:

շրջակա միջավայրի վրա ազդեցություն՝ հիմնադրութային փաստաթղթի գործողության կամ նախատեսվող գործունեության իրականացման հետեւանքով շրջակա միջավայրի եւ մարդու առողջության վրա հնարավոր փոփոխությունները:

նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական եւ տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում:

ձեռնարկող՝ սույն օրենքի համաձայն՝ փորձաքննության ենթակա հիմնադրութային փաստաթուղթ մշակող, ընդունող, իրականացնող եւ (կամ) գործունեություն իրականացնող կամ պատվիրող պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմին, իրավաբանական կամ ֆիզիկական անձ:

ազդակիր համայնք՝ շրջակա միջավայրի վրա հիմնադրութային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա համայնքի (համայնքների) բնակչություն՝ ֆիզիկական եւ (կամ) իրավաբանական անձինք:

շահագրգիռ հանրություն՝ փորձաքննության ենթակա հիմնադրութային փաստաթղթի ընդունման եւ (կամ) նախատեսվող գործունեության իրականացման առնչությամբ հետաքրքրություն ցուցաբերող իրավաբանական եւ ֆիզիկական անձինք:

գործընթացի մասնակիցներ՝ պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմիններ, ֆիզիկական ու իրավաբանական անձինք, ներառյալ՝ ազդակիր համայնք, շահագրգիռ հանրություն, որոնք, սույն օրենքի համաձայն, մասնակցում են գնահատումների եւ (կամ) փորձաքննության գործընթացին:

հայտ՝ ձեռնարկողի կամ նրա պատվերով կազմած հիմնադրութային փաստաթղթի մշակման եւ (կամ) նախատեսվող գործունեության նախաձեռնության մասին ծանուցման փաթեթ:

բնության հատուկ պահպանվող տարածք՝ ցամաքի (ներառյալ՝ մակերևութային ու ստորերկրյա ջրերը և ընդերքը) և համապատասխան օդային ավազանի՝ սույն օրենքով գիտական, կրթական, առողջարարական, պատմամշակութային, ռեկրեացիոն, զբոսաշրջության, գեղագիտական արժեք են ներկայացնում, և որոնց համար սահմանված է պահպանության հատուկ ռեժիմ:

ազգային պարկ՝ բնապահպանական, գիտական, պատմամշակութային, գեղագիտական, ռեկրեացիոն արժեքներ ներկայացնող միջազգային և (կամ) հանրապետական նշանակություն ունեցող տարածք, որը բնական լանդշաֆտների ու մշակութային արժեքների զուգորդման շնորհիվ կարող է օգտագործվել գիտական,

կրթական, ռեկրեացիոն, մշակութային և տնտեսական նպատակներով, և որի համար սահմանված է պահպանության հատուկ ռեժիմ.

ազգային պարկի արգելոցային գոտի՝ ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ գործում է պետական արգելոցի համար սույն օրենքով սահմանված ռեժիմը.

ազգային պարկի արգելավայրային գոտի՝ ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ գործում է պետական արգելավայրի համար սույն օրենքով սահմանված ռեժիմը.

ազգային պարկի ռեկրեացիոն գոտի՝ ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ թույլատրվում է քաղաքացիների հանգստի և զբոսաշրջության ու դրա հետ կապված սպասարկման ծառայության կազմակերպումը.

ազգային պարկի տնտեսական գոտի՝ ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ թույլատրվում է ազգային պարկի ռեժիմին համապատասխանող տնտեսական գործունեություն.

պետական արգելավայր՝ գիտական, կրթական, պատմամշակութային, տնտեսական արժեք ներկայացնող տարածք, որտեղ ապահովվում են էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների պահպանությունը և բնական վերարտադրությունը.

պետական արգելոց՝ գիտական, կրթական, պատմամշակութային արժեք ներկայացնող առանձնահատուկ բնապահպանական, գեղագիտական հատկանիշներով օժտված միջազգային և (կամ) հանրապետական նշանակություն ունեցող տարածք, որտեղ բնական միջավայրի զարգացման գործընթացներն ընթանում են առանց մարդու անմիջական միջամտության.

բնության հատուկ պահպանվող տարածքի պահպանման գոտի՝ տարածք, որի ստեղծման նպատակն է սահմանափակել (մեղմացնել) բացասական մարդածին ներգործությունը բնության հատուկ պահպանվող տարածքների էկոհամակարգերի, կենդանական ու բուսական աշխարհի ներկայացուցիչների, գիտական կամ պատմամշակութային արժեք ունեցող օբյեկտների վրա.

լանդշաֆտ՝ աշխարհագրական թաղանթի համասեռ տեղամաս, որը հարևան տարածքներից տարբերվում է երկրաբանական կառուցվածքի, ռելիեֆի, կլիմայի, հողաբուսական ծածկույթի և կենդանական աշխարհի ամբողջությամբ.

հող՝ երկրի մակերևույթում բիոտիկ, աբիոտիկ և մարդածին գործոնների երկարատև ազդեցության արդյունքում առաջացած ինքնուրույն բնագիտապատմական հանքաօրգանական բնական մարմին՝ կազմված կոշտ հանքային և օրգանական մասնիկներից, ջրից ու օդից և ունի բույսերի աճի ու զարգացման համար համապատասխան պայմաններ ստեղծող յուրահատուկ գենետիկամորֆոլոգիական հատկանիշներ ու հատկություններ.

հողային պրոֆիլ՝ հողագոյացման գործընթացում օրինաչափորեն փոփոխվող և գենետիկորեն կապակցված հողային հորիզոնների ամբողջություն.

խախտված հողեր՝ առաջնային տնտեսական արժեքը կորցրած և շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության աղբյուր հանդիսացող հողեր.

հողի բերրի շերտ՝ հողային ծածկույթի վերին շերտի բուսահող, որն օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով.

հողի պոտենցիալ բերրի շերտ՝ հողային պրոֆիլի ստորին մասը, որն իր հատկություններով համընկնում է պոտենցիալ բերրի ապարների (բուսականության աճի համար սահմանափակ բարենպաստ քիմիական կամ ֆիզիկական հատկություններ ունեցող լեռնային ապարներ) հատկություններին.

հողածածկույթ՝ երկրի կամ դրա ցանկացած տարածքի մակերևույթը ծածկող հողերի ամբողջությունն է.

հողի բերրի շերտի հանման նորմեր՝ հողի հանվող բերրի շերտի խորությունը (սմ), ծավալը (մ³), զանգվածը (տ).

ռեկուլտիվացում՝ խախտված հողերի վերականգնմանն ուղղված (օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների համալիր, որը կատարվում է 2 փուլով՝ տեխնիկական և կենսաբանական.

ռեկուլտիվացիոն աշխատանքներ՝ օգտակար հանածոների արդյունահանման նախագծով կամ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության ծրագրով շրջակա միջավայրի պահպանության նպատակով նախատեսված ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի վերականգնմանն ուղղված (անվտանգ կամ օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումներ.

կենսաբանական բազմազանություն՝ ցամաքային, օդային և ջրային էկոհամակարգերի բաղադրիչներ համարվող կենդանի օրգանիզմների տարատեսակություն, որը ներառում է բազմազանությունը տեսակի շրջանակներում, տեսակների միջև և էկոհամակարգերի բազմազանությունը.

երկրաբանական ուսումնասիրություններ՝ ընդերքի երկրաբանական աշխատանքների համալիր, որի նպատակն է ուսումնասիրել երկրակեղևի կառուցվածքը, ապարների առաջացման պայմանները, արտածին երկրաբանական պրոցեսները, հրաբխային գործունեությունը, ինչպես նաև հայտնաբերել ու գնահատել օգտակար հանածոների պաշարները.

բնապահպանական կառավարման պլան՝ ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումներ և դրանց իրականացման մշտադիտարկման ցուցիչներ, որոնք հստակ են և չափելի՝ որոշակի ժամանակի ընթացքում.

բնության հուշարձան, բնության հատուկ պահպանվող տարածքի կարգավիճակ ունեցող գիտական, պատմամշակութային և գեղագիտական հատուկ արժեք ներկայացնող երկրաբանական, ջրաերկրաբանական, ջրագրական, բնապատմական, կենսաբանական բնական օբյեկտ.

պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձաններ՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրաված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային եւ բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	8
1. ԾՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ.....	9
1.1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը.....	13
1.2. Շրջակա միջավայրի վրա ազդեցության.....	13
գնահատման և փորձաքննության մասին (ՇՄՎԱՓ) օրենքը.....	13
1.3. ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք (2011թ.).....	16
1.4. Հողային օրենսգիրք (2001).....	16
1.5. Թափոնների մասին օրենք (2004).....	16
1.6. Բնապահպանական վերահսկողության մասին օրենք (2005).....	17
1.7. Մթնոլորտային օդի պահպանության մասին ՀՀ օրենքը (1994).....	17
1.8. Պատմական և մշակույթի անշարժ հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին օրենք.....	18
1.9. Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին օրենք.....	18
1.10. Բուսական աշխարհի մասին օրենք.....	19
1.11. Կենդանական աշխարհի մասին օրենք.....	20
2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	21
2.1. Ձեռնարկողի անվանումը և գտնվելու վայրը.....	21
2.2. Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը.....	21
2.3. Նախատեսվող գործունեության բնութագիրը.....	21
2.4. Օգտակար հանածոյի նյութական կազմը.....	23
2.4.1. <i>Ֆիզիկամեխանիկական հատկությունները.....</i>	<i>23</i>
2.4.2. <i>Քիմիական կազմը.....</i>	<i>24</i>
2.4.3. <i>Օգտակար հանածոյի միաձուլությունը.....</i>	<i>24</i>
2.4.4. <i>Բյուրեղի արդյունահանման թափոնների որակական բնութագիրը.....</i>	<i>25</i>
2.4.5. <i>Կոնգլոմերեկիաների ճառագայթահիգիենիկ բնութագիրը.....</i>	<i>26</i>
2.4.6. <i>Կոնգլոմերեկիաների գեղագործային (դեկորատիվ) հատկությունները.....</i>	<i>26</i>
2.5. Հանքավայրի ջրաերկրաբանական պայմանները.....	26
2.6. Պաշարների հաշվարկը.....	27
3.1. Հանքավայրի մշակման եղանակի ընտրումը.....	29
3.2. Նախագծային կորուստներ.....	30
3.3. Բացահանքի արտադրողականությունը և աշխատանքային ռեժիմը.....	30
3.4. Բացահանքի ծառայման ժամկետը.....	30
3.5. Հանքավայրի բացումը.....	31
3.6. Մշակման համակարգը.....	31
3.7. Լեռնակապիտալ աշխատանքներ.....	32
3.8. Մակարացման աշխատանքներ.....	32
3.9. Լեռնային զանգվածի նախապատրաստումը հանույթի.....	32
3.10. Հանութաբարձման աշխատանքները.....	33
3.10.1. <i>Բարձման աշխատանքներ.....</i>	<i>33</i>
3.10.2. <i>Բյուրեղի կոպիտ մշակումը.....</i>	<i>34</i>
3.10.3. <i>Մեղմած օդի մատակարարումը.....</i>	<i>34</i>
3.11. Բուլդոզերային աշխատանքները.....	35
3.13. Լցակույտաառաջացում.....	37
3.14. Ջրամատակարարումը և ջրհեռացումը.....	37

3.15. Բացահանքի մշակման ժամանակացուցային պլանը.....	38
3.16. Նախագծի այլընտրանքները.....	38
4. ՆԱԽԱՏԵՄՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՌԱՋԱՅՈՂ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ.....	40
4.1. Դատարկ ապարներ	40
4.2. Բանեցված կապարե կուտակիչներ և խոտան.....	41
4.3. Իրենց սպառողական հատկությունները կորցրած	42
դիզելային յուղերի մնացորդներ.....	42
4.4. Բանեցված շարժիչների յուղերի թափոններ.....	42
4.5. Բանեցված օդանշիչ դողեր	43
4.6. Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած	43
չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի).....	43
5.1. Հանքավայրի տեղադիրքը.....	45
5.2. Ռեյիեֆ և երկրաձևաբանություն	46
5.3. Շրջանի երկրաբանական կառուցվածքի համառոտ բնութագիրը	47
5.3.1. <i>Տեկտոնիկա</i>	49
5.3.2. <i>Հանքավայրի երկրաբանական կառուցվածքը</i>	50
5.4. Կլիմայական պայմաններ.....	53
5.5. Շրջանի սելսիկ բնութագիրը	57
5.6. Սողանքներ.....	59
5.7. Ջրային ռեսուրսներ	61
5.8. Մթնոլորտային օդի որակի բնութագիր	65
5.9. Հողային ծածկույթ.....	65
5.10. Բուսական և կենդանական աշխարհ.....	69
5.10.1. <i>Բուսական աշխարհ</i>	69
5.10.2. <i>Կենդանական աշխարհ</i>	71
5.11. Վտանգված էկոհամակարգեր, հատուկ պահպանվող տարածքներ	75
<i>Արգելավայրեր</i>	77
<i>Ռեկրեացիոն գոտիներ</i>	78
<i>Տնտեսական գոտիներ</i>	78
5.12. Պատմամշակութային և բնական հուշարձաններ	80
6. ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐ.....	82
6.1. Ենթակառուցվածքներ	82
6.2. Ճամբարակ Համայնք	85
6.2.1. <i>Ջիլ բնակավայր</i>	86
7.1. Արտանետումները մթնոլորտ	88
7.2. Ջրային ռեսուրսներ	92
7.2.1. <i>Ջրամատակարարումը և ջրհեռացումը</i>	92
7.3. Հողային ռեսուրսներ.....	93
7.4. Ազդեցությունը կենդանական և բուսական աշխարհի վրա	93
7.5. Սոցիալական ազդեցության գնահատականը	94
7.6. Աղմուկ	95
7.7. Սանիտարա-պաշտպանիչ գոտի.....	95
7.8. Շրջակա միջավայրի վրա գումարային ազդեցությունը.....	96
8. ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԾՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՄԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ.....	97

8.1. Մթնոլորտային օդի աղտոտվածության հետևանքով տնտեսությանը հասցված տնտեսական վնասը.....	98
8.2. Հողերի օտարումից տնտեսական վնասի հաշվարկը.....	100
9. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ	101
9.1. Անվտանգության տեխնիկական և արդյունաբերական սանիտարիան.....	101
9.2. Ինժեներա-տեխնիկական միջոցառումները	102
10. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ, ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ՎԹԱՐԱՑԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑՈՂ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՂՄԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԵՎ ԾՐԱԳՐԵՐ.....	103
11. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ....	105
11.1. Մշտադիտարկումների պլան.....	106
12. ՀԱՆՔԻ ՓԱԿՄԱՆ ԾՐԱԳԻՐ.....	116
12.1. Մշտադիտարկումների ծրագիր.....	117
12.1.1. <i>Մշտադիտարկումների կետերի տեղադիրքը հանախականությունը և տևողությունը</i>	<i>117</i>
12.2. Աշխատուժի մեղմացումը	117
12.3. Ֆինանսական երաշխիքները.....	118
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	122

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Գեղարքունիքի մարզը հարուստ է մետաղական և ոչ մետաղական օգտակար հանածոներով, որոնց շահագործումը հնարավորություն կստեղծի բարելավելու սահմանամերձ բնակավայրերի բնակիչների սոցիալ-տնտեսական վիճակը և զարգացնելու տնտեսությունը:

ՀՀ-ում արագ թափ ստացող քաղաքաշինությունը առաջին պլան է մղում շինանյութերի բազայի ընդլայնման անհրաժեշտությունը: Այս առումով կարևոր նշանակություն ունի շինարարական նյութերի հանքավայրերի շահագործումը:

Ջիլի կոնգլոբրեկչիանների հանքավայրը, որի պաշարները գնահատվել են 2012թ.-ին նախատեսված է որպես երեսպատման հումք: Դրա շահագործումը հնարավորություն կտա համայնքում ստեղծելու նոր աշխատատեղեր և իրականացնել սոցիալ-տնտեսական ծրագրեր:

«ԱՐԱՄ - ՇԻՆ2007» ՍՊ ընկերությունը ՀՀ -ում երկար տարիներ զբաղվում է շինարարական աշխատանքներով և լուրջ ներդրում ունի քաղաքաշինության և ճանապարհաշինության բնագավառներում:

«ԱՐԱՄ-ՇԻՆ2007» ՍՊ Ընկերությունը ուսումնասիրել է ՀՀ Գեղարքունիքի մարզի Ջիլի կոնգլոբրեկչիանների հանքավայրի հումքի քանակական և որակական պարամետրերը (ըստ հանրապետական երկրաբանական ֆոնդ ՊՈԱԿ-ի) և ցանկանում է կազմակերպել կոնգլոբրեկչիանների արդյունահանում հումքից երեսպատման սալիկներ և դեկորատիվ իրեր արտադրելու նպատակով:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Ջիլ բնակավայրում իրականացվել են երեք հանրային քննարկում: Նախնական գնահատման հայտը լրամշակվել է տարբեր կազմակերպությունների կողմից արված դիտողությունների և առաջարկների հիման վրա: ՇՄԱԳ հաշվետվությունը կազմված է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից տրամադրված տեխնիկական առաջադրանքի համաձայն:

1. ՇՐՋԱԿԱՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

ՇՄԱԳ հաշվետվությամբ ներկայացվում է իրականացվելիք գործունեության շրջակա միջավայրի վրա ունենալիք ազդեցությունների գնահատականը, ինչպես նաև մշակված են բոլոր այն միջոցառումները, որոնք հնարավորություն կտան մեղմելու ազդեցության չափը:

Հաշվետվությունը կազմելիս ուսումնասիրվել է միջազգային լավագույնը փորը, օգտագործվել են բնապահպանական ուղեցույցների, ձեռնարկների ինչպես նաև մեթոդական ցուցումների դրույթներն ու կարգավորումները:

ՇՄԱԳ հաշվետվության կազմը և բովանդակությունը համապատասխանում է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքին և ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության "Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն" ՊՈԱԿ – ի կողմից տրամադրված տեխնիկական առաջադրանքի պայմաններին:

ՇՄԱԳ հաշվետվությունը կազմելիս հաշվի են առնվել ՀՀ օրենսդրության (օրենքների և ենթօրենսդրական ակտերի) և շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված ՀՀ Միջազգային պարտավորություններով ստանձնած պահանջները:

ՇՄԱԳ հաշվետվությունը կազմելիս օգտագործվել են հետևյալ տեղեկատվական աղբյուրները.

- Հանքավայրի աշխատանքային նախագիծը,
- Նախատեսվող գործունեության տարածաշրջան այցելությունների ընթացքում հավաքագրված տվյալները և տեղեկատվությունը,
- Տարածաշրջանի վերաբերյալ հաշվետվությունները, վերլուծությունները և քարտեզները,
- Նախագծի շահագրգիռ կողմերի հետ բանակցությունները և քննարկումները:

ՇՄԱԳ հաշվետվությունը կազմվել է «ԱՐԱՄ-ՇԻՆ2007» ՍՊ ընկերության սեփական միջոցների հաշվին տեխնիկական առաջադրանքի հիման վրա և ներկայացվում է օրենքով սահմանված փորձաքննության:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի սահմանված դասակարգումների, նախատեսվող գործունեությունը դասվում է «Ա» կատեգորիայի և ենթակա է փորձաքննության երկու փուլով:

ՇՄԱԳ հաշվետվության նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել, բոլոր հնարավոր ուղակի և անուղակի բացասական ազդեցությունները շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա, որոնք առաջանալու են ՀՀ Գեղարքունիքի մարզի Ջիլի կոնգլոբրեկչիանների հանքավայրում իրականացվելիք արդյունահանման աշխատանքների արդյունքում:

Ազդեցությունների աղբյուրների և չափի գնահատումը հնարավորություն է տվել մշակել համապատասխան միջոցառումների ծրագրեր, որոնցով հնարավորինս կանխվելու է վնասակար ազդեցությունները և ապահովվելու է կենսոլորտի կայունության պահպանումն ու մարդու սոցիալ-տնտեսական զարգացման բնական ընթացքը:

Ընկերությունը իր գործունեության ընթացքում խստագույնս հետևելու է օրենսդրական գործիքակազմին, որոնք կարգավորվում են ՀՀ - ում 1991 թ.-ից մինչև

այժմ ընդունված բազմաթիվ օրեսագրքերի, օրենքների, ենթաօրենսդրական ակտերի և կանոնակարգերի միջոցով:

Շրջակա միջավայրի պահպանության հարցերին առնչվող ՀՀ օրենքների և օրենսգրքերի ցանկը ներկայացված է ստորև.

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը մշակվել է ՀՀ բնապահպանության և ընդերքի օրենսդրության, ՀՀ կառավարության որոշումների, հրամանների և գործող մեթոդակարգերի հիման վրա:

- ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք (ՀՕ-280, 28.11.2011թ.), որով սահմանվում են ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, կարգավորվում են ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանության, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերքօգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները:

- ՀՀ Հողային օրենսգիրք (ՀՕ-185, 02.05.2001թ.), որը սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:

- «Թափոնների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-159-Ն, 24.11.2004թ.)

- ՀՀ Ջրային օրենսգիրք (ՀՕ-373, 04.06.2002թ.), որով կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:

- ՀՀ Անտառային օրենսգիրք (ՀՕ-211, 24.10.2005թ.), որը կարգավորում է ՀՀ անտառների և անտառային հողերի կայուն կառավարման՝ պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև անտառների հաշվառման, մոնիթորինգի, վերահսկողության և անտառային հողերի հետ կապված հարաբերությունները:

- «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.), որը սահմանում է պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում:

- «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.), որը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը:

- «Սևանա լճի մասին» ՀՀ օրենք (15-ը մայիսի 2001 թ.)

- «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-121, 11.10.1994թ.), որի առարկան մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունների կարգավորումն է:

- «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության

հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:

- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-110, 21.06.2014թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները:

- ՀՀ Կառավարության 20.01.2005 թ.-ի թիվ 64-Ն որոշում, որով սահմանվել է ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչները:

- ՀՀ կառավարության 14.12.2017թ.-ի թիվ 1643-Ն որոշում, որը կիրառվում է Հայաստանի Հանրապետության տարածքում խախտված հողերի հաշվառման, հողաշինարարական, քարտեզագրման, կանխատեսվող ու իրականացման ենթակա ռեկուլտիվացման աշխատանքների նախագծման, ռեկուլտիվացման, ռեկուլտիվացված հողերի նպատակային նշանակության ուղղությունների որոշման, ինչպես նաև նպատակային ու գործառական նշանակությանը համապատասխան՝ դրանց հետագա օգտագործման ժամանակ:

- ՀՀ կառավարության 14.08.2014թ.-ի N781-Ն որոշում, որը սահմանում է Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման ընթացակարգը:

- ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշում, որը սահմանում է ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը:

- ՀՀ կառավարության 02.11.2017թ.-ի N1404-Ն որոշում, որով սահմանվել են հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և պակաս արդյունավետ հողերի բարելավման համար հողի բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները:

- ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը:

- ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բույսերի Կարմիր գիրքը:

- ՀՀ կառավարության 25.09.2014թ.-ի N1059-Ա որոշում, որով հաստատվել է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և ծրագրի միջոցառումները:

- ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 967-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բնության հուշարձանների ցանկը ըստ տեսակների և տեղադիրքի:

- «Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 08.09.2011 թ. N 1396-Ն որոշումը,
- «Օգտակար հանածոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակայանների տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման, վճարների չափերի հաշվարկման և վճարման կարգը սահմանելու մասին» ՀՀ Կառավարության 10 հունվարի 2013 թվականի N 22-Ն որոշումը,
- «Ընդերքօգտագործման թափոնների կառավարման պլանի և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանի օրինակելի ձևերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 15.06.2017թ.-ի N 676-Ն որոշում,
- «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի n 1026-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ Կառավարության 02.11.2017թ N 1404 -Ն որոշում:
- «Ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկման և վերահաշվարկման կարգը սահմանելու մասին» Կառավարության 18.08.2021թ. N 1352-Ն որոշում,
- «Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի N 1079-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Կառավարության 21.10.2021թ. N 1733-Ն որոշում
- Հրաման N6-Ն 07.01.2022թ. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի 2012 թվականի դեկտեմբերի 24-ի N365-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին
- «Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի N 1079-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Կառավարության 21.10.2021թ. N 1733-Ն որոշում
- «Ընդերքօգտագործման հետևանքով խախտված հողերի, ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտների ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման, այդ թվում՝ կենսաբանական վերականգնման ուղեցույցը հաստատելու մասին» Կառավարության 11.11.2021թ. N 1848-Ն որոշում:
- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման դրույթների կիրարկման ուղեցույցները հաստատելու մասին» ՀՀ Շրջակա միջավայրի նախարարի 25 հոկտեմբեր 2022թ N369-Ն Հրաման:

Միջազգային համաձայնագրեր.

1. «Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին»
2. կոնվենցիա (Բեռն)
3. «Միջազգային կարևորության խոնավ տարածքների մասին, հատկապես որպես
4. ջրաթռչունների բնակավայր» կոնվենցիա (Ռամսար.)
5. «Միգրացվող վայրի կենդանիների տեսակների պահպանության մասին»

6. կոնվենցիա (Բոնն)
7. «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիա (CITES) (Վաշինգտոն)
8. Լանդշաֆտների եվրոպական կոնվենցիա (Ֆլորենցիա)
9. «Համաշխարհային մշակութային և բնական ժառանգության պահպանության մասին» կոնվենցիա (Փարիզ)
11. ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիա (Նյու Յորք)
12. «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիա (Ռիո-դե-ժանեյրո)
13. «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» կոնվենցիա (Ստոկհոլմ) (վավերացվել է ՀՀ կառավարության կողմից 2003թ.-ին)
14. «Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» կոնվենցիա (Բազել)

1.1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը

Բնապահպանական խնդիրների վերաբերյալ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված են երեք հոդվածներ.

Հոդված 10. Պետությունն ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունն ու վերարտադրությունը և բնական պաշարների խելամիտ օգտագործումը:

Հոդված 31. Յուրաքանչյուր ոք ունի իրեն պատկանող գույքը ազատորեն տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իրավունք: Գույքի իրավունքը չպետք է կիրառվի շրջակա միջավայրի վրա վնաս պատճառելու կամ այլ անձանց, հասարակության և պետության իրավունքների և օրինական շահերի խախտման համար:

Հոդված 33.2. Յուրաքանչյուր ոք ունի իր առողջության և բարեկեցության համար բարենպաստ միջավայրում ապրելու իրավունք և պարտավոր է պաշտպանել և կատարելագործել այն անձամբ կամ ուրիշների հետ միասին: Պետական պաշտոնյաները պատասխանատվություն են կրում բնապահպանական խնդիրների վերաբերյալ տեղեկությունները թաքցնելու և դրանով հասանելիության հերքելու համար:

1.2. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին (ՇՄՎԱՓ) օրենքը

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության (ՇՄՎԱՓ) մասին օրենքը, որն ընդունվել է 2014թ.-ին, սահմանում է նախագծային գործունեության և հայեցակարգային փաստաթղթերի պետական փորձաքննության իրականացման իրավական հիմունքները, ինչպես նաև ներկայացնում է ՀՀ-ում իրականացվող տարբեր ծրագրերի և գործունեության Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության գործընթացի հիմնական քայլերը:

ՇՄՎԱՓ-ն պետության կողմից անցկացվող պարտադիր գործունեություն է: Օրենքի 2-5 հոդվածներում սահմանված են տարբեր ծրագրերի և ոլորտային զարգացման հայեցակարգերի (օր.՝ էներգետիկա, լեռնահանքային արդյունաբե-

րություն, քիմիական արդյունաբերություն, շինանյութերի արդյունաբերություն, մետալուրգիա, փայտի և թղթի արդյունաբերություն, գյուղատնտեսություն, սննդի արդյունաբերություն և ձկնային տնտեսություն, ջրային տնտեսություն, էլեկտրատեխնիկական արտադրություն, ենթակառուցյուններ, սպասարկման ոլորտ, զբոսաշրջիկություն և հանգիստ, և այլն) շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման պարտադիր գործընթացի իրականացման հիմնական իրավական, տնտեսական և կազմակերպական սկզբունքները:

Ի լրումն նշվածի, ՇՄԱՓ գործընթացը կարող է նախաձեռնվել նաև այն ծրագրերի համար, որոնք չեն գերազանցում նվազագույն չափաքանակների պահանջները:

ՀՀ Շրջակա միջավայրի նախարարությունը անհրաժեշտության դեպքում կարող է նախաձեռնել շրջակա միջավայրի ազդեցության վերանայում:

Օրենքը պահանջում է, որ ցանկացած տնտեսական գործունեության, պլանիկամ ծրագրի իրականացման համար ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության Պետական բնապահպանական փորձաքննություն Պետական ոչառևտրային կազմակերպության կողմից ստացվի դրական եզրակացություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ:

Օրենքն արգելում է, առանց ՇՄԱՓ դրական եզրակացության որևէ գործունեություն:

ՇՄԱՓ մասին օրենքն ընդհանուր առմամբ համահունչ է միջազգային կոնվենցիաների և զարգացմանն աջակցող կազմակերպությունների (օրինակ՝ Համաշխարհային բանկ (WB), ԱՄՆ ՄԶԳ (USAID), ԵԽ (EU), ՀՄԿ (MCC), և այլն) բնապահպանական գնահատման մոտեցումներին:

Սույն Օրենքը նաև ապահովում է հանրության ներգրավումն ու մասնակցությունը ՇՄԱՓ բոլոր փուլերին:

ՇՄԱՓ Օրենքը նախագծերը բաժանում է 3 կատեգորիաների՝ Ա, Բ և Գ կատեգորիաներ: «ԱՐԱՄ-ՇԻՆ2007» ՍՊ Ընկերության կողմից նախատեսվող գործունեությունը համաձայն Օրենքի 14-րդ հոդվածի, 4րդ մասի, 2րդ կետի, գ) ենթակետի դասակարգվում է «Ա» կատեգորիայի:

ՇՄԱՓ օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ բաժինների համաձայն՝ փորձաքննության հիմնական փուլի տևողությունը չպետք է գերազանցի.

ա) 90 աշխատանքային օրը ուղեկցող փաստաթղթերի համար

բ) 90 աշխատանքային օրը Կատեգորիա Ա-ի նախատեսվող գործունեության համար

գ) 60 աշխատանքային օրը նախատեսված Բ կատեգորիայի համար Փորձաքննությունը իրականացվում է երկու փուլով՝

- Նախնական փուլ, որի ընթացքում քննվում է նախնական գնահատման հայտը

- Հիմնական փուլ, որի ընթացքում հիմնական գնահատման հաշվետվությունը ենթարկվում է փորձաքննությանը

Նախնական փուլ

Վերլուծության նախնական փուլն իրականացվում է 30 աշխատանքային օրվա ընթացքում, նախնական գնահատման հայտը ներկայացնելով Շրջակա միջավայրի նախարարությանը (ՇՄՆ)՝ իրավասու մարմնի միջոցով նախաձեռնողի կողմից:

Այս փուլի ավարտին ՇՄՆ-ն որոշում է կայացնում, թե արդյո՞ք նախատեսված գործունեությունը անթույլատրելի է Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված բնապահպանական պահանջների հիման վրա կամ ենթակա է ազդեցության գնահատման անդրսահմանային ենթատեսքստում, կամ ենթակա է ազդեցության գնահատման իր իրավասությունների շրջանակի համաձայն (Ա և Բ կատեգորիաների դեպքերում):

Հիմնական փուլ

Այնուհետև, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը կատարվում է ՇՄԱՓ օրենքի այլ իրավական ակտերի և իրավասությունների շրջանակի համաձայն: Այն որոշման դեպքում, երբ առաջարկվող գործունեությունը «Ա» կատեգորիայի ներքո է, ապա այն ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման:

Նախաձեռնողի կամ նախաձեռնողի անունից ազդեցության գնահատում իրականացնող անձի կողմից նախապատրաստվում է գործունեության ազդեցության գնահատման հաշվետվություն, ինչը համաձայն ՇՄԱՓ Օրենքի 18-րդ հոդվածի ներկայացվում է փորձաքննության:

Փորձաքննության համար անհրաժեշտ է ՇՄՆ-ի Շրջակա միջավայրի վրա ազդեցության վերլուծության կենտրոնի ներկայացնել հետյալ փաստաթղթերը.

- Հաշվետվություն առաջարկվող գործունեության ազդեցության գնահատման վերաբերյալ

- Առաջարկվող գործունեության հիմնարար փաստաթղթի նախագիծը

- Առաջարկվող գործունեության նախագծային փաստաթուղթ

- Գործընթացի մասնակիցների մասնակցության հետ կապված փաստաթղթեր (հանրային ծանուցման հրապարակման պատճեն, ստացված դիտողություններն ու առաջարկությունները, հանրային լուսմների արձանագրությունը, աուդիո և վիդեո ձայնագրությունները)

- իրավաբանական անձի համար՝ իր կանոնադրության և դրույթների պատճենները, անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ պետական գրանցման վկայականի պատճենը

- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքում, լիցենզիայի պատճենը կամ նախատեսվող գործունեության մեջ ներգրավվելու թույլտվությունը

- Պետական տուրքի վճարման անդորրագիրը

Փորձաքննության հիմնական փուլը սկսվում է այն պահից, երբ նախաձեռնողը լիազորված մարմնին ներկայացնում է զեկույցը՝ կցված փաստաթղթերի հետ:

Ա/Բ կատեգորիաների դեպքում, համապատասխանաբար, այս փուլի տևողությունը չի գերազանցում 60/40 աշխատանքային օրը: Փորձաքննության հիմնական փուլի տևողությունը կարող է երկարաձգվել յուրաքանչյուր կատեգորիայի համար՝ չգերազանցելով ժամանակահատվածի կեսը, բայց ոչ ավելի, քան մեկ անգամ՝ նախաձեռնողին գրավոր ծանուցելով:

Փորձաքննությունից հետո Շրջակա միջավայրի վրա ազդեցության վերլուծության կենտրոնը դրական կամ բացասական փորձագիտական եզրակացություն է տալիս, որը հաստատվում է ՇՄՆ - ի կողմից: Նախատեսված գործունեությունը չի կարող իրականացվել առանց դրական փորձաքննության եզրակացության (վերլուծության դրական եզրակացություն):

1.3. ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք (2011թ.)

ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պահպանության խնդիրները, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերք օգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության 2011թ. նոյեմբերի 28-ին ընդունված «Ընդերքի մասին օրենսգրքով»:

Ի կատարումն ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ ենթակետի և 49-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ ենթակետի պահանջների ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարը 30.12.2011թ. N 249-Ն հրամանով հաստատել է «Ընդերքօգտագործման իրավունք հայցելու դիմումին կից ներկայացվող բնության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատմանը, բնության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատմանը և հանքի փակման ծրագրին ներկայացվող պահանջներ»-ը:

Օգտակար հանածոների արդյունահանման ընթացքում առաջացող բնապահպանական և անվտանգության խնդիրների կարգավորման և դրանց արդյունավետ վերահսկման նպատակով ՀՀ կառավարության կողմից հաստատվել է «Օգտակար հանածոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման, վճարների չափերի հաշվարկման և վճարման կարգը» (10.01.2013 թիվ 22-Ն):

1.4. Հողային օրենսգիրք (2001)

Հողային օրենսգիրքը սահմանում է տարբեր նպատակների (գյուղատնտեսություն, քաղաքացիական շինարարություն, արդյունաբերություն և հանքարդյունաբերություն, էլեկտրաէներգիայի արտադրություն, հաղորդակցության միջոցներ, տրանսպորտ և այլն) համար ծառայող պետական հողերի օգտագործման կառավարումը:

Օրենսգիրքը սահմանում է նաև հատուկ պահպանվող տարածքների, անտառային, ջրային և պահուստային հողերը, ինչպես նաև անդրադառնում է հողերի պահպանությանն ուղղված միջոցառումներին, պետական/տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների իրավասություններին:

Օրենսգրքի համաձայն օգտակար հանածոների արդյունահանման համար հողամասերը տրամադրվում են ընդերքի օգտագործման իրավունք հաստատող փաստաթղթերին համապատասխան (հոդված 13.6):

1.5. Թափոնների մասին օրենք (2004)

Օրենքը կարգավորում է թափոնների հավաքման, տեղափոխման, կուտակման, մշակման, կրկնակի օգտագործման, հեռացման, ծավալի փոքրացման խնդիրներին վերաբերվող իրավական և տնտեսական հարաբերությունները, ինչպես

նան շրջակա միջավայրի, մարդու կյանքի և առողջության վրա դրանց բացասական ազդեցության կանխումը:

Օրենքը սահմանում է թափոնների օգտագործման օբյեկտները, պետական քաղաքականության հիմնական սկզբունքները և ուղղությունները, պետական ստանդարտավորման սկզբունքները, գույքագրումը, վիճակագրական տվյալների ներմուծումը, պահանջների իրականացման մեխանիզմները, թափոնների վերամշակման սկզբունքները, թափոնների պետական մոնիտորինգի իրականացման սկզբունքները, թափոնների քանակի կրճատմանն ուղղված գործողությունները՝ ներառյալ բնօգտագործման վճարները, ինչպես նաև իրավական և ֆիզիկական անձանց կողմից բնությանը և մարդու առողջությանը պատճառված վնասի դիմաց փոխհատուցումը, թափոնների օգտագործումը, պետական մոնիտորինգի իրականացման պահանջները և իրավական խախտումները:

Օրենքը սահմանում է նաև պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև իրավաբանական անձանց ու անհատների իրավունքներն ու պարտականությունները:

1.6. Բնապահպանական վերահսկողության մասին օրենք (2005)

Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական օրենսդրության նորմերի կատարման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման խնդիրները և սահմանում է Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական օրենսդրության նորմերի կատարման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունները, կարգերը, պայմանները, դրանց հետ կապված հարաբերությունները և բնապահպանական վերահսկողության իրավական ու տնտեսական հիմքերը:

1.7. Մթնոլորտային օդի պահպանության մասին ՀՀ օրենքը (1994)

Մթնոլորտային օդի պահպանության մասին ՀՀ օրենքի առարկան մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա քիմիական, ֆիզիկական, կենսաբանական և այլ վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունների կարգավորումն է: Համաձայն այս օրենքի, հանքարդյունահանողը՝ արդյունահանումն, ինչպես նաև թափոնների տեղափոխումն ու ժամանակավոր պահումն իրականացնի նվազագույնի հասցնելով փոշու և այլ մթնոլորտային արտանետումները:

Նախագծով իրականացվելիք աշխատանքների արդյունքում նախատեսվող շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը մշակված է ՀՀ Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին օրենքի հիման վրա:

Հաշվետվությունը ներառում է տվյալներ, հիմնավորումներ և հաշվարկներ, որոնք անհրաժեշտ են շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության ազդեցության փորձաքննության իրականացման համար:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության և փորձաքննության գնահատման (այսուհետ՝ ՇՄԱԳ) նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կանխատեսվող էկոլոգիական ազդեցությունը (շրջակա

միջավայրը աղտոտող վնասակար նյութերը, թափոնները և այլ գործոններ), վերլուծել և գնահատել այն և ցույց տալ, որ նախատեսված են դրա կանխարգելմանը, չեզոքացմանը և կամ նվազեցմանը ուղղված անհրաժեշտ միջոցառումներ:

1.8. Պատմական և մշակույթի անշարժ հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին օրենք

Օրենքը սահմանում է ՀՀ հուշարձանների պահպանման և օգտագործման իրավական և քաղաքական հիմքերը, կարգավորում պահպանման և օգտագործման գործողությունների միջև հարաբերությունները:

Օրենքի համաձայն, Լիազոր մարմինը կարող է հաստատել զարգացման գործողությունները, ներառյալ՝ շինարարությունը, եթե մշակման համար նախատեսվող տարածքներում տեղակայված է պատմական կամ մշակութային հուշարձան:

Օրենքը պահանջում է, որ պատմական կամ մշակութային հուշարձանների պահպանման միջոցները ձեռնարկվեն նախքան որևէ գործողություններ սկսելը:

Օրենքի համաձայն հուշարձանի պահպանության բացառիկ միջոցը ենթակա է Հայաստանի Հանրապետության կառավարության կամ տարածքային կառավարման հաստատմանը, կախված այն հանգամանքից, թե արդյո՞ք այդ հուշարձանը հանրապետական կամ տեղական նշանակություն ունի: Նման հաստատումը տրվում է նախարարության առաջարկությամբ:

1.9. Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին օրենք

Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին օրենքը սահմանում է պահպանվող տարածքների ստեղծման ընթացակարգերը և ղեկավարում դրանց կառավարումը:

Սույն օրենքի նպատակը բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, պատմամշակութային, էսթետիկ, առողջապահական, կլիմայի կարգավորման, վերականգնողական և հոգևոր արժեքների բնութագրի ներկայացնող Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների էկոհամակարգերի, բնապահպանական համալիրների և առանձին օբյեկտների կայուն զարգացման, վերականգնման, պահպանման և օգտագործման համար պետական քաղաքականության իրավական սկզբունքների մասին է: Օրենքի նպատակներն են՝ պահպանել բնական էկոհամակարգերի հավասարակշռությունը, պահպանել ազգային նշանակության բնական հուշարձանները, պահպանել երկրի կենսաբազմազանությունը, վերահսկել բնական միջավայրի օգտագործումը, նպաստել բնապահպանական կրթության և հանրային իրազեկության բարձրացմանը և ապահովել բնական ռեսուրսների կորստի ճանաչումը իրավական դաշտում:

Օրենքի համաձայն, պահպանվող տարածքները, որոնք իրենց կարգավիճակով դասակարգվում են որպես (ա) կենսոլորտային արգելոց / արգելավայր, բ) պետական արգելոց, (գ) ազգային պարկ, (դ) բնական պարկ, ե) պետական արգելավայր, և զ) բնության հուշարձանը պետք է սահմանվի կառավարության

որոշմամբ, և որ դրանց կառավարման ընդհանուր պատասխանատվությունը գտնվում է ՇՄՆ- ի կողմից: Օրենքը վերաբերում է նաև հատուկ պահպանվող տարածքների պետական ցանկի մշակմանը, պահպանվող տարածքների նույնականացմանը և զննումների մեխանիզմներին և պահպանվող տարածքի տարբեր տեսակների կարգավիճակի և կառավարման ռեժիմներին:

Այնուամենայնիվ, սույն օրենքը չի անդրադառնում մի շարք կարևոր հարցերի, ինչպիսիք են կենսաբազմազանության սոցիալ-տնտեսական օգուտները, հողի սեփականաշնորհումը և մասնավոր հատվածի դերը և իրավունքները և, հետևաբար, վերանայման կարիք ունի: Օրենքը սահմանում է, որ հատուկ պահպանվող տարածքների տարածքում արգելվեն հետևյալ գործողությունները.

- ա) որս և ձկնորսություն
- բ) բույսերի, ծաղիկների կամ սերմերի հավաքում
- գ) անտառահատման կամ փայտամթերման գործընթացը
- դ) արածում
- ե) նոր բուսական և կենդանական աշխարհի տեսակների ներդնում կամ հարմարեցում
- զ) հանքավայրի կամ հանքարդյունահանման օգտագործում

1.10. Բուսական աշխարհի մասին օրենք

Բուսական աշխարհը պայմանավորում է մարդու և կենդանիների գոյությունը երկրի վրա: Դա ազգային հարստություն է և երկրի սոցիալական, տնտեսական կայուն զարգացման ու բարեկեցության կարևորագույն հիմքերից մեկն է: Սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում:

Բուսական աշխարհի մասին օրենքը նպատակ ունի ապահովել բույսերի կայուն պահպանումը, դրանց գենետիկական բազմազանությունը և բնական միջավայրը, բնական բույսերի պոպուլյացիայի կայուն օգտագործման համար գիտական գնահատականների մակարդակների մշակումը, բուսական աշխարհի կայուն պահպանումը ապահովելու և պաշտպանելու բույսերի պահպանման և կառավարում գործում ներգրավված անձանց իրավունքները:

Օրենքի 24-րդ հոդվածի համաձայն՝ կարմիր գրքում գրանցված բույսերի օգտագործումը թույլատրվում է բացառիկ դեպքերում՝ գիտահետազոտական, մշակութային մեջ ներդրման և բնական պայմաններում դրանց վերարտադրության նպատակներով՝ բուսական աշխարհի պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում լիազորված պետական մարմնի թույլտվությամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Տեղափոխումը պետք է համապատասխանի Կառավարության «Բուսական աշխարհի օբյեկտների պահպանման և դրանց բնական պայմաններում վերարտադրության համար օգտագործման կանոնակարգի հաստատման մասին» 2014 թ. Հուլիսի 31-ի թիվ 781N որոշման համաձայն: Օրենքով թույլատրվում է Կարմիր գրքում գրանցված բույսի տեղափոխումը, միայն այն դեպքում, եթե դա արվում է դրա պահպանման և գիտական հետազոտության նպատակով:

1.11. Կենդանական աշխարհի մասին օրենք

Հայաստանի Հանրապետությունում կենդանական աշխարհը ազգային հարստություն է: Այն բնության ամբողջականությունն ապահովող առավել կարևոր տարրերից է, դրա էկոլոգիական հավասարակշռության և ներդաշնակ զարգացման երաշխիքը: Հայաստանի Հանրապետությունում կենդանական աշխարհը պետության բացառիկ սեփականությունն է:

Սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը:

Կենդանական աշխարհի մասին օրենքը նպատակ ունի՝ ապահովել կենդանիների պահպանությունը, դրանց գենետիկական բազմազանությունը, պահպանել կենդանիների պոպուլյացիայի ամբողջականությունը, պահպանել կենդանիներին խուսափելու անհարմարություններից, պաշտպանել միգրացիոն երթուղիները և կարգավորել կենդանիների տեսակների օգտագործումը:

Օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ սահմանափակ վայրերում վայրի կենդանիների արտահանումը, ներմուծումը, պահպանումը և այլ բնական վայր տեղափոխելը իրականացվում է լիազորված մարմնի համաձայնությամբ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կենդանաբանական հավաքածուների կամ առանձին նմուշների արտահանումը և ներմուծումը իրականացվում է լիազորված մարմնի համաձայնությամբ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.1. Ձեռնարկողի անվանումը և գտնվելու վայրը

Ձեռնարկող. «ԱՐԱՄ-ՇԻՆ2007» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)

Տնօրեն՝ Կարեն Մելքոնյան

Իրավաբանական հասցեն՝ Իրավաբանական հասցե՝ Յ. ԼԵՓՍԻՈՒՄԻ Փ. / Շ / 14 / 35 ՔԱՆԱՔԵՌ-ՁԵՅԹՈՒՆ, 0035 ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ,

ՇՄԱԳ հաշվետվությունը կազմեց՝ ԱՁ Շ.Խաչատրյանը, հասցե՝ Նորաշեն թաղ. 27 զ. 71 բն., Հեռ. 095300097

2.2. Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը

Նախատեսվող գործունեության անվանումն է՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Ջիլի կոնգլոմերատների հանքավայրից օգտակար հանածոյի արդյունահանում:

«ԱՐԱՄ-ՇԻՆ2007» ՍՊ Ընկերությունը նպատակ ունի արդյունահանված կոնգլոմերեկչիաններից արտադրել երեսպատման սալիկներ և դեկորատիվ իրեր:

2.3. Նախատեսվող գործունեության բնութագիրը

Ջիլի կոնգլոմերեկչիանների հանքավայրը գտնվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Ջիլ բնակավայրի վարչական շրջանում, բնակավայրից 2.6կմ հյուսիս-արևելք (**նկ.1**): Հարում է մերձսևանյան օֆիոլիտային գոտուն:

Տարածքի կոորդինատներն են՝ Գրինվիչից

Հյուսիսային լայնության 40° 28' 47''

Արևելյան լայնության 45° 29' 00''

Հանքավայրի անմիջական հարևանությամբ անցնում են Սևան-Վարդենիս երկաթուղին և վերջինիս զուգահեռ անցնող բարեկարգ ավտոխճուղին: Մոտակա՝ Ջիլ երկաթուղային կայարանը հանքավայրից գտնվում է 10կմ հարավ-արևմուտք:

Հանքավայրը տարածաշրջանային կենտրոն ք. Ճամբարակից գտնվում է 25կմ հեռավորության վրա և սկսած Ջիլ գյուղից կապված է դրա հետ ասֆալտապատ ճանապարհով: Ջիլ երկաթգծի կայարանի հեռավորությունը Երևան կայարանից 137կմ է, իսկ Երևան-Ջիլ ավտոխճուղու երկարությունը 122կմ է:

Հանքավայրի տարածքը ներկայացնում է տիպիկ լեռնային երկիր, հանդիսանում է Անդրկովկասի երկու խոշոր գետերի՝ Քուռի և Արաքսի միջին հոսանքների ջրբաժան: Ռելիեֆի հիմնական լեռնագրական կառուցվածքը Սևանի լեռնաշղթան է, որի առանձին գագաթները ունեն երեք հազար մետրը գերազանցող բացարձակ բարձրություններ (լ. Մեծասար-3318մ, Արիաջ-3062.5մ և այլն [2]):

Շրջանում բացակայում են խոշոր գետերը: Սևանի լեռնաշղթայի հարավային լանջերով դեպի Սևանա լիճ են հոսում Աղբերք, Շորժա, Արտանիշ, Ջիլ, Փամբակ և Արտունջ գետերը, որոնք հիմնականում սնվում են հալոցքային և աղբյուրների ջրերով:



Նկ.1: ՀՀ Գեղարքունիքի մարզի ակնարկային քարտեզ (ըստ www.FindArmenia.com):

Գետերը վերին հոսանքներում ունեն մեծ անկում՝ մինչև հարյուրավոր մետրեր 1կմ տարածքում, ստորին հոսանքներում անկումը խիստով փոքրանում է: Ըստ քիմիական կազմի այդ գետակների ջրերը պիտանի են խմելու և տեխնիկական նպատակների համար: Գետակները մեծամասամբ գարնան վերջին ցամաքում են: Հանքավայրի շրջանի բոլոր ապարները բնութագրվում են թույլ ջրառատությամբ: Շրջանի կլիման ցամաքային է, լեռնաստափաստանային: Բարձր լեռնային մասը բնութագրվում է ձնածածկոցի երկարատևությամբ, կարճ ամառով և ուժեղ քամիներով: Ձմռանը ջերմաստիճանը հասնում է -38°C , իսկ ամեանը $+34^{\circ}\text{C}$: Տեղումների քանակը տատնվում է տարեկան 600-ից մինչև 800մմ: Ձմռանը Ջիլի մերձափնյա մասում համեմատաբար մեղմ է, հունվարին միջին ջերմաստիճանը կազմում է $4-6^{\circ}\text{C}$, ամռանը՝ $12-16^{\circ}\text{C}$ -ի սահմաններում:

Տարեկան գոլորշիացումը տատանվում է 650-850մմ սահմաններում, համարյա հավասար է տարեկան տեղումների քանակին:

Բուսական աշխարհը բնութագրվում է տափաստանային խոտային ծածկույթով: 2000-2300մ բարձրությունից սկսվում է սուբալպիական, իսկ 2900-ից բարձրը՝ ալպիական բուսականությունը: Ճամբարակի տարածաշրջանը, որտեղ գտնվում է Ջիլի կոմպլեքսի հանքավայրը, հանդիսանում է տիպիկ գյուղատնտեսական:

Մերձափնյա գյուղերի բնակչությունը հիմնականում զբաղվում է դաշտավարությամբ և անասնապահությամբ:

Ջիլի հանքավայրից հարավ անցնում է Սևան-Վարդենիս-Սոտք բարձր լարման էլեկտրահաղորդման գիծը:

2.4. Օգտակար հանածոյի նյութական կազմը

Հանքավայրի կոնգլոբրեկչիաների որակական և տեխնոլոգիական բնութագիրը տրվում է դրանց ֆիզիկամեխանիկական փորձարկումների, քիմիական անալիզների, պետրոգրաֆիական ուսումնասիրությունների, միաձուլության հետազոտությունների, բլոկների փորձնական սղոցման, ինչպես նաև ռադիոմետրական չափումների արդյունքների հիման վրա [3]:

2.4.1. Ֆիզիկամեխանիկական հատկությունները

Հանքավայրի կոնգլոբրեկչիաների ֆիզիկամեխանիկական հատկություններն ուսումնասիրվել են 40 նմուշների (33 հանուկային և 7 մենաքարային) փորձարկումների արդյունքներով, որոնց ամփոփ արդյունքները բերված են աղ. 1-ում:

Աղյուսակ 1

Կոնգլոբրեկչիաների ֆիզիկամեխանիկական հատկությունները [3]

Հ/հ	Ցուցանիշները	Չափման միավորը	Ցուցանիշների մեծության սահմանները		
			Նվազագույն	Առավելագույն	Միջինը
1.	Ծավալային կշիռը	կգ/մ ³	2598	2684	2641
2.	Ծակոտկենությունը	%	2,41	3,94	3,17
3.	Ջրակլանումը	%	0,09	1,26	0,67
4.	Տեսակարար զանգված	տ/մ ³	2,44	2,78	2,61
5.	Փափկեցման գործակիցը	-	0,80	2,83	1,81
6.	Ցրտակայունության գործակից	-	0,76	0,92	0,84
7.	Ամրության սահմանը սեղմելիս	Կգ/սմ ²			
8.	-Չոր վիճակում	-	457	868	637
9.	-Ջրհագեցած վիճակում	-	345	791	568
10.	-25 ցիկլ սառեցում-հալեցումից հետո	-	281	729	505

Բերված տվյալները վկայում են, որ հանքավայրի կոնգլոբրեկչիաները բնութագրվում են գործնականում կայուն որակական ցուցանիշներով և համապատասխանում են «Блоки из горных пород для производство облицовочных, архитектурно-строительных, мемориальных и других изделий» 9479-98 ԳՈՍՏ-ի «Շինարարական քարերից, բազալտներից և տրավերտիններից» 100-95 ՀՍՏ-ի տեխնիկական պահանջներին ու կարող են օգտագործվել բլոկների և երեսապատման սալիկների արդյունահանման համար:

2.4.2. Քիմիական կազմը

Օգտակար հանածոյի քիմիական կազմը (սիլիկատային անալիզ) որոշված է 19 աղյուսային և հանուկային նմուշներում:

Օգտակար հանածոյի քիմիական կազմից երևում է, որ դրանք միատարր չեն, մասնավորապես SiO_2 -ի պարունակությունը տատանվում է 15,8-55,1%, իսկ CaO ՝ 8,25-43,3%, հետևաբար ապարում բեկորային ապարները, եթե ներկայացվախ են ավազաքարային կրաքարերով, ապա SiO_2 -ի քանակությունը բարձր է, իսկ CaO -ինը ցածր: Եթե ներկայացված է կրաքարային ավազաքարերով՝ հակառակը:

Al_2O_3 քանակությունը տատանվում է 1,3-16,07%, որը պատճառ է կավային նյութի անհամաչափ պարունակությամբ:

2.4.3. Օգտակար հանածոյի միաձուլությունը

Օգտակար հանածոյի միաձուլությունը այն կարևոր ցուցանիշներից է, որը հատկապես կարևոր նշանակություն ունի երեսապատման քարերի հանքավայրերի շահագործման ժամանակ, կանխորոշում է դրանց յուրացման արդյունավետությունը և պայմանավորված է ապարների ճեղքավորվածությամբ:

Կոնգլոբրեկչիաների ճեղքավորվածության ուսումնասիրությունը ցույց է տվել, որ անջատման ճեղքերը ունեն հիմնականում մերձհորիզոնական և ուղղաձիգին մոտ տեղադրում, որոնց խտությունը պայմանավորված են արտաքին և ներքին գործոններից:

Օգտակար հանածոյի զանգվածից պիտանի բլոկների ելքի համար գործնական նշանակություն ունի ճեղքերի ուսումնասիրությունը, որին դարձվել է հատուկ ուշադրություն միայն փորձնական բացահայտում, որտեղ կատարվել է 54 ճեղքերի տեղադրման տարրերի չափումներ, որը հնարավորություն է տվել ըստ ուղղվածության առանձնացնել ճեղքերի համակարգեր:

I համակարգ – մերձհորիզոնական (0-10° անկմամբ) անջատման ճեղքեր 30-65° անկման ազիմուտով:

II համակարգ – թեք (30-70° անկմամբ) անջատման ճեղքեր 30-50° անկման ազիմուտով:

Մերձհորիզոնական և թեք ճեղքերի հատումները հաճախ առաջացնում են պրիզմաձև բլոկներ, որոնք իրենց տեսակով մոտ են շեղանկյուն կամ ուղղանկյուն ձևերի բնական քառանկյուն պրիզմաների:

Ճեղքերը հիմնականում լցված են թույլ ցեմենտացված կավավազային կարբոնատային նյութերով, որոնց հզորությունը չի գերզանցում 2-3սմ:

Բնական մերկացումներում օգտակար հանածոն այն աստիճանի է հողմահարված (մինչև 2-4մ խորությամբ), որ հնարավոր չէ որոշել ճեղքավորվածության աստիճանը:

Փորձնական բացահայտի անցման միջոցով որոշվել է պիտանի բլոկների ելքը օգտակար հանածոյից, որն իրականացվել է 126մ³ ծավալով: Այդ աշխատանքների ընթացքում մենաքարերի պոկումը լեռնազանգվածից կատարվել է բնական ճեղքերով, բուլդոզերի օգնությամբ, առանց պայթեցման աշխատանքների:

Մենաքարերի շտկամշակումը՝ բլոկներ ստանալու համար, կատարվել է հորատասեպային եղանակով և կացնի օգնությամբ: Ստացված բլոկները ունեցել են ուղղանկյուն զուգահեռանիստի ձև և չափերով համապատասխանել են ԳՈՍՏ 9479-

98-ի III-IV խմբի պահանջներին: Փորձնական հանույթի ամփոփ արդյունքները բերված են աղ. 2-ում:

Աղյուսակ 2

Փորձնական հանույթի ամփոփ արդյունքները

Բլոկների խումբը ըստ ԳՈՍՍ 9879-98	Արդյունահանված ծավալը, մ ³	Բլոկների քանակը, հատ	Բլոկների ընդհանուր ծավալը, մ ³	Բլոկների ելքը, %
IV		83	17,1	
III		9	8,29	
Ընդամենը	126	92	25,40	20,2

Բլոկների երեսապատման սալիկների ելքը որոշելու նպատակով կատարվել է 1,32մ³ ծավալով բլոկների փորձնական սղոցում: Երեսապատման սալիկների միջին ելքը կազմել է 18,6մ²/մ³: Փորձնական սղոցման ամփոփ արդյունքները բերված են աղ. 3-ում:

Աղյուսակ 3

Փորձնական սղոցման ամփոփ արդյունքները

Բլոկների խումբը ըստ ԳՈՍՍ 9879-98	Բլոկների քանակը, հատ	Բլոկների ընդհանուր ծավալը, մ ³	Սալիկների ընդհանուր մակերեսը, մ ²	Սալիկների ելքը, %
IV	5	1,32	24,5	18,6

2.4.4. Բլոկների արդյունահանման թափոնների որակական բնութագրերը

Բլոկների արդյունահանման թափոնների պիտանելիությունը պարզելու նպատակով 10 շարքային հանուկային և 3 մենաքարային նմուշների ֆիզիկա-մեխանիկական հետազոտությունների մնացորդներից կազմված մեկ համախառն նմուշի ջարդման արգասիքներից տարանջատման խիճը ենթարկվել է փորձարկման, որի ամփոփ արդյունքները բերվում են աղ. 4-ում:

Աղյուսակ 4

Տարանջատման խճի փորձնական արդյունքները

Հ/հ	Ցուցանիշների անվանումը	Չափման միավորը	Ցուցանիշների արժեքը
1.	Կշիռը (10-20մմ)	Կգ/մ ³	1560
2.	Ջրակլանելիությունը	%	4,31
3.	Թույլ հատիկների պարունակությունը	%	4,3
4.	Թերթ. և ասեղն. հատիկների պարունակությունը	%	29,8
5.	Փոշենման հատիկների պարունակությունը	%	0,8
6.	Զանգվածի կորուստը ջարդման ժամանակ	%	15,5
7.	Խճի մակնիշը ըստ ջարդելիության	%	M600
8.	Խճի մակնիշը ըստ ցրտադիմացկունությամբ	%	F 25

Բերված տվյալները վկայում են, որ տեղամասի կոնգլոբրեկչիաներից (թարմ և ճեղքավորված) ստացված խիճը բավարարում է ԳՈՍՏ 22856-89 «Шебень и песок декоративных из природного камня» տեխնիկական պահանջներին:

2.4.5. Կոնգլոբրեկչիաների ճառագայթահիգիենիկ բնութագիրը

Ռադիոմետրիական չափումների տվյալներով, հանքավայրի օգտակար հանածոյի ճառագայթահիգիենիկ ակտիվությունը տատանվում է 10-12մկն/ժամի սահմաններում: Բնական ռադիոնուկլիդների (ԲՌՆ) գումարային տեսակարար ակտիվությունը (Ac) կազմում է 0,104Բկ/գ, ինչը համապատասխանում է HPB-96 նորմատիվային փաստաթղթերի պահանջներին:

Այսպիսով, հետախուզված հանքավայրի օգտակար հանածոն ճառագայթահիգիենիկ տեսակետից կարող են օգտագործել շինարարական աշխատանքներում առանց սահմանափակման:

2.4.6. Կոնգլոբրեկչիաների գեղազարդային (դեկորատիվ) հատկությունները

Ջիլի հանքավայրի կոնգլոբրեկչիաները իրենց որակական ցուցանիշներով, պետրոգրաֆիական, քիմիական կազմերով և գունավորմամբ բավականին համասեռ են, աչքի են ընկնում իրենց գունային մեղմ երանգներով և գեղազարդային հատկություններով, չեն զիջում Դիլիջանի նմանատիպ հանքավայրի կոնգլոմերատներին:

Օգտակար հանածոն հեշտությամբ ենթարկվում են մշակման՝ հղկում, ողորկում, աչքի են ընկնում իրենց բնական մոխրավուն, բաց-մոխրագույն, վարդագույն երանգավորմամբ, թեթև են և պիտանի շինությունների ներքին հարդարման համար:

2.5. Հանքավայրի ջրաերկրաբանական պայմանները

Ջրաերկրաբանական առումով Ջիլի հանքային դաշտի շրջանը, Սևանա լճից ընդամենը 5-6կմ հեռավորությունում գտնվելու պայմաններում, սակավաջուր է: Հանքային դաշտի ջրաերկրաբանական պայմանները որոշվում են դրա երկրաբանական կառուցվածքի, տեղանքի ռելիեֆի առանձնահատկություններով, արմատական ապարների մասնակի մերկացվածությամբ և մթոլորտային տեղումների քանակությամբ:

Ըստ ջրաթափանցելիության բնույթի ու աստիճանի, ինչպես նաև ջրառատության հանքավայրը կազմող ապարները բաժանվում են երեք լիթոլոգիական համալիրների [3]՝

Ա. դելյուվիալ-պրոլյուվիալ խիստ ջրատար նստվածքներ, որոնցում ջրառատության ցուցանիշ՝ ստորերկրյա հոսքի մոդուլը, ինչպես ցույց են տալիս դիտարկումների մշակումները, կազմում է մոտ 2,96լ/վրկ/կմ²:

Բ. Ծալքավորված և խիստ ճեղքավորված ջրաթափանց կրաքարեր, որոնք կլանում են համարյա ամբողջ մթնոլորտային տեղումները: Դրանցով ներծծանցվող մթնոլորտային ջրերը հասնելով կավամերգելային ջրամերժ շերտին՝ մակերես են

դուրս գալիս փոքր աղբյուրների ձևով: Ստորերկրյա հոսքի ցուցանիշը այս համալիրի համար չի գերազանցում 2,45լ/վրկ/կմ² ցուցանիշը:

Հանքավայրի հյուսիս-արելքում (հանքային մարմնի կախված կողմում) տարածված են խիստ ճեղքավոր դայկանման մարմինները, որոնք խիստ ջրաթափանց են և կլանում են ամբողջ մթնոլորտային տեղումները: Այս համալիրի ապարները թույլ ջրառատ են՝ ստորերկրյա հոսքի ցուցիչը կազմում է 0,38-0,42լ/վրկ/կմ²: Հանքավայրից հյուսիս-արևմտյան մասում հայտնի են աղբյուրներ, որոնք ունեն 0,1-0,4լ/վրկ ծախս:

Հանքավայրի տարածքի հայտնի ջրերը բաժանվում են երկու խմբի՝ մակերևութային և ստորգետնյա: Առաջինները ներկայացված են գետակների առվակների ձևով, որոնց թվին են պատկանում Ջիլ գետը և հանքավայրով անցնող նրա վտակ Չինարագետը, որոնք հիմնականում օգտագործվում են ոռոգման նպատակով, հարկ եղած դեպքու կարող են օգտագործվել որպես տեխնիկական ջուր: Դրանք հիմնականում ունեն սեզոնային բնույթ: Մայիս ամսից սկսած, որոշ տարիներին նաև ապրիլից Չինարագետում ջրային հոսքեր առկա չեն:

Ստորգետնյա ջրերը փոքր աղբյուրների ձևով դուրս են գալիս դելյուվիալ նստվածքների, կրաքարերի և ինտրուզիվ ապարների կոնտակտային շրջանում, որոնց ջրերը պիտանի են խմելու համար:

Հանքավայրի տարածքում անցած հետախուզական հորերում և հորատանցքերում գետնաջրեր չեն հանդիպել: Դրանք հայտնվում են տեղանքի չոր հեղեղատների լանջերին, ռելիեֆի ստորադիր մասերում և հեղեղատների ողողահուններում:

Գետնային ջրերի առկայությունը հոսանքի ցածրադիր փորվածքներում չի խանգարի հանքավայրի շահագործմանը, քանզի այն շահագործվելու է բաց եղանակով 2440 հորիզոնից վեր, իսկ գետնաջրերի մակարդակը շատ ավելի ցածր է (1900մ): Նման ռելիեֆի և բացահաքով շահագործման պայմաններում ոչ գետնային և ոչ ստորերկրյա ջրերի առկայությունը հանքավայրի տեղամասերի շահագործմանը խոչընդոտել չեն կարող, քանի որ դրանք ենթարկվում են բնական ջրհեռացման:

Ջրերի հոսքը դեպի ապագա բացահանք հնարավոր է միայն մթնոլորտային տեղումների հետևանքով, որոնց տարեկան միջին քնակը, (հիդրոօթերևութաբանության և մոնիտորինգի կոնտրոն) ՊՈԱԿ- ի բազմամյա դիտարկումների տվյալների համաձայն կազմում է 500-600 մմ: Հաշվի առնելով հանքավայրի երկրաբանական կառուցվածքի առանձնահատկությունները, գոլորշիացման բարձր ցուցանիշը և ապարների բարձր ջրաթափանցելիությունը, կարելի է ասել, որ բացահանք ներթափանցող ջրերը կենթարկվեն բնական դրենաժի:

Ելնելով վերը նշվածից կարելի է համարել, որ հանքավայրի ջրերկրաբանական պայմանները բարենպաստ են և բացասական աղդեցություն չեն ունենա դրա շահագործման աշխատանքների վրա:

2.6. Պաշարների հաշվարկը

Ջիլի կոնգլոբրեկչիաների հանքավայրի պաշարների հաշվարկման ամփոփ արդյունքները բերված են աղյուսակ 5-ում:

Բլոկի համարը և պաշարների կարգը	Օգտակար հանածոյի պաշարները, հազ. մ ³	Մակաբացման ապարների ծավալը, հազ. մ ³	Մակաբացման միջին գործակիցը, մ ³ /մ ³
Բլոկ 1-Շ ₁	1907,7	3704,1	1,94

Այսպիսով կատարված վերահաշվարկի արդյունքում Ջիլի կոնգլոբրեկչիաների հանքավայրի օգտակար հանածոյի պաշարները և մակաբացման ապարների ծավալները պակասել են համապատասխանաբար 364,3 հազ. մ³ (16%) և 361,5 հազ. մ³ (8,9%) հաշվետվությունում բերվածի նկատմամբ:

Օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական փորձարկումներից պարզվել է դրանց համապատասխանությունը 9479-98 ԳՈՍՏ-ի տեխնիկական պահանջներին և պիատանելիությունը ներքին երեսապատման նպատակով բլոկների արդյունահանման համար:

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ջիլի կոնգլոբրեկչիաների հանքավայրի պաշարները հաստատվել են ՀՀ ԷԲՊ նախարարության ՕՀՊԳ 2012թ մայիսի 18-ի թիվ 326 որոշմամբ:

«ԱՐԱՄ-ՇԻՆ2007» ՍՊ ընկերությունը ցանկանում է ստանալ ընդամենը 312431մ³ ծավալով օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն: Տարեկան նախատեսված է արդյունահանել 17000 մ³ օգտակար հանածո:

3. ԼԵՌՆԱՅԻՆ ԵՎ ԼԵՌՆԱՍԵՆՈՒՄԱՆԻԿԱԿԱՆ ՄԱՍԵՐ

3.1. Հանքավայրի մշակման եղանակի ընտրումը

ՀՀ Գեղարքունիքի մարզի Ջիլի կոնգլոբրեկցիաների հանքավայրի բացահանքի նախագիծը կատարված է «ԱՐԱՄ-ՇԻՆ 2007» ՍՊԸ-ի տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

Ելնելով հանքավայրի տեղադիրքից, հանքամարմնի տեղադրման պարամետրերից տեղամասի մշակումը նախատեսվում է բաց լեռնային աշխատանքներով: Արդյունահանման աշխատանքները նախատեսվում է կատարել մեխանիկական եղանակով նախնական փխրեցմամբ (հիդրավլիկ մուրճով):

Հանքավայրի մշակման համար ընտրվում է ընդլայնական, միակողմանի խորացմամբ մշակման համակարգ, մակաբացման ապարների արտաքին լցակույտերի տեղափոխումով:

Բացահանքը վերջնական դիրքում ունի հետևյալ պարամետրերը՝

- Ամենամեծ երկարությունը – 245մ
- Ամենամեծ լայնությունը – 175մ
- Օգտակար հանածոյի ամենամեծ հզորությունը – 52.0մ
- Օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարների քանակը՝ - 312431մ³
- Արդյունահանվող պաշարների քանակը՝ – 312431հազ.մ³
- Մակաբացման ապարների ծավալը – 935348մ³:
- Բացահանքի օտարման մակերեսը – 4. 2հա

Լեռնային զանգվածի տեղաբաշխումն ըստ բացահանքի հանքաստիճանների բերված է աղյուսակ 6-ում: Մակաբացման միջին գործակիցը կազմում է $935348 / 312431 = 3.0\text{մ}^3/\text{մ}^3$:

Աղյուսակ 6

*Լեռնային զանգվածի տեղաբաշխումն ըստ
բացահանքի հանքաստիճանների*

Հորիզոններ՝	Բացահանքի վերջնական ծավալները, մ ³		
	Լեռնային զանգված, մ ³	Օգտակար հանածո, մ ³	Դատարկ ապարներ, մ ³
2440	19530	16609	2921
2450	48781	31521	17260
2460	98191	54022	44169
2470	151296	87462	63,834
2480	142320	72929	69391
2490	135453	42759	92694
2500	126621	7129	119492
2510	116878	-	116878
2520	110298	-	110298
2530	93648	-	93648

2540	75106	-	75106
2550	59728	-	59728
2560	39448	-	39448
2570	20369	-	20369
2580	7371	-	7371
2590	2741	-	2741
Ընդամենը	1247779	312431	935348

3.2. Նախագծային կորուստներ

Բացահանքի շահագործման ընթացքում օգտակար հանածոյի կորուստներ տեղի չեն ունենում:

3.3. Բացահանքի արտադրողականությունը և աշխատանքային ռեժիմը

Բացահանքի աշխատանքային ռեժիմն ընտրվել է ելնելով տեխնիկական առաջադրանքից: Բացահանքի աշխատանքային ռեժիմն ընդունվում է՝

- աշխատանքային օրերի թիվը տարվա ընթացքում՝ 260 օր
- շաբաթվա աշխատանքային օրերի թիվը՝ 5 օր
- հերթափոխերի թիվը մեկ օրում՝ 1 հերթ.
- հերթափոխի սևողությունը՝ 8 ժամ

Բացահանքի տարեկան և օրական արտադրողականությունները բերված են աղ. 7-ում:

Աղյուսակ 7

Բացահանքի տարեկան և օրական արտադրողականությունները

N	Արտադրանքի անունները	Չափման միավորը	Բացահանքի հաշվարկային	
			Տարեկան	Օրական
1.	Լեռնային զանգված	մ ³	68000	261.6
2.	Դատարկ ապարներ	մ ³	51000	196.2
3.	Օգտակար հանածոյի հանույթ՝	մ ³	17000	65.4
4.	Բլոկներ	մ ³	3400	13.1
5.	Հանույթից առաջացած թափոններ /խճի հումք/	մ ³	13600	52.3

3.4. Բացահանքի ծառայման ժամկետը

Բացահանքի ծառայման ժամկետը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$T = t_1 + t_2, \text{ տարի,}$$

որտեղ՝ t_1 - բացահանքի 100% արտադրական հզորության հասնելու

ժամանակաշրջանն է, $t_1 = 0.65$ տարի,

t_2 - Բացահանքի շահագործման տևողությունն է 100 % արտադրական հզորության հասնելու պահից:

$$t_2 = \frac{Q_{\text{գ}} - Q_2}{Q_{\text{ն}}} = \frac{312431 - 505}{17000} = 18,35$$

որտեղ՝ $Q_{\text{գ}}$ - կորզվող պաշարներն են, $Q_{\text{գ}} = 312431 \text{ մ}^3$

Q_2 – արտահանված պաշարներն են Բացահաքը 100% արտադրական հզորության հասնելու պահին, $Q_2 = 505 \text{ մ}^3$

$Q_{\text{ն}}$ - Բացահանքի տարեկան արտադրողականությունն է ըստ օգտակար զանգվածի, $Q_{\text{ն}} = 17000 \text{ մ}^3$

$$T = 0.65 + 18.35 = 19 \text{ տարի:}$$

3.5. Հանքավայրի բացումը

Հանքավայրի հորիզոնների բացման համար իրականացվում է նրա հյուսիս-արևմտյան մասից, գոյություն ունեցող գրունտային ճանապարհի 2465մ բարձրության նիշից, դեպի Բացահանքի 2580մ բարձրության նիշ ունեցող հորիզոն մոտեցող գրունտային ճանապարհի անցում:

2580-2480մ նիշ ունեցող հորիզոնների բացումը կատարվում է մոտեցող գրունտային ճանապարհից հորիզոնական կտրող կիսախրամների անցումով:

2470-2440մ նիշ ունեցող հորիզոնների բացումը կատարվում է նույն մոտեցող գրունտային ճանապարհից մեկ ընդհանուր թեք խրամի անցումով: Վերջինիցս կատարվում է հորիզոնական կտրող խրամների անցում:

Մոտեցող գրունտային ճանապարհի և արտաքին թեք խրամի հիմքի լայնությունն ընդունվում է 7մ: Կտրող խրամի և կիսախրամների հիմքի լայնությունն ընդունվում է 15-20մ: Մոտեցող գրունտային ճանապարհի և արտաքին թեք խրամի առավելագույն հաղթահարվող թեքությունը ընդունվում է 100%: Մոտեցող գրունտային ճանապարհի սերպանտիններում հաղթահարվող թեքությունը ընդունվում է 0.0%:

2590մ նիշ ունեցող հորիզոնի ապարների մշակումը կատարվում է բուլդոզերի միջոցով: Ապարները հրվում են դեպի 2580մ նիշ ունեցող հորիզոն, որտեղ բարձվում են ավտոինքնաթափերը և տեղափոխվում արտաքին լցակայստ:

3.6. Մշակման համակարգը

Հանքավայրի մշակման համար ընտրված է ընդլայնական, խորացող, մեկ կողանի մշակման համակարգ, որի տարրերն են՝

Հանքաստիճանի բարձրությունը – 10 մ;

Անվտանգության բերմայի լայնությունը – 3.5 մ;

Աշխատանքային հանքաստիճանի թեքման անկյունը՝

– օգտակար հանածոյի համար - 90°;

– դատարկ ապարների համար – 65°;

Բացահանքի կողի թեքման անկյունը – 50°:

Աշխատանքային հրապարակի ամենափոքր լայնությունը 15-20 մ:

3.7. Լեռնակապիտալ աշխատանքներ

Լեռնակապիտալ աշխատանքների փուլում արդյունահանվող լեռնային զանգվածի ծավալների նվազեցման նպատակով աշխատանքներն իրականացվելու են 2500մ նիշ ունեցող օգտակար հանածոյի հանքաստիճանում և 2510մ նիշ ունեցող դատարկ ապարների հանքաստիճանում: Լեռնակապիտալ աշխատանքները ներառում են ներքոհիշյալ ծավալները:

- Հանքավայրի հյուսիս-արևմտյան մասից, գոյություն ունեցող գրունտային ճանապարհի 2465մ բարձրության նիշից, դեպի բացահանքի 2510մ և 2500մ բարձրության նիշ ունեցող հորիզոններ մոտեցող գրունտային ճանապարհի անցում, B=7մ, L=950մ, - V= 12000մ³:

- 2510մ նիշ ունեցող հորիզոնից դատարկ ապարների հեռացում – 2394մ³

- 2500մ նիշ ունեցող հորիզոնից ապարների հեռացում – 2410մ³, այդ թվում՝

- օգտակար հանածո – 505մ³

- դատարկ ապարների հեռացում – 1905մ³

- Արտադրական հրապարակի կառուցում – 550մ³

Լեռնակապիտալ աշխատանքները կատարվում են էքսկավատոր /հիդրավլիկ մուրճ/ - ավտոինքնաթափ – բուլդոզեր լեռնատրանսպորտային համալիրով:

3.8. Մակաբացման աշխատանքներ

Բացահանքում մակաբացման ապարները բացակայում են: Առկա են օգտակար հանածոն պարփակող դատարկ ապարները 935348մ³ ընդհանուր ծավալով:

Դատարկ ապարները տեղափոխվելու են բացահանքից հյուսիս-արևմուտք 500մ հեռավորությամբ ձևավորվող արտաքին լցակույտ:

Լեռնակապիտալ աշխատանքները կատարվում են էքսկավատոր /հիդրավլիկ մուրճ/ - ավտոինքնաթափ – բուլդոզեր լեռնատրանսպորտային համալիրով:

3.9. Լեռնային զանգվածի նախապատրաստումը հանույթի

Օգտակար հանածոյի և դատարկ ապարների ֆիզիկամեխանիկական հատկությունները կանխորոշում է նրանց նախնական փխրեցումը հանույթաբարձման աշխատանքներից առաջ:

Ապարների նախնական փխրեցումը նախատեսվում է կատարել մեխանիկական եղանակով՝ CAT- 420EIT էքսկավատորի հենքի վրա տեղադրված հիդրավլիկ մուրճով:

Հիդրավլիկ մուրճով էքսկավատորի հերթափոխային միջին արտադրողականությունը ըստ տեղեկատու տվյալների կազմում է 160մ³/հերթ կամ 41.6 հազ.մ³/տարի:

Հիդրավլիկ մուրճի անհրաժեշտ քանակը կլինի.

68000

$N_h = \frac{68000}{41600} = 1.63$ ընդունվում է 2 հատ

41600

որտեղ 68000մ^3 – տարեկան արդյունահանվող լեռնային զանգվածի քանակն է:
 Ընդունվում է 2 հատ էքսկավատոր կահավորված հիդրավլիկ մուրձով:

Անհրաժեշտության դեպքում միաքարի անջատումը զանգվածից կարող է իրականացվել հորատապայթեցման եղանակով՝ համաձայնեցնելով ոլորտում իրավասու լիազոր մարմնի հետ:

3.10. Հանութաբարձման աշխատանքները

3.10.1. Բարձման աշխատանքներ

Բլոկների բարձումը ավտոինքնաթափի մեջ, ինչպես նաև նրանց բեռնաթափումը մշակման արտադրամասում կատարվում է 7.5տ բեռնաբարձությամբ KC-2571 (ЗИЛ-431412) մակնիշի ամբարձիչի միջոցով: Ամբարձիչի հերթափոխային արտադրողականությունը ըստ ՆՏՆ-ի միջին հաշվով կազմում է՝ բլոկների բարձման ժամանակ $54.6\text{մ}^3/\text{հերթ}$:

$$13.1$$

$$N_{\text{ալ}} = \frac{\text{-----}}{54.6} = 0.24 \text{ ընդունվում է 1 հատ}$$

Արտադրական թափոնների և դատարկ ապարների բարձումը տրանսպորտային միջոցների մեջ նախատեսվում է կատարել 1.2մ^3 շերեփի տարողությամբ, CAT-322L մակնիշի էքսկավատորի միջոցով:

Էքսկավատորի տարեկան արտադրողականությունը հանութաբարձման աշխատանքների ժամանակ որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$Q_{\text{տ}} = Q_{\text{հ}} \times N_{\text{տ}} \times K_{\text{տ}} \times K_{\text{ե}} \text{ մ}^3;$$

Որտեղ՝ $Q_{\text{հ}}$ - էքսկավատորի հերթափոխային արտադրողականությունն է՝

$$T \times K_{\text{ժ}} \times V \times n_2 \times K_{\text{բ}}$$

$$Q_{\text{հ}} = \frac{\text{-----}}{(t_{\text{բ}} + t_{\text{տ}})}, \text{ մ}^3/\text{հերթ}$$

Որտեղ՝ $T=8$ ժամ -հերթափոխի տևողությունն է;

$K_{\text{ժ}}=0.8$ –ժամանակի օգտագործման գործակիցն է հերթափոխի ընթացքում;

V - էքսկավատորի շերեփի մեջ տեղավորվող ապարների ծավալն է զանգվածում, $V = 1.2\text{մ}^3$,

n_2 - շերեփների քանակն է մեկ ավտոինքնաթափի մեջ; $n_2 = 5$

$K_{\text{բ}}$ - արտադրողականությունը իջեցնող գործակից է, որը հաշվի է առնում հանքախորշի թրջումը հերթափոխի ընթացքում $K_{\text{բ}}=0.9$;

$t_{\text{բ}}$ - ավտոինքնաթափի բարձման տևողությունն է; $t_{\text{բ}} = 7.5$ րոպե,

$t_{\text{տ}}$ - ավտոինքնաթափը բարձման տակ տեղադրելու տևողությունն է $t_{\text{տ}}=0.7$ րոպե,

$N_{\text{տ}}$ - աշխատանքային օրերի քանակը

$K_{\text{տ}}$ – գործակից է, որը հաշվի է առնում էքսկավատորի անհրաժեշտ պլանաարտադրական վերանորոգումները, $K_{\text{տ}}=0.85$;

$K_{\text{ե}}$ – գործակից է, որը հաշվի է առնում տարվա ընթացքում հանքավայրի շրջանում անբարենպաստ եղանակի պայմանները $K_{\text{ե}}=0.9$

$$Q_{\text{հ}} = \frac{8 \times 60 \times 0.8 \times 1.2 \times 5 \times 0.9}{(7.5 + 0.7)} = 252.9\text{մ}^3$$

$$Q_{in} = 252.9 \times 260 \times 0.85 \times 0.9 = 50302 \text{մ}^3:$$

Բացահանքի հանույթարձման աշխատանքներն անխափան կատարելու համար նախատեսվում է հակառակ բահով սարքավորված 1 հատ, KAT-322L մակնիշի էքսկավատոր, լիովին բավարար է քարհանքի արտադրական թափոնների՝ 52.3մ³/հերթ), դատարկ ապարների՝ 196.2մ³/հերթ բարձման աշխատանքների համար:

Անհրաժեշտ բուլդոզերների քանակը բլոկները դեպի արտադրական հրապարակ քարշելու համար՝

$$13.1: 90 = 0.15$$

90մ³-ը բուլդոզերի հերթափոխային արտադրողականությունն է ըստ ՆՏՆ-ի:

Ընդունում ենք 1 բուլդոզեր բլոկները դեպի արտադրական հրապարակ քարշելու համար:

3.10.2. Բլոկների կոպիտ մշակումը

Բլոկների կոպիտ մշակումը նրանց 9479-69-ին համապատասխան ձև տալու (շտկամշակելու) համար նախատեսվում է կատարել մեխանիկական եղանակով OM-7 մակնիշի հարվածապոկիչ մուրճերի միջոցով: 1մ³ բլոկի համար միջին հաշվով պահանջվում է 3մ² մակերես:

Բանվորների անհրաժեշտ քանակը բլոկների շտկամշակման համար կլինի՝

$$13.1 \times 3$$

$$n_2 = \frac{\text{-----}}{10.7} = 3,67 = 4 \text{ քանվոր}$$

որտեղ, 13.1մ³-ը քարհանքի հերթափոխային արտադրողականությունն է ըստ բլոկների շահագործման:

10.7- 1 քանվորի հերթափոխային արտադրողականությունն է ըստ մշակման մակերեսի:

3.10.3. Սեղմած օդի մատակարարումը

Բացահանքում սեղմած օդի սպառիչներն են OM-7 հարվածապոկիչ մուրճերը: Սեղմած օդի անհրաժեշտ քանակը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$Q = K_1 N_1 n_1$$

որտեղ. K_1 - հարվածապոկիչ մուրճերի աշխատանքի մեջ գտնվելու միաժամանակության գործակիցն է- 0.7:

N_1 - աշխատանքի մեջ գտնվող հարվածապոկիչ մուրճերի քանակներն են - 4:

$n_1 n_2$ - սեղմած օդի ծախսն է հարվածապոկիչ մուրճի կողմից միավոր ժամանակի ընթացքում համապատասխանաբար - 1.5 մ³/րոպե :

$$Q = 0.7 \times 4 \times 1.5 = 4.2 \text{մ}^3/\text{րոպե}$$

Կոմպրեսորային կայանի հաշվարկային արտադրողականությունը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$Q_{կ} = Q \times K_{կ} \times K_{հ}$$

որտեղ $K_{կ}$ -ն սեղմած օդի կորուստների գործակիցն է խողովակաշարում $K_{կ} = 1.1$:

$K_{հ}$ - սեղմած օդի կորուստների գործակիցն է կախված տեղանքի բարձրությունից $K_{հ} = 1.14$

$$Q_{\text{կ}} = 4.2 \times 1.1 \times 1.14 = 5.3 \text{մ}^3/\text{րոպե}:$$

Քարհանքի սեղմած օդի սպառիչներին սեղմած օդով ապահովելու համար նախատեսվում է ПР-10 10մ³/րոպե արտադրողականությամբ 1 հատ շարժական կոմպրեսորային կայանք:

3.11. Բուլդոզերային աշխատանքները

Բուլդոզերային աշխատանքները բացահանքի շահագործման ժամանակ կայանում է դատարկ ապարների և արտադրական թափոնների տեղափոխումը և կուտակումը բացահանքում ու լցակույտում, ինչպես նաև բլոկները դեպի արտադրական հրապարակ քաշելը: Դրանց տարեկան ծավալը կազմում են 64600մ³, 51000մ³ և 3400մ³:

KOMATSU D61PX1 մակնիշի բուլդոզեր հերթափոխային արտադրողականությունը ըստ ՆՏԼ-ի կազմում է արտադրական թափոնների և դատարկ ապարների տեղափոխման և կուտակման ժամանակ-1000 մ³/հերթ, լցակույտի ձևավորման ժամանակ 600մ³, իսկ բլոկները դեպի արտադրական հրապարակ քարշելու համար 90մ³:

Բուլդոզերի անհրաժեշտ քանակը նրա տարեկան 260 աշխատանքային հերթափոխի դեպքում կլինի.

$$N_p = \frac{64600}{260 \times 1000} + \frac{51000}{260 \times 600} + \frac{3400}{260 \times 90} = 072$$

ընդունվում է 1 հատ:

3.12. Տրանսպորտային աշխատանքներ

Բլոկները և արտադրական թափոնները (լսճի հումք) կտեղափոխվեն մինչև 3.0կմ միջին հեռավորության վրա գտնվող արդյունաբերական հրապարակ: Դատարկ ապարները կտեղափոխվեն մինչև 0.5կմ միջին հեռավորության վրա գտնվող արտաքին լցակույտ: Տեղափոխումը կատարվում է 12.0տ բեռնատարողությամբ KAMA3-5511 մակնիշի ավտոինքնաթափերի միջոցով: Ավտոինքնաթափի հերթափոխային արտադրողականությունը որոշվում է՝

Օգտակար հանածոն տեղափոխելիս՝

$$V \times K_i \times T_h \times K_k \quad 6.6 \times 0.85 \times 480 \times 0.9$$

$$Q = \frac{\text{-----}}{T_k} = \frac{\text{-----}}{34.7} = 69.8 \text{մ}^3/\text{հերթ}$$

որտեղ՝ V - ինքնաթափի թափքի տարողությունը՝ 6.6 մ³

K_i – ինքնաթափի լցման գործակիցն է ըստ լեռնային զանգվածի, K_i = 0.9

T_h – հերթափոխի տևողությունը, 480 րոպե

K_k – 1 հերթափոխի ընթացքում աշխատաժամանակի օգտագործման գործակիցն է- 0.85:

T_k - 1 ուղերթի տևողությունը՝ րոպե

$$T_k = \frac{2 L 60}{V_k} + t_p + t_n + t_f = \frac{2 \times 3.0 \times 60}{14} + 5 + 1 + 3 = 34.7 \text{րոպե}$$

Որտեղ՝ L – տեղափոխման հեռավորությունն է;

- V_t – միջին երթային արագությունն է;
- t_p - ինքնաթափի բարձրման տևողությունն է;
- t_n - ինքնաթափի բեռնաթափման տևողությունն է;
- t_d – մանյուվրաների տևողությունն է:

Բանվորական ինքնաթափերի քանակը հերթափոխի ընթացքում որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$N_{p1} = \frac{Q_{h1} \times K_w \times K_{\phi}}{Q} = \frac{65.4 \times 1.1 \times 1.4}{69.8} = 1.44$$

K_w - բեռների տեղափոխման անհավասարաչափության գործակիցն է, $K_w = 1.1$:

$K_{\phi} = 1.4$ օգտակար հանածոյի փխրեցման գործակիցներ են

$Q_{h1} = 65.4$ – օգտակար հանածոյի արտադրողականությունն է հերթափոխում:

Դատարկ ապարների տեղափոխում

$$Q = \frac{V \times K_1 \times T_h \times K_i}{T_t} = \frac{6.6 \times 0.85 \times 480 \times 0.9}{13.3} = 182.2 \text{ մ}^3 / \text{հերթ}$$

որտեղ՝ V - ինքնաթափի թափքի տարողությունը՝ 6.6 մ^3

K_1 – ինքնաթափի լցման գործակիցն է ըստ լեռնային զանգվածի, $K_1 = 0.9$

T_h – հերթափոխի տևողությունը, 480 րոպե

K_i – 1 հերթափոխի ընթացքում աշխատաժամանակի օգտագործման գործակիցն է-0.85:

T_t – 1 ուղերթի տևողությունը՝ րոպե

$$T_t = \frac{2 L 60}{V_t} + t_p + t_n + t_d = \frac{2 \times 0.5 \times 60}{14} + 5 + 1 + 3 = 13.3 \text{ րոպե}$$

Որտեղ՝ L – տեղափոխման հեռավորությունն է;

V_t – միջին երթային արագությունն է;

t_p - ինքնաթափի բարձրման տևողությունն է;

t_n - ինքնաթափի բեռնաթափման տևողությունն է;

t_d – մանյուվրաների տևողությունն է:

$$N_{p2} = \frac{Q_{h2} \times K_w \times K_{\phi}}{Q} = \frac{196.2 \times 1.1 \times 1.2}{182.2} = 1.42$$

Q_{h2} – բացահանքի ըստ դատարկ ապարների հերթափոխային արտադրողականությունն է:

K_w - բեռների տեղափոխման անհավասարաչափության գործակիցն է, $K_w = 1.1$:

$K_{\phi} = 1.2$ դատարկ ապարների փխրեցման գործակիցներ են

Ավտոինքնաթափերի ցուցակային քանակը կլինի՝

$$N = \frac{N}{K_m} = \frac{1.44 + 1.42}{0.8} = 3.57, \text{ ընդունվում է 4 ավտոինքնաթափ}$$

որտեղ K_m ավտոպարկի տեխնիկական պատրաստականությունն է $K_m = 0.8$

Տարեկան ավտոինքնաթափերի անհրաժեշտ քանակի հաշվարկի ցուցանիշները բերված են աղ.8-ում:

Տարեկան ավտոինքնաթափերի անհրաժեշտ քանակի հաշվարկը

N	Ցուցանիշների անվանումը	Չափ. միավորը	Օգտակար հանածո	Դատարկ ապարներ
1.	2.	3.	4.	5.
1.	Տեղափոխման ծավալը հերթափոխում	մ ³	65.4	196.2
2.	Փխրեցման գործակիցը		1.4	1.2
3.	Տեղափոխման միջին հեռավորությունը	կմ	3.0	0.5
4.	Շարժման միջին արագությունը	կմ/ժամ	14	14
5.	Ավտոինքնաթափի բարձրագույն տևողությունը	րոպե	5.0	5.0
6.	Ավտոինքնաթափի բեռնաթափման տևողությունը	րոպե	1	1
7.	Մանյովրների տևողությունը	րոպե	3.0	3.0
9.	Մեկ երթի տևողությունը	րոպե	34.7	13.3
10.	Մեկ ավտոինքնաթափի հնարավոր երթերի քանակը հերթափոխի ընթացքում	երթ	14	36
11.	Մեկ ավտոինքնաթափի հերթափոխային արտադրողականությունը	մ ³ /հերթ	69.8	182.2

3.13. Լցակույտառաջացում

Ելնելով նախագծում ընդունված մշակման եղանակից, ինչպես նաև լեռնաերկրաբանական պայմաններից ընտրված է դատարկ ապարների արտաքին լցակույտառաջացում: Ընդհանուր ծավալը կազմում է 935348մ³:

Դատարկ ապարները տեղադրվում են բացահանքից հյուսիս-արևմուտք 500մ հեռավորության վրա ձևավորվող արտաքին լցակույտ: Արտաքին լցակույտի զբաղեցրած տարածքը կազմում է 4.8հա, վերին հարթակի մակերեսը – 3,0հա, վերին հարթակի նիշը – 2480մ: Լցակույտի առավելագույն բարձրությունը – 75մ, շեփ թեքման անկյունը – 33°:

3.14. Ջրամատակարարումը և ջրհեռացումը

Բացահանքի մատակարարումը տեխնիկական ջրով կատարվում է օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների ժամանակ փոշեղադարեցման, աշխատանքային հրապարակների, ճանապարհների և լցակույտերի ջրման նպատակով: Ջուրը բերվում է ZIL KO-713-01 (ZIL-431412) մակնիշի ջրցան-լվացող մեքենայով: Խմելու ջրի մատակարարումը կատարվում է IIIH-ՃԼԾ-1.4 ջրի ցիստեռնով:

Հանքավայրի հիդրոերկրաբանական պայմանների համաձայն, գետնաջրերը բացակայում են: Հետևաբար բացահանքում ջրհեռացնող կառուցվածքներ չեն

նախատեսվում: Անմիջապես բացահանքի տարածքը թափվող անձրևային ջրերը հեռացվում են ինքնահոս կերպով և ներծծվում ճաքերի միջով:

Աշխատողներին խմելու և կենցաղային նպատակներով ջրածախսը հաշվարկվում է հետևյալ արտահայտությունով՝

$$W = (n \times N + n_1 \times N_1) \times T$$

որտեղ՝ n - ԻՏ և գրասենյակային աշխատողների թիվն է - 3,

N - ԻՏՍՍ և գրասենյակային աշխատողների ջրածախսի նորման՝ - 0.016մ³,

n_1 - բանվորների թիվն է - 15,

N_1 - ջրածախսի նորման՝ - 0.025մ³/մարդ օր

T - աշխատանքային օրերի թիվն է - 260օր:

Այսպիսով՝ $W = (3 \times 0.016 + 15 \times 0.025) \times 260 = 109.98$ մ³/տարի, միջին օրեկան 0.423մ³: Կենցաղային կեղտաջրերը՝ $0.423 \times 0.85 = 0.36$ մ³ օրեկան լցվում են բետոնային լցարան, որտեղից պարբերաբար տեղափոխվում են սահմանված կարգով:

Համաձայն նորմատիվների ջրի ծախսը 1մ² տարածքում փոշին նստեցնելու համար կազմում է 0.5լիտր/մ²: Փոշենստեցման մակերեսները կազմում են բացահանքում աշխատանքային հրապարակը 1400մ², լցակայանների վրա 800մ², արտադրական հրապարակը 250մ² և ավտոճանապարհները 8400մ², ընդամենը 10850մ²: Ընդունելով ջրի տեսակարար ծախսը 0.5լ/մ², կստանանք.

$$10850 \times 0.5 = 5425 \text{լիտր}$$

Նախատեսվում է 1 ջրող ավտոմեքենա 5տ ջրի տարողությամբ, որը այդ ջուրը ցնցուղում է 2 երթով:

3.15. Բացահանքի մշակման ժամանակացուցային պլանը

Լեռնային աշխատանքների զարգացումը բացահանքում նախատեսվում է կատարել բացահանքի մշակման ժամանակացուցային պլանին համապատասխան, որի համաձայն բացահանքի հանքաստիճանները մշակվում են 10մ բարձրությամբ հանքաստիճաններով: Բացահանքի տարեկան արտադրողականությունն է ըստ արդյունահանման՝ 17000մ³:

3.16. Նախագծի այլընտրանքները

Ջրի կոնգլոբրեկչիանների հանքավայրից արդյունահանվող օգտակար հանածոն նախատեսված է օգտագործել շենք-շինությունների ներքին հարդարման նպատակով: Հանքավայրից օգտակար հանածոյի արդյունահանումով պրոցեսը չի ավարտվում: Արդյունահանումից հետո անհրաժեշտ է հումքից արտադրել սալիկներ և տարբեր տեսակի դեկորատիվ իրեր: Արդյունահանված հանքաքարի բլոկները մշակվելու են ընկերության քարամշակման արտադրամասում, որից հետո պատրաստի արտադրանքը տրամադրվելու է գնորդին: Նախագծի համաձայն հանքավայրում աշխատելու է 18 իսկ քարամշակման արտադրամասում՝ 10 մարդ: Հանքավայրի շահագործումը 28 մարդու ապահովելու է աշխատանքով իսկ արդյունահանված օգտակար հանածոյի համար ընկերությունը վճարելու է բնօգտագործման վճար: Ասվածից պարզ է դառնում, որ հանքավայրի շահագործումը կյոլլացնի ազդակիր համայնքների սոցիալական լարվածությունը աշխատողների

հիմնական մասը ընտրվելու են Ջիլ բնակավայրից, ինչը նշանակում է, որ մարդիկ հնարավորություն կունենան աշխատանքի դիմաց ստանալ ՀՀ-ում սահմանված միջին աշխատավարձից բարձր աշխատավարձ:

Ֆինանսական աջակցություններ կցուցաբերվեն ազդակիր համայնքների դպրոցներին, մանկապարտեզներին և իրականացվելիք ծրագրերին:

Նախագծի այլընտրանքներից մեկը գերոյական տարբերակն է, որը ենթադրում է նախագծից հրաժարվել: Այս դեպքում՝ հանքավայրը չի շահագործվելու, ճանապարհներ չեն կառուցվելու և չեն բարեկարգվելու, աշխատատեղեր չեն ստեղծվելու, համայնքին ֆինանսական աջակցություն չի ցուցաբերվելու: Տեխնիկական միջոցների և բնակչության տեղաշարժի ակտիվություն տեղի չի ունենալու, խանութներում առևտրի և դրամաշրջանառության աճ չի լինելու:

Հանքավայրի տարածքի հողերը գյուղատնտեսական կամ արտադրական որևէ այլ գործունեության նպատակներով օգտագործելու պիտանիություն չունեն: Տուրիզ կազմակերպելու որևէ նախադրյալ չկա:

Վերոնշյալից պարզ է դառնում, որ նագագծի գերոյական տարբերակի ընտրությունը նպատակահարմար չէ:

Տեղամասի երկրաբանական կառուցվածքն ու հանքային մարմնի ձևաբանությունը թույլ են տալիս հանքավայրի շահագործումն իրականացնել բացառապես բաց եղանակով:

Այս տեսանկյունից հանքավայրի շահագործման այլընտրանքներ չկան:

Որպես այլընտրանք դիտարկենք արդյունահանվող հանքաքարի քանակը: Մի դեպքում կարելի է դիտարկել հանքաքարի ավելի շատ արդյունահանում մյուս դեպքում՝ նախատեսվածից ավելի պակաս:

Եթե հանքավայրից արդյունահանվող հանքաքարի քանակը մեծացվի քան նախատեսված է, ապա՝ կրճատվելու է հանքավայրի ծառայման ժամկետը, նույնքանով մեծանալու են շրջակա միջավայրի վրա ճնշումները:

Մյուս տարբերակը՝ արդյունահանվող հանքաքարի ծավալի փոքրացումն է: Այս դեպքում հանքավայրի ծառայման ժամկետը մեծանալու է, շրջակա միջավայրի վրա ազդեցության չափը նվազելու է բայց՝ դառնալու է ավելի երկարատև: Մյուս կողմից՝ գործունեությունը տնտեսապես չի կարող շահավետ լինել, քանի որ մակաբացման գործակիցը բավականին մեծ է ($3.0\text{մ}^3/\text{մ}^3$) և մեծ ծախսեր է պահանջում:

Այսպիսով՝ այն տարբերակը, որը ընտրվել է ամենաարդյունավետն է: Նախագիծը չունենալով էական ազդեցություն շրջակա միջավայրի վրա՝ նկատելի դրական ազդեցություն կունենա ազդակիր համայնքի սոցիալական կյանքում:


4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՌԱՋԱՑՈՂ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ջրի կանգորբեկչիանների հանքավայրում իրականացվելիք արդյունահանման աշխատանքների ժամանակ առաջանալու են վեց տիպի թափոններ:

4.1. Դատարկ ապարներ

Օգտակար հանածոյի արդյունահանման ընթացքում գոյանալու է 935348մ³ ծավալի դատարկ ապար, որոնք ներկայացված են փուխր և հողմահարված կոնգլոբրեկչիաններով:

Նախագծով նախատեսված է, որ դրանք տեղափոխվելու են բացահանքից հյուսիս-արևմուտք 500մ հեռավորությամբ ձևավորվող արտաքին լցակույտ (նկ. 2):



Նկ.2: Ջրի կոնգլոբրեկչիանների հանքավայրի և բաղաբացման ապարների տեղադիրքի սխեման: (Մ1:25000):

Արտաքին լցակույտի հատակը զբաղեցնելու է 4.8 հա մակերես իսկ վերին հարթակի մակերեսը կազմելու է 3,0 հա: Վերին հարթակի հիպսոմետրի նիշը՝ 2480մ: Լցակույտի առավելագույն բարձրությունը – 75մ է, շեյի թեքման անկյունը՝ 33°:

Ըստ միներալային և ապարաբանա-քարաբանական տվյալների դատարկ ապարները իներտ են, ոչ վտանգավոր, չեն ենթարկվում ֆիզիկական, քիմիական կամ կենսաբանական վերափոխումների և հետևաբար շրջակա միջավայրի և մարդկանց առաջնության վրա որևէ բացասական ազդեցություն չեն ունենալու:

ՀՀ բնապահպանության նախարարի 26.10.2006 թ. N 342-Ն հրամանով հաստատված՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գոյացող արտադրության և սպառման թափոնների ցանկի համաձայն այս թափոնը համապատասխանում է «փխրուն մակաբացման ապարներ» տեսակին (դասիչ՝ **3400012001995**):

ՀՀ Կառավարության 15 հունիսի 2017թ. N 689 - Ն որոշման տվյալ թափոնի ազդեցությունը շրջակա միջավայրի վրա կլինի «գործնականորեն անվտանգ», այն կդասվի վտանգավորության V դասին:

4.2. Բանեցված կապարե կուտակիչներ և խոտան

Բեռնատար և հատուկ ավտոտրանսպորտային միջոցների շահագործման արդյունքում բացահանքի ավտոպարկում տարեկան գոյանալու է մոտ 0,2 տ շահագործման ժամկետն անց բանեցված կապարե կուտակիչներ և խոտան:

Այս տեսակի թափոնները պատկանում են վտանգավորության 3-րդ դասին, ծածկագիր՝ 92110102 13 01 3:

Թափոնի կազմը՝ պլաստմասե (պոլիպրոպիլեն) իրան՝ 10%, կապարե թիթեղներ՝ 70%, էլեկտրոլիտ (ծծմբական թթվի 25% լուծույթ)՝ 20%:

Պլաստմասե իրան՝ ֆիզիոլոգիական տեսակետից գրեթե անվնաս է: Իրանի քայքայումից կամ այրումից կարող են առաջանալ ֆտալատներ: Ընկնելով մարդու օրգանիզմ, ֆտալատների միայն աննշան մասն է ներծծվում մարսողական համակարգով: Ֆտալատները կարող են նաև չնչին չափով գրգռել մաշկը և լորձաթաղանթը:

Կապարե թիթեղներ՝ կապարը կուտակվում է օրգանիզմում, առաջացնելով խրոնիկ թունավորում, ազդում է նյարդային համակարգի, տարբեր օրգանների և արյան վրա:

Էլեկտրոլիտն առաջացնում է մաշկի այրվածքներ, շնչուղիների և լորձաթաղանթների գրգռվածություն: Ծծմբական թթվի գոլորշիները շնչելիս առաջանում է հազ, երբեմն՝ լարինգիտ, տրախեիտ, բրոնխիտ և այլ հիվանդություններ:

Բանեցված կապարե կուտակիչները հրդեհապայթյունավտանգ չեն, սակայն կուտակիչներում պարունակվող էլեկտրոլիտը օժտված է կոռոզիոն ակտիվությամբ և թափվելու դեպքում կարող է առաջացնել մետաղական և ոչ մետաղական իրերի քայքայում:

Հանքավայրի տարածքում այս տեսակի թափոնի պահում չի նախատեսվում, քանի որ ընկերության ավտոպարկի և տեխնիկական միջոցների ընթացիկ սպասարկումը կատարվելու է հարակից բնակավայրերի մասնագիտացված կազմակերպություններում:

Տարածքը, որտեղ հետազայում անհրաժեշտություն կառաջանա բանեցված կուտակիչների ժամանակավոր պահպանում, պետք է ունենա օդափոխության համակարգ: Բանեցված կուտակիչները պետք է դրվեն հատուկ տակդիրների վրա, տակդիրի եզրերը պետք է ունենան 5սմ-ից ոչ պակաս բարձրություն: Հատակը պետք է պատրաստված լինի քիմիական ազդեցությունների նկատմամբ կայուն նյութից, որպիսով էլեկտրոլիտի ներծծումը հողի մեջ բացառվի:

Տարածքը՝ որտեղ ժամանակավոր պետք է պահվեն կուտակիչների թափոնները, պետք է հեռու լինի վարչակենցաղային շինություններից:

4.3. Իրենց սպառողական հատկությունները կորցրած դիզելային յուղերի մնացորդներ

Թափոններն առաջանում են մեխանիզմների շահագործման արդյունքում:

Ժամանակի ընթացքում դրանք կորցնում են իրենց հատկություններն ու անհրաժեշտություն է առաջանում դրանք փոխել նորերով:

Ծածկագիրը՝ 54100203 02 03 3:

Կազմը՝ յուղ՝ 95%, մեխանիկական խառնուկներ՝ 1.5%, ջուր՝ 3.5%:

Թունավոր է, էկոթունավոր, դյուրավառ, կոռոզիայի չի ենթարկվում, ռեակցիոնունակ չէ: Թափոնները պատկանում են վտանգավորության 3-րդ դասին:

Տարեկան առաջանալու է մոտ 1,5 տ թափոն: Հանքավայրի տարածքում այս թափոնի պահում չի նախատեսվում, քանի որ ընկերության ավտոպարկի և տեխնիկական միջոցների ընթացիկ սպասարկումը կատարվելու է Ճամբարակ համայնքի մասնագիտացված կազմակերպություններում:

4.4. Բանեցված շարժիչների յուղերի թափոններ

Տարվա ընթացքում կառաջանա շուրջ 2տ բանեցված շարժիչների յուղ:

Թափոնները պատկանում են վտանգավորության 3-րդ դասին, կոդ՝ 54100201 02 03 3 «Բանեցված շարժիչների յուղերի թափոններ»: Բանեցված յուղերը հրդեհավտանգ են, ռեակցիոնունակություն և կոռոզիոն ակտիվություն չունեն:

Թափոնների կազմը՝ յուղ՝ 94,0 %; մեխանիկական խառնուրդներ՝ 1,8%; ջուր՝ 4.2%:

Հանքավայրի տարածքում այս տեսակի թափոնի պահում չի նախատեսվում, քանի որ ընկերության ավտոպարկի և տեխնիկական միջոցների ընթացիկ սպասարկումը կատարվում է Ճամբարակ համայնքի մասնագիտացված կազմակերպություններում:

Եթե անհրաժեշտություն առաջանա բանեցված յուղերի տեղում հավաքելու և պահելու ապա անհրաժեշտ է հետևել պահպանման կանոններին:

Բանեցված յուղերը հավաքվում են հերմետիկ փակվող մետաղյա տակառներում և պահվում հատուկ առանձնացված տարածքում: Տարածքը պետք է ունենա օդափոխության համակարգ, ծածկ և անջրաթափանց ու անյուղաթափանց նյութերից պատրաստված հատակ՝ օժտված դրենաժային համակարգով: Տարաները պետք է դրված լինեն մետաղական տակդիրների վրա: Տակդիրի ծավալը պետք է լինի ոչ պակաս, քան ընդհանուր ծավալի 5%-ը: Անհրաժեշտ է հետևել, որպեսզի

տակառներում մնա բավականին ազատ տարածք՝ յուրի հնարավոր ընդարձակման համար: Պետք է խուսափել հողերի վրա յուրերի թափումից: Աշխատած յուրերը օգտագործվում են հիդրավիլիկ համակարգերում և վորպես վառելանյութ:

4.5. Բանեցված օդանշիչ դողեր

Ծածկագիրը՝ 5750020013004:

Կազմը՝ ռետինային խառնուրդ, որը պարունակում է մոտ 20 բաղադրիչ (բութադիենային կաուչուկ, տեխնիկական ածխածին, ծծումբ և այլն)՝ 96%, մետաղյա (պողպատ) լարեր՝ 4%:

Էկոթունավոր է: Դողերի շփումը անձրևաջրերի և գրունտային ջրերի հետ առաջացնում է որոշ տոքսիկ օրգանական նյութեր (դիբութիլ ֆտալատ, ֆինատրապեն և այլն) լվացում, որոնք ընկնելով շրջակա միջավայր բացասական ազդեցություն են թողնում հողի, բուսական և կենդանական աշխարհի վրա:

Վնասազերծման համար թափոնը տրամադրել լիցենզավորված կազմակերպություններին կամ վերամշակել (վերանորոգել) դողածածկման եղանակով:

պայթյունավտանգ չէ, բայց կրակի առկայությամբ կարող է այրվել: Էռոզիոն ակտիվության տեսակետից ակտիվ չէ, ռեակցիոնունակ չէ: Հանքավայրի տարածքում այս թափոնի պահում չի նախատեսվում, քանի որ ընկերության ավտոպարկի և տեխնիկական միջոցների ընթացիկ սպասարկումը կատարվելու է հարակից բնակավայրերի մասնագիտացված կազմակերպություններում: Տարեկան գոյանում է շուրջ 1,2 տ բանեցված դողածածկ:

Թափոնների հավաքման, կուտակման կամ տեղափոխման համար անհրաժեշտ է համապատասխան արտահագուստ, պահվում է ամուր հատակ և ծածկ ունեցող տարածքում, որը բացառում է ջրի և կողմնակի առարկաների ներթափանցումը:

Թափոնները մինչև տեղափոխելը կուտակել ցանկապատված տարածքում, վտանգավորության այլ դաս ունեցող թափոններից առանձին: Արգելվում է դողերի այրում բաց օդում:

4.6. Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)

Այս տեսակին են պատկանում թուղթը, տեքստիլը, պլաստմասսան և այլն:

Կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբը (բացառությամբ խոշոր եզրաչափերի) պատկանում է վտանգավորության 4-րդ դասին՝ ծածկագիր՝ 91200400 01 00 4: Այս թափոնների ազդեցությունը շրջակա միջավայրի վրա ըստ ՀՀ Կառավարության 15 հունիսի 2017 թվականի N 689-Ն որոշման, գնահատվում է որպես «ցածր»:

Մեկ մարդու կենցաղային աղբ առաջացնելու նորման 0.3 մ³ (0.25տ/մ³) /տարի է: Հանքավայրում մշտապես աշխատելու են 18 մարդ: Հանքավայրում տարեկան առաջանալու է $18 \times 0.3 = 5,4 \text{ մ}^3 \times 0.25 \text{ տ} = 1,35 \text{ տ}$ կենցաղային աղբ:

Այս թափոնները կտեղափոխվեն Ջիլ բնակավայրի աղբահավաք կետեր, որտեղից համայնքի կոմունալ ծառայությունը այն կտեղափոխի աղբավայր:

Այս տեսակի թափոնները շրջակա միջավայրի և մարդկանց առաջնության վրա որևէ բացասական ազդեցություն չեն ունենալու:

Թափոնների վերաբերյալ ամփոփ բնութագրչները ներկայացված են աղ.9-ում:

Աղյուսակ 9

№	Անվանումը	Վտանգավորության դասը	Ծածկագիրը ըստ «Թափոնների ցանկի»	Քանակը, տ/տարի
1	օգտակար հանածոյի արդյունահանումից առաջացած դատարկ 【մակաբացման】 ապարներ	III	3400012001995	935348 ^{մ³}
2	Բանեցված կապարե կուտակիչներ և խոտան	II	9211010013012	0.2
3	Իրենց սպառողական հատկությունները կորցրած դիզելային յուղերի մնացորդներ	III	5410030302033	1.5
4	Բանեցված շարժիչների յուղերի Թափոններ	III	5410020102033	2
5	Բանեցված օդանշիչ դողեր	IV	5750020213004	1.2
6	Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)	IV	9120040001 00 4	1.35

Թափոնների տեղափոխման, կուտակման ու պահպանման ժամանակ շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա բացասական ազդեցություններ չեն կանխատեսվում:

Ելնելով վերոգրյալից հանքավայրում ձևավորվող թափոնի օբյեկտը չի համապատասխանում ՀՀ կառավարության 15 հունիսի 2017 թվականի N 689-Ն որոշման հավելված N1-ի ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների՝ ըստ վտանգավորության դասակարգման «Ա» կատեգորիային:

Թափոնների կառավարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների խոշորացված հաշվարկը տարվա կտրվածքով կազմում է 1051055դրամ, որից 60000 դրամը նախատեսված է միայն թափոնների օբյեկտի մշտադիտարկումների համար:

Ընկերությունը ցանկանում է իրականացնել թափոնների նյութական կազմի հետազոտություններ դրանց հետագա վերամշակման նպատակով:

Համաձայն ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքի 60,4 հոդվածի՝ ընկերությունը պարտավորվում է նախատեսված ժամկետի ավարտից առնվազն երեք ամիս առաջ /եթե չիրականացվի թափոնների վերամշակում/ ընդերքի օգտագործման հետ կապված՝ շրջակա միջավայրի ոլորտի պետական կառավարման լիազոր մարմին ներկայացնի ֆինանսական նոր երաշխիք կամ ֆինանսական երաշխիքի ժամկետի երկարաձգման մասին ֆինանսական երաշխիք տված իրավաբանական անձի պատշաճ վավերացրած փաստաթուղթ

5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

5.1. Հանքավայրի տեղադիրքը

Ջիլի կոնգլոբրեկչիանների հանքավայրը գտնվում է ՀՀ գեղարքունիքի մարզում Շողակաթ համայնքի Ջիլ բնակավայրի վարչական տարածքում գյուղից 2.6կմ հյուսիս-արևելք:

Հանքավայրի հարավ-արևմտյան մասով անցնում են Սևան-Վարդենիս երկաթուղին, որին զուգահեռ անցնում է բարեկարգ ավտոխճուղին: Հանքավայրի հեռավորությունը Սևան-Վարդենիս երկաթուղուց և ավտոխճուղուց կազմում է 5.5կմ: Մոտակա Ջիլ երկաթուղային կայարանը գտնվում է հանքավայրից 10կմ հարավ-արևմուտք:

Ջիլ երկաթգծի կայարանի հեռավորությունը Երևան կայարանից 137կմ է, իսկ Երևան-Ջիլ ավտոխճուղու երկարությունը 122կմ է:

Հայաստան-Արդբեջան պետական սահմանը գտնվում է հանքավայրից 0.7կմ արևելք, հյուսիս-արևելք:

Հանքավայրի հեռավորությունը Սևանա լճից կազմում է 5.6 կմ:

Հայցվող Ընդերքի տեղամասի կոորդինատները ARM WGS – 84 (ARMREF 02) համակարգով, որը ներառում է հայցվող օգտակար հանածոն և բացահանքը (4.2 հա)

1. Y=8540913 X=4482448
2. Y=8540959 X=4482352
3. Y=8541011 X=4482408
4. Y=8541107 X=4482412
5. Y=8541136 X=4482371
6. Y=8541152 X=4482337
7. Y=8541119 X=4482255
8. Y=8541082 X=4482233
9. Y=8540992 X=4482208
10. Y=8540947 X=4482218
11. Y=8540932 X=4482240
12. Y=8540868 X=4482343

Ռելիեֆի մակերևույթին հայցվող հաշվեկշռային պաշարների ծայրակետային կոորդինատները ARM WGS – 84 (ARMREF 02) համակարգով

- | | |
|-----------------------------------|------------------------------------|
| 1. Y=8540980.6641 X=4482209.9810, | 9. Y=8540914.6973 X=4482444.4578, |
| 2. Y=8540985.2425 X=4482214.9059 | 10. Y=8540882.9491 X=4482366.3268 |
| 3. Y=8540989.8854 X=4482227.6064, | 11. Y=8540884.0683 X=4482328.6175, |
| 4. Y=8540989.2282 X=4482248.5686 | 12. Y=8540905.9869 X=4482283.6091 |
| 5. Y=8540944.2146 X=4482312.1078, | 13. Y=8540933.7400 X=4482238.0004, |
| 6. Y=8540937.1701 X=4482341.5565 | 14. Y=8540947.4724 X=4482223.2399 |
| 7. Y=8540936.6675 X=4482370.7836, | 15. Y=8540971.5533 X=4482212.0124 |
| 8. Y=8540941.2174 X=4482389.1115 | |

5.2. Ռելիեֆ և երկրաձևաբանություն

Նախատեսվող գործունեությունը իրականացվելու է ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Ջիլ բնակավայրի վարչական շրջանում գյուղից հյուսիս-արևելք 2.6 կմ հեռավորության վրա:

Լեռնագրական տեսակետից տարածքը տեղադրված է Սևանի լեռնաշղթայի հարավ-արևմտյան լանջերին:


Սևանի լեռնաշղթան հանդիսանում է շրջանի ամենախոշոր լեռնագրական տարրը: Այն ձգվում է հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք՝ Սևանի լեռնանցքից (2114մ) մինչև Մոտքի լեռնանց, որտեղ, միանում է Մոավի լեռնաշղթային [3, 4]:

Սևանի լեռնաշղթան հանդիսանում է ջրբաժան Սևանա լճի և նրանից հյուսիս գտնվող Գետիկ գետի ավազանների միջև:

Շրջանը գտնվում է 1900-3400մ բացարձակ բարձրությունների վրա: Նշանավոր են Մեծ Հինալ (3373.4մ), Փառնես (3318մ), Ագեղուշ (2959.1մ) լեռնագագաթները:


Լեռնաշղթայի հարավ-արևմտյան լանջերը, որոնք իջնում են դեպի Սևանա լիճը, ունեն խիստ թեքություններ և կտրատված են բազմաթիվ ոչ խորը ձորերով ու ձորակներով, որոնք մեծ մասամբ չոր են և միայն զարնանային տեղատարափ անձրևների հետևանքով լցվում են ժամանակավոր գետակներով, որնք ամռանը ցամաքում են, իսկ ձմռանը՝ սառչում:

Ջիլի հանքավայրը տեղադրված է միջին բարձրության ուղիղ լանջերով և ալիքաձև գագաթների խորը կտրտված V-անման և ձորակներով ռելիեֆի շրջանում (**նկ.3**): Հանքավայրի տեղամասում լանջերն ունեն արևմտյան, հարավ-արևմտյան թեքություններ, թեքության անկյունը տատարվում է 20-23° սահմաններում (**նկ.4**):



- 1 Բարձր լեռնաշղթաներ (բարձր 2500մ) ուղիղ և կտրուկ լանջերով, ինտենսիվ և խիտ կտրտված ձորակներով և U-նման հովիտներով
- 2 Միջին բարձրության լեռնաշղթաներ (1500-2500մ) ուղիղ լանջերով և ալիքաձև գագաթների խորը կտրտված V-նման հովիտներով և ձորակներով
- 3 Միջին բարձրության լեռնաշղթաներ ուղիղ, կտրուկ լանջերով և աստիճանաձև գագաթներով խորը կտրտված հովիտների և ձորակների ձևերով

Նկ.3: Շրջանի ռելիեֆի սխեմատիկ պատկերը:



Նկ. 4: Շրջանի ռելիեֆի թեքությունների սխեման:

5.3. Շրջանի երկրաբանական կառուցվածքի համառոտ բնութագիրը

Սևանա լճի հյուսիս-արևելյան ափի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են մեզո-կայնոզոյան հասակի հրաբխածին, հրաբխածին-նստվածքային տարաբնույթ ապարները, որոնք ենթարկվել են տարբեր աստիճանի դիսլոկացման և պատռվել վերին էոգենի հասակի գերհիմքային և հիմքային կազմի ինտրուզիաների խոշոր զանգվածներով [1]:

Շրջանի ապարների շերտագրական կտրվածքը Հ.Ա. Չուբարյանի և Գ.Ա. Հարությունյանի (1975թ.) տվյալներով վարից-վեր ներկայացվում է հետևյալ հերթականությամբ՝

Վերին կավիճ

Տուրոնի հարկ: Շրջանի ամենահին ապարները ներկայացված են վերին կավճի հասակի տուրոնի հարկի հրաբխածին-նստվածքային ապարներով, որոնք ներկայացված են դիաբազներով, դիաբազային ու բազալտային պորֆիրիտներով, սպիլիտներով, որոնք հերթափոխվում են հասկաքարով (թաթա), ռադիոլարիտներով, կոնգլոմերատներով, ավազաքարերով, ու կրաքարերով: Նշված ապարները մերկանում են անտիկլինալային ծալքի մերկացած գմբեթային մասում:

Ստորին սենոնի ենթահարկ: Տուրոնի հաստվածքի վրա ներդաշնակ տեղադրված են ստորին սենոնի հասակի ավազաքարերը, որոնք հերթափոխվում են ավերոլիտներով և կավաքարերով, որոնք մերկանում են Շորժայից հարավ-արևելք և շարունակվում մինչև Թարթառ գետի վերին հոսանքները:

Վերին սենոնի ենթահարկ: Ստորին սենոնի հաստվածքի վրա ներդաշնակ տեղադրված են Սևանի հյուսիս-արևելյան երկարությամբ տարածված վերին սենոնի մերգելային կրաքարերի մոտ 1200մ. հզորությամբ շերտախումբը, որն հիմնականում

կազմված են կոպտա-նրբաշերտ կրաքարերից և մերգելների ու ավազաքարերի դարսաշերտերից:

Ստորին էոցեն

Մենոնի կրաքարերի վրա առանց անկյունային աններդաշնակության, սակայն տրանսգրեսիվ, տեղադրված են պալեոցենի ու էոցենի մոտ 270մ հզորությամբ նստվածքները, որոնք ներկայացված են կրաքարային ավազաքարերով՝ հիմքում հիմքային խառնաքարերով (կոնգլոմերատներով), որը հանդիսանում է ուսումնասիրվող օգտակար հանածոյի դարսաշերտը:

Ստորին-միջին էոցենի առաջացումները հիմնականում հրաբխածին են, վերին մասում կրաքարային, որոնք մերկանում են հանքավայրի հյուսիսային և հյուսիս-արևմտյան մասում:

Ներկայացված են տուֆաբեկչիաներով, տուֆիտներով, տուֆաավազաքարերով և կրաքարերով:

Չորրորդական առաջացումները ներկայացված են ստորին-միջին չորրորդականի արտաբերման կոների պոլիմիկտային ավազազլաքարային խառնուրդով: Վերջիններս, որպես գետային, հեղեղային, լանջային փուխր առաջացումներ, լայն տարածված են հանքային դաշտի հարավային մասում:

Ինտրուզիվ ապարներ: Շրջանի երկրաբանական կառուցվածքում լայն մասնակցություն ունեն հիմքային և գերհիմքային ապարների ինտրուզիաները, որոնք առանձին զանգվածների ձևով մերկանում են Սևանի լեռնաշղթայի հարավ-արևմտյան լանջի երկարությամբ: Դրանք պատռում են միջին էոցենի ապարներին և տրանսգրեսիվ ծածկվում օլիգոցենի հրաբխածին հաստվածքով[1, 2]:

Ջիլ-Սատանախաչի քվարցային դիորիտ-գաբրո պերիդոտիտային զանգված

Հիպերբազիտային զանգվածը տեղադրված է Սևանի օֆիոլիտային գոտու կենտրոնական մասում: Պլանում օվալաձև մարմին է և ձգված է ընդլայնական ուղղությամբ: Չանգվածի երկարությունը 7-8կմ է, լայնությունը արևմտյան եզրում 800-900մ է, արևելյան մասում զգալիորեն լայնանում է և առավելագույն լայնությունը հասնում է մոտ 3կմ-ի: Չանգվածի մերկացող մակերեսը մոտ 8-9 քառ.կմ է:

Չանգվածը զուրկ է գերհիմքային և հիմքային ապարների տարատեսակների տարածական կանոնավոր որևիցե օրինաչափ հաջորդականությունից:

Պետրոգրաֆիական կազմի փոփոխություններ չեն նկատվում Չանգվածի եզրային և կենտրոնական մասերի միջև: Առանձնանում են միայն թերթավոր սերպենտինիտները, որոնք հիմնականում տարածված են Չանգվածի հարավային հպումային գոտու երկայնքով (վերին սենոնի կրաքարերի հետ), իսկ թույլ և չափավոր սերպենտինացված հիպերբազիտները պահպանվել են առավելապես Չանգվածի կենտրոնական մասում:

Հիպերբազիտների հետ տարածական սերտ կապի մեջ են գաբրոիդային ապարները, որոնք կազմված են տրոկտոլիտներից, անորթոզիտներից, օլիվինային գաբրոներից:

Գաբրո-հիպերբազիտային Չանգվածի մեծ մասը բաղկացած է տարբեր աստիճանի սերպենտինացված դունիտներից և սերպենտինիտներից:

Հետմագմատիկ թթու ապարները ներկայացված են պլազիոգրանիտներով և կվարցային դիորիտներով, որոնք ունեն սյունաձև ու շերտաձև դայկայի ոչ մեծ մարմնի տեսք: Մերկանում են ուսումնասիրվող տարածքի հյուսիս-արևմտյան և հյուսիս-արևելյան տարածքում:

Դայկաձև ապարները տարածված են վերին կավճի ստորին և միջին էոցենի հրաբխածին-նստվածքային ապարներում, ունեն շերտանման մարմնի տեսք, ապարների շերտավորմանը ներդաշնակ և ներկայացված են դիաբազներով, դիաբազային ու անդեզիտային պորֆիրիտներով, գաբրո-դիաբազներով և պլազիոգրանիտ պորֆիրներով:

Սևանի օֆիոլիտային գոտում լայն տարածում ունեն քվարց-կարբոնատային ապարները – լիստվենիտները: Դրանք բավականին մեծ մակերես են զբաղեցնում դունիտ-պերիդոտիտային կազմի ապարների և վերին կավճի կրաքարերի տարածման շրջաններում:

Լիստվենիտները սովորաբար տեղադրված են գերհիմքային ապարների ու կրաքարերի հպումային գոտիներում, ինչպես նաև գերհիմքային ապարներում և կրաքարերում, երբեմն էլ նրանց սահմաններից դուրս՝ էոցենի հրաբխածին – նստվածքային առաջացումներում: Առաջացնում են 40-50մ լայնությամբ (երբեմն մինչև 150մ) և մինչև 1 կմ և ավելի երկարության ուղղաձիգ և աղեղանման ժայռային ելքեր, որոնք հեշտ նկատվում են իրենց բնորոշ գորշ դեղնավուն, սրճի, օխրայի գույներով և դունիտների ու պերիդոտիտների ֆոնի վրա ցցված ռելիեֆի ձևերով:

Գերհիմքային ապարների ու լիստվենիտների միջև հպումը կտրուկ է, իսկ կրաքարերի հետ նրանց եզրագծերը հստակ չեն նկատվում: Երբեմն լիստվենիտների մեջ և նրանց ու հիպերբազիտների կոնտակտներում հանդիպում են 0.5-5մ հզորության դիաբազային դայկաներ: Լիստվենիտները խիստ ճեղքավորված են, հատվում են քվարցային, կարբոնատային և քվարց-կարբոնատային երակիկներով 20-25սմ հզորությամբ: Ճեղքերը լցված են երկաթի հիդրօքսիդով:

Ըստ միներալային կազմի լիստվենիտների մեջ քվարցի պարունակությունը հասնում է 20-30%, իսկ կարբոնատինը՝ 70-80%:

Կ.Ն. Պաֆենհոլցը գտնում է, որ լիստվենիտները ծագումնաբանորեն կապված են երիտասարդ ուշօլիգոցեն-վաղմիոցենի հասակի գրանիտոիդային օջախների հիդրոթերմալ մետասոմատիկ պրոցեսների հետ՝ սերպենտինիտների կարբոնատացման շնորհիվ:

5.3.1. Տեկտոնիկա

Ջիլի հանքային դաշտի սահմաններում տարածված են միջին ալպյան երկրաբանակառուցվածքային հարկի՝ վերին կավճի կարբոնատային ֆորմացիայի և պալեոգենի հրաբխածին-նստվածքային առաջացումները [1, 2]:

Հանքադաշտի հիմնական տեկտոնական կառույցը Սևանի միջին ալպյան անտիկլինալ ծալքն է, որի թևերը կազմված են տուրոն-մասսոթիխտի կրաքարերից, իսկ միջուկում տեղադրված է գերհիմքային ապարների զանգվածը: Անտիկլինալի տարածումը մերձլայնակի է: Արևմուտքում խորասուզվում է վերին կավճի կրաքարերի տակ: Հիպերբազիտների հպումը կրաքարերի հետ տեկտոնական է: Վերին կավճի կրաքարերը և դրանց հիմքում տեղադրված ավազաքարերը, ինչպես նաև սերպենտինացված գերհիմքային ապարները կոտրատված են, ճմլված, պարունակում են շփման ցայտուն հայելիներ և տեկտոնական կավ: Հսկայան գոտու որոշ հատվածներում ներդրվել են կարբոնատիտների հարյուրավոր մետր երկարությամբ դայկանման մարմիններ, որոնք ենթարկվել են ուշմագմատիկ քրոմիտացման:

Ալպինատիպ հիպերբազիտներն ենթարկվել են ծալքավորման պրոցեսների ազդեցությանը մինչսենոնյան ապարների հետ: Հիպերբազիտների և գաբրոիդների գլաքարեր կան միջին ալպյան հարկի նստվածքների հիմքի խառնաքարերում: Այս փաստի հիման վրա հիպերբազիտների ու գաբրոիդների աբիսալ ինտրուզիվ ներդրման հասակը միանշանակ մինչսենոնյան է և դրանք դիտարկվում են վաղ ալպյան (վերին յուրա-տուրոն) ստրուկտուրային հարկի բաղկացուցիչ մաս: Պրոտրուզիվ փուլի ընթացքում կատարվում է պլաստիկ հիպերբազիտային ապարների վերելք խորքային բեկվածքներով՝ տեկտոնական բլոկների և թիթեղների ձևով տեղադրվելով ավելի երիտասարդ պալեոգենի առաջացումների մեջ:

5.3.2. Հանքավայրի երկրաբանական կառուցվածքը


Օգտակար հանածոյի պառկած կողմում լայն տարածում ունեն վերին սենոնի հասակի մանրաշերտային կրաքարերը, փխրուն մերգելները, ավազաքարային կրաքարերը, որոնք հերթափոխում են միմյանց: Շերտախմբում հիմնական ապարները ներկայացված են կավային կրաքարերով, որոնք ունեն հյուսիս-արևելյան անկում, 30-40° անկման անկյունով: Հզորությունը 300մ և ավելին է:

Նշված ապարների լվացված մակերեսի վրա անկյունային աններդաշնակությամբ տեղադրված են ստորին էոգենի հասակի կոնգլոմերատ - բրեկչիաները, մանրահատիկ ավազաքարային նումուլիտային կրաքարերը, որոնք հերթափոխվում են մերգելային կրաքարերի ենթաշերտերով, որոնց հզորությունը հասնում է 100-150մ: Նշված ապարները մերկանում են օգտակար հաստվածքի կախված կողում և ձգվում են հանքավայրի հարավ-արևելքից 200-250մ լայնությամբ ու հետապնդվում են 2.0-2.5կմ դեպի հյուսիս-արևմուտք (*նկ.5, 6*):

Հանքավայրի հյուսիսային մասում հիմքային կոնգլոմերատները բացակայում են և սենոնի հասակի կավային կրաքարերի ու մերգելների լվացված մակերեսի վրա աններդաշնակ նստած են նրբաշերտ նումուլիտային կրաքարերը:

Օգտակար հաստվածքը ունի ուսպնյակաձև կառուցված հարավ-արևելք – հյուսիս-արևմուտք տարածմամբ, մերկացված գառիթափի բարձրությունը հասնում է 1-2 մինչ 5մ և ձգվում է 600-650մ, այնուհետև դեպի հյուսիս-արևմուտք այն մարվում է: Ունեն մեղմաթեք անկում դեպի հյուսիս-արևելք 25-30° անկման անկյունով, հզորությունը՝ 45-48մ:


Երկրաբանական և պետրոգրաֆիական ուսումնասիրություններով պարզվել է, որ օգտակար հանածոն ներկայացված է կրաքարային կոնգլոմերատ-բրեկչիա տարատեսակով: Ապարի ստրուկտուրան բրեկչանման է, գլաքարերը ներկայացված են օրգանաձին կավային ու ավազաքարային գաղտնաբյուրեղային կրաքարերից: Գլաքարերը հղկված, կիսահղկված ու անկյունավոր տեսք ունեն: Երբեմն գլաքարերը ճեղքավորված են և լցված կալցիտի գաղտնաբյուրեղ շերտիկներով: Հանդիպում են նաև մանրաբեկորային կայծքարի և բյուրեղային քվարցի հատիկներ:



Պայմանական նշաններ

	Ժամանակակից ալյուվիալ-դելյուվիալ առաջացումներ		1980-81թ.թ. անցած փորվածքներ
	Ստորին-միջին էոցեն: Տուֆակոնգլոմերատներ, տուֆիտներ, լիպարիտներ, դաջիտներ		Հորատանցքեր
	Ստորին էոցեն: Նումուլիտային կրաքարեր		Հետախուզաառուներ, հետախուզահորեր
	Ստորին էոցեն, օգտակար հաստվածք: Կոնգլոմերատներ, կոնգլորեկչիաներ:		Մենաքարային մուշներ
	Վերին սենոն: Մերգելային կրաքարեր		Փորձնական բացահանք
	Դիարագի, գարրո-դիարագի, դիարագային ու անդեզիտային պորֆիրիտների դայկաներ		2011թ. անցած հետախուզական հորատանցքեր
	Ապարների տեղադրման տարրերը		Ուսումնասիրության լիցենզիայով տրամադրված տարածքի սահմանները

Նկ.5 Ջիլի կոնգլորեկչիաների հանքավայրի երկրաբանական քարտեզը (Մ1 : 2000):



Նկ.6: Ջիլի կոնգլոբրեկչիանների հանքավայրի I-I' կտրվածքը (Մ1 :2000):

Ցեմենտը կավանման կառուցվածք ունեցող կարբոնատային նյութ է, որը ներծծված է երկաթի հիդրօքսիդով: Ապարը հոծ, խիտ, հաստաշերտավոր և թույլ ճեղքավորված է: Մակերեսային լեռնային փորվածքներում և բնական մերկացումներում օգտակար հանածոն խիստ հողմահարված է, որի միջին հզորությունը հասնում է 1-2 մետրի, այդ մասին է վկայում 1981-82թ.թ. վերցված ու ուսումնասիրված մենաքարերի արդյունքները:

Անհրաժեշտ է նշել, որ հորատանցքերից վերցված հանուկային նմուշների լաբորատոր ուսումնասիրությունների արդյունքները գոհացուցիչ են և համապատասխանում են 9779-98 ԴՕՇԻ-ի և 100-95 ՀՍՍ-ի տեխնիկական պահանջներին:

Օգտակար հաստվածքում ըստ գույների առանձնացվում են օգտակար հանածոյի 4 տարատեսակ՝ մոխրագույն, բաց-մոխրագույն, վարդագույն և մանուշակա - մոխրագույն: Առաջին երեք տարատեսակներում, որոնք հիմնականում տարածված են հաստվածքի միջին մասում, խառնաքարի հատիկային պարունակությունը կազմում է 65-70%, իսկ ցեմենտացնող կարբոնատային նյութը ամուր է, իսկ մանուշակա-մոխրագույն տարատեսակում ցեմենտացնող նյութի քանակը ավելի շատ է և համեմատաբար թույլ ցեմենտացված և տարածված են օգտակար հաստվածքի վերին մասում: Նշված տարատեսակները ինչպես տարածմամբ, այնպես էլ խորությամբ օրինաչափ չեն տարածված:

Օգտակար հանածոյի հաստվածքի վրա ներդաշնակ սալաձև տեղադրված են նումուլիտային և նրբաշերտ կրաքարերը: Ստորին էոցենի հաստվածքի վրա ներդաշնակ տեղադրված են ստորին-միջին էոցենի հասակի հրաբխածին-նստվածքային առաջացումները, որոնք ներկայացված են տուֆակոնգլոմերատներով, տուֆիտներով, լիպարիտներով և դացիտներով, որոնք մեծ տարածում ունեն հանքավայրի հյուսիս-արևելյան մասում:

Հանքավայրում մեծ տարածում ունեն նաև միջշերտային և դայկանման ապարները, որոնք ներկայացված են դիաբազներով, գաբրո-դիաբազներով, դիաբա-

գային ու անդեզիտային պորֆիրիտներով և ունեն հյուսիս-արևմտյան տարածում, տեղադրման տարրերն են - անկման ազիմուտը հյուսիս-արևելյան, անկման անկյունը 65-80°: Հզորությունը՝ 1.0-2.0 մինչև 30-35մ, իսկ տարածումը 500-600մ:

Չորրորդական առաջացումները ներկայացված են այլովիալ և դելյուվիալ նստվածքներով, որոնք տեղադրված են օգտակար հաստվածքի տարածման ձորակներում և լանջերում ոչ մեծ կղզիաձև կուտակումների ձևով 0.5-1.0 մինչև 3.0-5.0մ հզորությամբ:

5.4. Կլիմայական պայմանները

Լեռնային երկրներին հատուկ օրինաչափությամբ՝ ՀՀ-ում կլիմայական գոտիները փոխվում են ըստ բարձրության (**նկ.7**): Շրջանի կլիմայական պայմանների նկարագրության համար օգտվել ենք ՀՀ քաղաքաշինության նախարարի 2011թ. սեպտեմբերի 26-ի N167-Ն հրամանով հաստատված «Շինարարական կլիմայաբանություն» ՀՀՇՆ II-7.01-2011 փաստաթղթից: Այդ փաստաթղթով սահմանում են կլիմայական պարամետրերը, որոնք կիրառվում են շենքերի և շինությունների, ջեռուցման, օդափոխության, օդի լավորման, ջրամատակարարման համակարգերի նախագծման, ինչպես նաև քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծման և կառուցապատման ժամանակ:

Կլիմայական ցուցանիշները հիմնականում հաշվարկված են Հայաստանի Հանրապետության այն բնակավայրերի համար, որտեղ տեղակայված օդերևութաբանական կայաններն ունեն դիտարկումների բավականին երկար (30 տարուց ոչ պակաս) շարք: Ցուցանիշները սրբագրված են վերջին տասնամյակի տվյալների հաշվառումով:



Նկ.7: ՀՀ կլիմայական գոտիավորման սխեման:

Տարածաշրջանի կլիման չոր մայրցամաքային է, շոգ ամառով և ցուրտ ձմեռով: Ձյունը տեղում է աշնանը և ձմռանը ու պահպանվում մոտ 4 ամիս:

Ստորև՝ աղյուսակներով (9-12) ներկայացվում են տարածաշրջանի կլիմայական ցուցանիշները՝ մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը, օդի հարաբերական խոնավությունը, մթնոլորտային տեղումները, որոնք պետք է հաշվառվեն ներդրումային գործընթացի բոլոր փուլերում:

Աղյուսակները լրացված են ըստ «Շինարարական կլիմայաբանություն ՀՀՇՆ II-7.01.-2011» տեղեկագրում առկա «Շորժա» օդերևութաբանական կայանի կլիմայական տվյալների:

Արեգակնային ճառագայթման տարեկան հաշվեկշիռը Արեգունի լեռնաշղթայի գագաթային մասերում տատանվում է 50-55, լանջերի միջին մասերում՝ 55-60, իսկ ստորոտում և Սևանա լճի ափամերձ գոտում՝ 60-ից ավելի կկալ/սմ² սահմաններում:

Արևափայլի տարեկան տևողությունը հասնում է 2650 ժամի: Օդի միջին ամսական ջերմաստիճանները չորս բնորոշ ամիսներին տատանվում է հետևյալ սահմաններում՝

- հունվար 4 – 6°C (ափից մինչև ջրբաժան գիծը)
- ապրիլ 4 - 2 °C – II – – II –
- հուլիս 16 - 12 °C – II – – II –
- հոկտեմբեր 8 - 4 °C – II – – II –

Օդի դրական միջին ջերմաստիճաններով օրերի թիվը շրջանում տատանվում է 200-220-ի միջև, 5°-ից բարձրի դեպքում՝ 160-200-ի միջև, 10°-ից բարձրի դեպքում՝ 90-100-ի միջև, 15°-ից բարձրի դեպքում՝ 0-60-ի միջև:

Օդի նվազագույն ջերմաստիճանները տատանվում են 34 - 38-ի միջև, իսկ առավելագույնները՝ 25 - 34° -ի միջև: Առանց սառնամանիքների օրերի թիվը տատանվում է 120 - 140-ի միջև:

Մթնոլորտային տեղումների տարեկան գումարը տատանվում է 600 - 800մմ-ի միջև, ըստ որում տաք սեզոնում (ապրիլ - հոկտեմբեր)՝ 400 - 550 մմ, իսկ ցուրտ սեզոնում (նոյեմբեր - մարտ) 100 - 250 մմ: Կայուն ձնածածկույթն առաջանում է նոյեմբերի 15-ից (լեռնագագաթային մասերում) մինչև դեկտեմբերի 15-ը (Սևանի ափամերձ գոտին), իսկ վերանում է մարտի 15-ից մինչև մայիսի 1-ը:

Տարեկան գոլորշունակությունը տատանվում է 650 - 850 մմ-ի սահմաններում, այսինքն համարյա հավասար է տարեկան տեղումների քանակին (600-800մմ):

Օդի բացարձակ խոնավությունը տատանվում է **2-3 %** սահմաններում:

Քամիների ուղղությունը և արագությունը բնորոշ ամիսներին հետևյալն է.

- հունվարին - հարավ-արևմտյան (52%) և արևմտյան (30%), Ուժեղ քամիներով (>15մ/վրկ) օրերի թիվը 3,3 է, առանց քամիների օրերը կազմում են դիտարկումների ընդհանուր թվի 29%-ը,

- ապրիլին-հարավ-արևմտյան (32%) և հյուսիս-արևելյան (19%): Ուժեղ քամիներով օրերի թիվը 1.0, առանց քամիների օրերը կազմում են 37%,

- հուլիսին - հյուսիս-արևելյան (58%) և արևելյան (24%): Ուժեղ քամիներով օրերի թիվը 0 է, առանց քամիների օրերի տոկոսը՝ 48%:

- հոկտեմբերին - հյուսիս-արևելյան (24%) և հարավ- արևմտյան (24%): Ուժեղ քամիներով օրերի թիվը 0,7 է, առանց քամիների օրերի տոկոսը՝ 49%:

Ամպրոպներով օրերի թիվը տարվա մեջ 45-55 է, կարկուտով՝ 5-7, մառախուղով՝ 20-50:

Օդի ջերմաստիճան

Բնակավայրի օդերևութաբանական կայանի անվանումը	Բարձր. ծովի մակարդակից	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների °C												Միջին տարեկան °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Շորժա	1917	-4.6	-4,6	-1.7	4.4	9.4	13.2	16.6.	16.9	13.7	8.5	3.1	-1.9	6.1	-32	34

Աղյուսակ 10

Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Բնակավայրի օդերևութաբանական կայանի անվանումը	Տեղումների քանակը՝ միջին ամսական / օրական առավելագույն, մմ													Ձնածածկույթ		
	Ըստ ամիսների													Առավելագույն տասօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ
	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	տարեկան			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Շորժա	12/12	15/22	23/24	42/38	69/38	65/43	49/44	37/66	33/43	40/38	26/40	15/18	426/66	41	77	68

Օդի հարաբերական խոնավությունը

Բնակավայրի օդերևութաբանական կայանի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %														
	Ըստ ամիսների												Միջին տարեկան, %	Միջին ամսական ժամը 15:00 ին	
	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր		Ամենացուրտ ամսվա, %	Ամենաշոգ ամսվա, %
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Շորժա	68	69	67	63	65	64	63	63	60	62	66	68	65	63	49

Քամիներ

Միջին տար. մթն. ճնշում, ՊԱ	ամիսներ	Կրկնելիությունը, %, ըստ ուղղությունների								Անհողմ. Կրկնելիութ., %	Միջին ամսական արագ., մ/վ	Միջին տարեկան արագ., մ/վ	Ուժեղ քամիներով օրերի քան. (>15մ/վ)	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ "ո" տարիների ընթացքում			
		Միջին արագությունը, մ/վ												20	50	100	
		հյուսիսային	Հյուսիս-արևելյան	Արևելյան	Հարավ-արևելյան	հարավ	Հարավ-արևմտյան	Արևմտյան	Հյուսիս-արևմտյան								
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	
ճամբարակ 814.1	I	3	4	5	5	7	40	29	7		74	4.2	2.8	-	24	26	27
		-	-	-	-	-	-	-	-	-							
	IV	5	13	12	6	9	32	17	6		70	3.0					
		-	-	-	-	-	-	-	-	-							
	VII	4	40	35	9	4	3	2	3		61	1.6					
		-	-	-	-	-	-	-	-	-							
	X	5	17	16	9	6	23	16	8		63	2.2					
		-	-	-	-	-	-	-	-	-							


5.5. Շրջանի սեյսմիկ բնութագիրը

ՀՀ տարածքը գտնվում է Եվրասիական և Արաբական լիթոսֆերային սալերի բախման գոտում ինչով և պայմանավորված է տարածաշրջանի բարձր սեյսմիկականությունը:

ՀՀ տարածքում հյուսիսից հարավ առանձնացվում են հետևյալ սեյսմիկ գոտիները՝ Մերձքուռի, Սոմխեթ - Ղարաբաղի, Մերձսևանի, Կապան-Գոգորանի, Ծաղկունյաց - Զանգեզուրի, Երևան - Օրդուբադի, Ուրծ-Վայքի: Նշված գոտիների սահմաններով են անցնում երկրկեղևի խորքային բեկվածքները: Դրանցից ամենախոշորներն են՝ Սևան-Աքերայի, Փամբակ-Սևան-Սյունիքի, Գեղամա, Գառնիի, Փարաքար – Դվինի, Միջին Արաքսյան /Երևանյան/ և այլ խզվածքայի խախտումներն ու բեկվածքները [1,2, 5]:

Ուսումնասիրվող տարածաշրջանը գտնվում է Սևան-Աքերայի և Փամբակ-Սևան-Սյունիք խզվածքների միջև, վերջին խզվածքի ակտիվության պատճառով մթա 762 թ.-ին գրանցվել է 7.1 մագնիտուդով երկրաշարժ: Այս շրջանում համաձայն ՀՀ տարածքի սեյսմիկ շրջանացման քարտեզի գետնի հարաբերական հորիզոնական արագացումները կազմում են 0.4-0.5 մ/վ²: Երկրաշարժերի հնարավոր ուժգնությունը կազմում է 10 և ավել բալ (նկ.8):


2021թ. Փետրվարի 5-ին Շորժա գյուղի շրջանում տեղի ունեցած երկրաշարժի ուժգնությունը գնահատվել է $M=4.7$: Այս երկրաշարժը կապված էր Հայաստանի ամենաերկար՝ Փամբակ-Սևան-Սյունիքի ակտիվ խզվածքի հետ:



Նկ. 8: ՀՀ Սևանա լճի հարակից շրջանների սեյսմոտեկտոնական սխեմատիկ քարտեզը (հատված Հայաստանի ազգային ատլասից [5]):

ՀՀ Շինարարության նախարարի ՀՀՇՆ II-6.02-2006 հրամանով սահմանվում է այն չափանիշները, որոնք պետք է դրվեն շենքերի ու կառուցվածքների նախագծման ու կառուցման ընթացքում /սեյսմակայունության հիմնական սկզբունքներ/: Սեյսմակայուն շինարարությունը իրականացվում է տարբերակված՝ երեք, ըստ ուժգնության աճող հաջորդականությամբ՝ 1, 2, 3 սեյսմիկ գոտիներում, որոնց համար գրունտի հորիզոնական արագացման մեծությունը համապատասխանաբար 20, 30 և 40 սմ/վրկ² է: Նույն հրամանի հավելվածում ներկայացված է ՀՀ բնակավայրերի ցուցակը ըստ սեյսմիկ գոտիների: Այդ ցուցակում Վարդենիսի տարածաշրջանի Մեծ Մասրիկ, Փոքր Մասրիկ, Տորֆավան, Վարդենիս, Նորակերտ, Ակունք, Ճամբարակ, Ջիլ, Շողակաթ, Դարանակ, Ծափաթաղ բնակավայրերը գտնվում են 0.4 g սեյսմիկ գոտում (**նկ.9**):

ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարի 12.02.2013թ N 100-Ն հրամանով սահմանվում է սեյսմիկ ռիսկի գնահատման աշխատանքների կազմակերպման և իրականացման դրույթները, համաձայն որոնց մշակվում են սեյսմիկ ռիսկի գնահատման քրտեզներ, որոնք դրվում են մարզերի և համայնքների զարգացման ծրագրերի, քաղաքաշինական փաստաթղթերի մշակման հիմքում, որոնք կիրառվում են տարածքների, շենքերի և շինությունների սեյսմիկ խոցելիության նվազեցման միջոցառումների պլանավորման, արտակարգ իրավիճակների կառավարման և նրանց հետևանքների վերացման համար:



Նկ. 9: ՀՀ տարածքի հյուսիսային կեսի հավանական սեյսմիկ վտանգի գոտիավորման քարտեզ, ըստ ՀՀՇՆ 20.04- «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր» հավելված 1 -ի:

5.6. Սողանքներ

ՀՀ տարածքում հայտնի են շուրջ 2000 սողանքային մարմիններ, որոնք ունեն վտանգավորության տարբեր աստիճաններ:

Սողանքների տարածումը պայմանավորված է ռելիեֆի թեքությամբ, երկրաբանական կառուցվածքի առանձնահատկություններով, գրունտների լիթոլոգիկան կազմով, կոնստիտուցիայով և մարդածին երևույթներով:

Սողանքների տեղաբաշխվածությունը, ձևաբանությունն ու առաջացման պայմանները երկար տարիներ ուսումնասիրվել և ուսումնասիրվում են, քանի որ դրանք լուրջ վտանգ են ներկայացնում տարբեր ենթակառուցվածքների և բնակչության համար [6-9]:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ սողանքների մեծ մասը տեխնածին է: Դրանց առաջացման պատճառ է հանդիսացել մարդու գործունեությունը: Մարդու կողմից խախտվում է լանջերի դարերով ձևավորված բնական հավասարակշռությունը, ինչն էլ նպաստում է սողանքների ակտիվացմանն ու նոր սողանքների առաջացմանը:

Մարդու գործունեության հետևանքով են առաջացել են ՀՀ Կողբ – Հաղթանակ, Ռևազլու – Վազաշեն, Շնոխ–Ճոճկան, Հացավան – Գառնի, Զիվա – Ռինդ – Արենի, Շաղափ գետի ավազանի սողանքները: Ամենամեծերն են Դիլիջանի, Ճամբարակի, Մարտունու, Գուգարքի, Վահագն – Եղեգնուտի, Կաճաճկուտի, Ալավերդու, Լեռնապատի, Արագածի, Ջաջուռի սողանքները:

Միջին մեծության սողանքներից են Սովետաշենինը, Լոռու հանգստյան տան հարակից (Գուգարք), Ռինդի (Եղեգնաձոր), Բարեկամավանի (Դոսուլու) և Բաղանիսի (Նոյեմբերյան) սողանքները:

Ջրամբարների գոտիների շրջանում զարգացած են փոքր և միջին մեծության բազմաթիվ սողանքներ, որոնցից կարելի է նշել Ագատի, Ջողազի, Մարմարիկի ջրամբարները:

ՀՀ տարածքում սողանքները զբաղեցնում են 1049,5 կմ² մակերես [6-9]: Ըստ մարզերի այն ունի հետևյալ պատկերը

- Շիրակի մարզում` 1,92 կմ²,
- Լոռու մարզում` 371,4 կմ²,
- Տավուշի մարզում` 327,09 կմ²,
- Գեղարքունիքի մարզում` 57,03 կմ²,
- Կոտայքի մարզում` 33,8 կմ²,
- Արարատի մարզում` 13,37 կմ²,
- Վայոց Ձորի մարզում` 58,74 կմ²,
- Սյունիքի մարզում` 86,19 կմ²:

Ինչպես տեսնում ենք բերված տվյալներից Գեղարքունիքի մարզում սողանքները շատ տարածում չունեն, սա պայմանավորված է նրանով, որ այստեղ տարածված են հրային և կոնսոլիդացված նստվածքային, հրաբխանստվածքային ժայռային, կիսաժայռային ապարախմբեր իսկ ռելիեֆը մեղմաթեք է:

Սևանա լճի հյուսիս-արևելյան ափի երկայնքով արձանագրվել են երկու սողանքային մարմիններ՝ Փամբակ և դարանակ գյուղերի շրջանում (**նկ. 10**, քարտեզի վրա համարակալված են 262 և 263):



Նկ.10: Սևանա լճի հյուսիս-արևելյան ափի Արտանիշ-Ֆարանակ հատվածի առավել վտանգավոր սողանքների սխեմատիկ քարտեզ (հատված ՀՀ առավել վտանգավոր սողանքների քարտեզից Մ 1:500000[9])

Ջիլի կոնգլոբրեկչիանների հանքավայրերի շրջանում սողանքային մարմիններ կամ սողանքավտանգ տեղամասեր հայտնաբերելու նպատակով իրականացվել են տեղանքի դիտարկումներ: Մանրամասն ուսումնասիրվել են նաև գրականության տվյալները:

Հետազոտությունները ցույց տվեցին, որ հանքավայրի շրջանում սողանքային մարմիններ կամ սողանքածին երևույթներ առկա չեն: Հանքավայրի և դրա հարակից շրջաններում տարածված են վերին սենոնի մերգելային կրաքարերը, ստորին-միջին էոցենի կրաքարերը, տուֆակոնգլոմերատները, տուֆիտները, լիպարիտներն ու դացիտները, որոնք ժայռային արմատական ապարներ են (սեղմման դիմադրությունը՝ 500-800կգ/սմ²) ու դրանց մեջ սողանքի առաջացման հավանականությունը գերոյական է: Ներկա պահին արձանագրում ենք, որ երկրաբանական անցյալում և ներկայումս տեղի ունեցած և ունեցող պրոցեսները տեղամասում որևէ սողանք կամ փլուզումներ չեն առաջացրել և ապագայում էլ դրանց առաջացումը հավանական չէ:

Հանքավայրի շահագործման ժամանակ կտրվելու է ռելիեֆի մոտ 4.2 հա տեղամաս (հանքավայրի շահագործման ամբողջ ժամկետի ընթացքում): Օգտակար հանածոյի և պարփակող ապարների տեղադիրքն այնպիսին է, որ նույնիսկ ռելիեֆի խախտման ժամանակ սողանքային երևույթներ չեն կարող առաջանալ, այն պարզ պատճառով, որ նախ՝ օգտակար հանածոն և պարփակող ապարները սողանքածին չեն (պլաստիկ կավեր չեն պարունակում) և երկրորդ՝ ունեն հակառակ (обратный) անկումներ՝ խորասուզվում են լանջերի թեքությանն հակառակ ուղղությամբ:

5.7. Ջրային ռեսուրսներ

Ուսումնասիրվող շրջանը պատկանում է Արաքս գետի ավազանի Սևան-Հրազդանի ենթաավազանին: Սևանի լեռնաշղթայի այս հատվածի լանջերը թեքված են արևմուտք և հարավ-արևմուտք, որոնք կտրատված են Աղբերք (Թոխլուջա), Արտունջ և Ջիլ սակավաջուր գետակների և մի քանի այլ անանուն վտակների ձորերով ու չոր ձորակներով:

Ամենամեծը Աղբերքն է: Ըստ Վ. Պ. Վալեյանի, նրա միջին ծախսը կազմում է 0.16-0.18 մ³/վրկ:

Գետերի ակունքները լեռնաշղթայի բարձր լանջերում են, իսկ գետաբերանները՝ Սևանա լճում, իրարից մոտ 3-4 կմ հեռավորության վրա: Բարձրադիր մասերում դրանք հոսում են մեծ թեքության ձորերով Սևանին մոտենալիս թեքությունները նվազում են:

Դրանց հուները կազմված են գլաքարերից և ավազից, որոնց մեջ էլ գետերը կորցնում են իրենց հոսքի մեծ մասը:

Մակերևութային հոսքի տարեկան մեծությունը տատանվում է 300-500մմ սահմաններում: Գետային ցանցի խտությունը հիմնականում 1.0-1.5կմ/կմ² է, իսկ Շորժայից արևելք հասնում է մինչև 2.0-ի:

Առավելագույն հոսքի մոդուլը դիտվում է մայիս ամսին և տատանվում է 50-150 լ/վրկ/կմ²-ի սահմաններում:

Նվազագույնը դիտվում է սեպտեմբեր ամսին և տատանվում է 20-100 լ/վրկ/կմ²-ի սահմաններում:

Շրջանի սելավաբերությունը միջին է (5 - 15 հզ.մ³/կմ²) և թույլ (< 5):
Գետերի սնումը խառն է՝ ձյունային (40%), անձրևային (19%) և ստորերկրյա (41%): Վարարումների միջին ամսական սկիզբը ապրիլի 1-ն է, իսկ ավարտը՝ հունիսի 22-ը: Վարարման հոսքի մեծությունը կազմում է տարեկան հոսքի 53%-ը: Ընդհանուր հոսքի գործակիցը ջրային հաշվեկշռում կազմում է 0.48:

ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի մոնիթորինգ իրականացնում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից[10]:

Ջրի որակի ուսումնասիրությունները կատարվել են Սևանա լիճ թափվող 10 խոշոր գետերից /Ձկնագետ, Մասրիկ, Սոթք, Կարճաղբյուր, Վարդենիս, Մարտունի, Արգիճի, Ծակքար, Շողվակ և Գավառագետ/ վերցված նմուշներով: Ձկնագետ, Կարճաղբյուր, Արգիճի, Շողվակ և Սոթք գետերի ջուրը «լավ» որակի է: Մնացած բոլոր գետերի գետաբերանի հատվածում ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս) կամ «անբավարար» (4-րդ դաս):

Տարածաշրջանի և առհասարակ ՀՀ ամենգլխավոր ջրային ամբարը Սևանա լիճն է, որը գտնվում է հանքավայրից 5.8 կմ հեռավորության վրա:

Սևանա լճի հիդրոքիմիական ուսումնասիրությունների արդյունքում լճի թթվածնային ռեժիմն եղել է բավարար, լճի բնական կենսագործունեության համար դիտվելով թույլատրելի նորմի սահմանում:

Սևանա լճից վերցված փորձանմուշներում ՍԹԿ-ն գերազանցվել է՝ քրոմինը՝ 1.2-3.9 անգամ, մագնեզիումինը՝ 1.2-1.7 անգամ, վանադիումինը՝ 2.9-5.9 անգամ, սելենինը՝ 1.2-5.0 անգամ (տվյալները ստացվել են 2020թ.): Հիմք ընդունելով լճի ջրի քիմիական որակի բազմամյա ուսումնասիրությունների տվյալները այսպիսի քանակությունը լճի բնական առանձնահատկությունն է և չի համարվում աղտոտվածություն: Որոշված մյուս ցուցանիշների պարունակությունները դիտվել են համապատասխան ՍԹԿ-ների սահմաններում:


Հայցվող տեղամասը գտնվում է Ջիլ գետի վերին հոսանքներում: Սկիզբ է առնում Սևանի լեռների հարավարևմտյան լանջերից և համանուն գյուղից 4 կմ արևմուտքում թափվում Սևանա լիճ: Երկարությունը՝ 10 կմ է [2]: Ջինար գետը Ջիլ գետի վտակն է, հոսում է հանքավայրից 20-100մ հեռավորության վրա: Սեզոնային գետ է: Վարարում է ապրիլ ամսին ձնհալի ժամանակ իսկ հուլիս ամսից ջրի հոսքը դադարում է:

Ջիլ գետը գտնվում է հանքավայրից հարավ-արևմուտք մոտ 1.2 կմ հեռավորության վրա (**նկ.11**): Ջիլ գետի վրա մշտադիտարկումների կետեր չկան, «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից Ջիլ գետի վերաբերյալ տեղեկատվություն չի հրապարակվում:

Ջիլ գետի վերաբերյալ ելակետային տվյալները ստացվել են 2022թ.-ին մեր կողմից իրականացված աշտատանքների հիման վրա:

X - 8535889, Y - 4480197, H - 1913 մ կոորդինատներով դիտակետում ապրիլ-հոկտեմբեր ամիսներին իրականացված չափումների արդյունքում Ջիլ գետի տարեկան միջին ծախսը կազմել է 0.65/վ, ունի հետևյալ քիմիական կազմը (մգ/լ)

HCO₃-164 SO₄²⁻12.0 Cl-1.1 Ca²⁺38.9 Mg²⁺10.1 Na+K 8.7



Նկ. 11: Ջիրի կոնգլորեկցիանների հանքավայրի տեղադիրքի սխեման, Մ1:10000

Հանքավայրի ջրաերկրաբանական պայմանները: Ջրաերկրաբանական առումով Ջիրի հանքային դաշտի շրջանը սակավաջուր է: Հանքային դաշտի ջրաերկրաբանական պայմանները որոշվում են դրա երկրաբանական կառուցվածքի, տեղանքի ռելիեֆի առանձնահատկություններով, արմատական ապարների մասնակի մերկացվածությամբ և մթնոլորտային տեղումների քանակությամբ:

Հանքային դաշտի տարածքը ներկայացնում է Սևանի լեռնաշղթայի ճյուղավորման ստորոտը՝ կտրտված մերձմիջօրեական ուղղության ձորերով: Բուն հանքավայրի տարածքը ներկայացնում է հարթագագաթ բլրակային բարձունք, որի հարաբերական բարձրությունը գերազանցում է 250-300մ: Հանքավայրը հարավ-արևմուտքից շրջագծվում է վերին կավճի ծալքավորված կրաքարային հաստվածքով, իսկ հյուսիս-արևելքից եոցենի հասակի հրաբխածին-նստվածքային ապարներով, հարավից՝ դեյուվիալ-պրոյուվիալ մինչև 3-5մ հզորությամբ առաջացումներով:

Ըստ ջրաթափանցելիության բնույթի ու աստիճանի, ինչպես նաև ջրառատության հանքավայրը կազմող ապարները բաժանվում են երեք լիթոլոգիական համալիրների՝

ա. դեյուվիալ-պրոյուվիալ խիստ ջրատար նստվածքներ, որոնցում ջրառատության ցուցանիշը՝ ստորերկրյա հոսքի մոդուլը, ինչպես ցույց են տալիս դիտարկումների մշակումները, կազմում է մոտ 2.96 լ/վրկ/կմ²:

բ. ծալքավորված և խիստ ճեղքավորված ջրաթափանց կրաքարեր, որոնք կլանում են համարյա ամբողջ մթնոլորտային տեղումները: Դրանցով ներծծանցվող մթնոլորտային ջրերը հասնելով կավամերգելային ջրամերժ շերտին՝ մակերես են դուրս գալիս փոքր աղբյուրների ձևով: Ստորերկրյա հոսքի ցուցանիշը այս համալիրի համար չի գերազանցում 2.45 լ/վրկ/կմ² ցուցանիշը:

- Հանքավայրի հյուսիս-արևելքում (հանքային մարմնի կախված կողում) տարածված են խիստ ճեղքավոր դայկանման մարմինները, որոնք խիստ ջրաթափանց են և կլանում են ամբողջ մթնոլորտային տեղումները: Այս համալիրի ապարները թույլ ջրատար են՝ ստորերկրյա հոսքի ցուցիչը կազմում է 0.38-0.42 լ/վրկ/կմ²: Հանքավայրից հյուսիս-արևմուտքում և արևմուտքում հայտնի են մի քանի աղբյուրներ, որոնք ունեն 0.1-0.4 լ/վրկ ծախս:

Հանքավայրի տարածքի հայտնի ջրերը բաժանվում են երկու խմբի՝ մակերևութային և ստորգետնյա: Առաջինները ներկայացված են գետակների առվակների ձևով, որոնց թվին են պատկանում Ջիլ գետը և հանքավայրով անցնող նրա վտակ Չինարագետը, որոնք հիմնականում օգտագործվում են ոռոգման նպատակով, հարկ եղած դեպքում կարող են օգտագործվել որպես տեխնիկական ջուր: Դրանք հիմնականում ունեն սեզոնային բնույթ: Ստորգետնյա ջրերը փոքր աղբյուրների ձևով դուրս են գալիս դելյուվիալ նստվածքների, կրաքարերի և ինտրուզիվ ապարների տարածման շրջանում, որոնց ջրերը պիտանի են խմելու համար:

Հանքավայրի տարածքում անցած հետախուզական հորերում և հորատանցքերում գետնաջրեր չեն հանդիպել: Դրանք հայտնվում են տեղանքի ռելիեֆի բացասական ձևերում՝ չոր հեղեղատների լանջերին, ռելիեֆի ստորադիր մասերում և հեղեղատների ողողահուններում:

Գետնային ջրերի առկայությունը հոսանքի ցածրադիր փորվածքներում չի խանգարի հանքավայրի շահագործմանը, քանզի այն շահագործվելու է բաց եղանակով 2440 մ հորիզոնից վեր, իսկ գետնաջրերի մակարդակը շատ ավելի ցածր է՝ դրանք գտնվում են 1900 մ նիշերի վրա: Նման ռելիեֆի և բացահանքով շահագործման պայմաններում ոչ գետնային և ոչ ստորերկրյա ջրերի առկայությունը հանքավայրի տեղամասերի շահագործմանը խոչընդոտել չեն կարող, քանի որ դրանք ենթարկվում են բնական ջրհեռացման:

Հանքային դաշտի ստորերկրյա ջրերը հիմնականում բնութագրվում են իրենց կայուն ֆիզիկական հատկություններով ու քիմիական կազմով: Դրանք թափանցիկ են, առանց հոտի, համի ու նստվածքի: Ջրերի ջերմաստիճանը տատանվում է 6.2-18°C-ի սահմաններում: Տարբեր ժամանակահատվածներում և տարբեր հեղինակների կողմից բերված ջրերի քիմիական անալիզների տվյալները վկայում են, որ ըստ անիոնային կազմի դրանք պատկանում են հիդրոկարբոնատային դասի HCO₃-SO₄ և HCO₃-Cl ենթադասերին: Կատիոնային կազմում գերակշռում են Mg և Ca կատիոնները:

Ջրերի հոսքը դեպի ապագա բացահանք հնարավոր է միայն մթնոլորտային տեղումների հետևանքով, որոնց տարեկան միջին քանակը, հիդրոմետվարչության բազմամյա դիտարկումների տվյալների համաձայն, կազմում է 500-600 մմ: Հաշվի առնելով հանքավայրի երկրաբանական կառուցվածքի առանձնահատկությունները և ապարների բարձր ջրաթափանցելիությունը, կարելի է ենթադրել, որ բացահանք ներթափանցող ջրերը կենթարկվեն բնական դրենաժի:

Ելնելով վերը նշվածից կարելի է համարել, որ հանքավայրի ջրաերկրաբանական պայմանները բարենպաստ են և բացասական ազդեցություն չեն ունենա դրա շահագործման աշխատանքների վրա:

5.8. Մթնոլորտային օդի որակի բնութագիր

Մթնոլորտային օդի մոնիտորինգի դիտակայան հանքավայրի տարածքի մոտակայքում չկա, սակայն համաձայն «ՀՀ բնակավայրերի մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաները» ուղեցույց-ձեռնարկի [11] տարածքի օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են.

Փոշի՝ 0.2 մգ/մ^3 ,

Ծծմբի երկօքսիդ՝ 0.02 մգ/մ^3 ,

Ազոտի երկօքսիդ՝ 0.008 մգ/մ^3 ,

Ածխածնի օքսիդ՝ 0.4 մգ/մ^3 :

5.9. Հողային ծածկույթ

Տարածքի հողային ծածկույթը ներկայացված է հողերի լեռնամարզագետնային, մարզագետնատափաստանային, դարչնագույն անտառային և գետահովտադարավանդային մարզագետնային տիպերով (**նկ.12**, [12-14]):

Լեռնամարզագետնային հողերի բնորոշ առանձնահատկությունն այն է, որ պարունակում են մեծ քանակությամբ հումուս (8-18, նույնիսկ 25-30%): Հումուսային նյութերի բաղադրությունում ֆուլվոթթուները գերազանցում են հումինաթթուներին ($C_{\text{հֆ}}:C_{\text{ֆթ}}=0.3-0.8$):

Խիտ զարգացած արմատային համակարգի շնորհիվ այդ հողերը հիմնականում ունեն լավ արտահայտված նուրբ հատիկավոր ստրուկտուրա, աղքատ են կարբոնատներին:

Հողաշերտի հզորությունը փոքր է, կախված ռելիեֆի պայմաններից, հողի հզորությունը կարող է տատանվել 15-20-ից 40-50սմ-ի սահմաններում: Ռելիեֆի ցածրադիր մասերում հողաշերտի հաստությունը կարող է հասնել նույնիսկ 60-70սմ:


Մեխանիկական կազմը հիմնականում կավավազային է: Հողային լուծույթի ռեակցիան թթվային է՝ pH տատանվում է 4.5-6.4-ի սահմաններում:

Կլանող համալիրում Ca-ի և Mg-ի հետ մեկտեղ զգալի տեղ է զբաղեցնում նաև կլանված H-ը (մինչև 10-12.5, իսկ առանձին տեղերում նույնիսկ 21-23 մ.էկվ 100գ հողում), որը և պայմանավորում է թթվային ռեակցիան:

Լեռնամարզագետնային հողերը պարունակում են նշանակալից քանակությամբ ազոտ և ֆոսֆորական թթու: Դրանք աչքի են ընկնում բավարար ֆիզիկական և ջրաֆիզիկական հատկություններով՝ ջրաթափանցությունը բավական բարձր է, իսկ խոնավունակությունը թեթև մեխանիկական կազմի ու բավականաչափ խճի պարունակության շնորհիվ շատ բարձր չէ (15-23%):

Մարզագետնատափաստանային հողերը հանդես են գալիս սևահողանման ենթատիպով: Այս տիպի հողերը պարունակում են մեծ քանակությամբ հումուս (9-10,

մինչև 18%), ունեն լավ արտահայտված հատիկակնձկային ստրուկտուրա, կավավազային մեխանիկական կազմ, հզոր են կամ միջակ հզոր՝ հողաշերտի հզորությունը տատանվում է 40-50սմ-ի սահմաններում:



- 1** Լեռնամարգագետնային բույլ ճմահողային խորքային - չհագեցած փոքր հզորության կավավազային տեղ-տեղ բույլ և միջին հողմահարված
- 2** Մարգագետնատափաստանային սևահողանման մանրախճաքարքարոտ միջին հզորության կավավազային տեղ-տեղ միջին հողմահարված
- 3** Մարգագետնատափաստանային սևահողանման մանրախճաքարքարոտ փոքր հզորության կավավազային տեղ-տեղ բույլ հողմահարված
- 4** Դարչնագույն անտառային լվացված տափաստանացված մեծամասամբ միջին հզորության կավավազային բույլ հողմահարված
- 5** Դարչնագույն անտառային կարբոնատային մանրախճաքարքարոտ միջին հզորության կավավազային
- 6** Դարչնագույն անտառային տափաստանացված փոքր հզորության մեծամասամբ կավավազային միջին և ուժեղ հողմահարված
- 7** Դարչնագույն անտառային տափաստանացված մեծամասամբ միջին հզորության կավավազային տեղ - տեղ բույլ հողմահարված մշակովի
- 8** Գետահովտադարավանդային մարգագետնային գլաքարավազային հզոր կավավազային մշակովի
- 9** Գետահովտադարավանդային մարգագետնային բույլ զարգացած գլաքարավազային միջին հզորության կավավազային մշակովի
- 10** Բնահողեր բույլ զարգացած ավազազլաքարային
- 11** Արմատական ապարների ելքերի և ուժեղ քարքարոտ հողերի համալիր

Նկ. 12: Հանքավայրի շրջանի հողերի բնական տիպերի տարածման քարտեզ:

Լեռնաանտառային գոտու դարչնագույն անտառային հողերը ձևավորվել են 700-1700մ բարձրությունների սահմաններում, կիրճերով, ձորակափոսորակային ցանցով խիստ կտրտված ռելիեֆի պայմաններում: Այս հողերը նկարագրվող շրջանում հանդես են գալիս լվացված, տիպիկ և կարբոնատային ենթատիպերով: Լվացված դարչնագույն անտառային հողերը զբաղեցնում են սովերահայց լանջերը և

ձևավորվել են համեմատաբար ավելի խոնավ պայմաններում, քան տիպիկ ենթատիպը:

Այս տիպի հողերի քիմիական և ֆիզիկական հատկությունները ներկայացված են աղ. 13-ում:

Աղյուսակ 13

Մարզագետնատափաստանային հողերի քիմիական և ֆիզիկական հատկությունները

Խորությունը, սմ	Հումուսը, %	Կլանված հիմքերի գումարը, մ/էկվ 100գ հողում	pH-ը ջրային քաշվածքում	Հիդրոլիտիկ թթվությունը, մ/էկվ 100գ հողում
0-5	18.1	49.3	6.2	4.6
5-14	10.8	49.4	6.7	8.0
14-27	7.8	44.7	6.7	7.5
27-40	5.8	28.6	6.8	4.6
40-61	2.0	22.7	6.8	2.7
61-82	0.	21.5	6.9	1.6
82-120	0.4	22.0	7.0	1.4

Այս հողերը բնութագրվում են դարչնագույն և մուգ-դարչնագույն գույնով, հումուսի բավական բարձր պարունակությամբ (10-14%), որը խորության ուղղությամբ արագ նվազում է: Հումինային նյութերում հումինաթթուների և ֆուլվոթթուների քանակը գրեթե հավասար է: Դարչնագույն անտառային հողերի քիմիական ու ֆիզիկաքիմիական հատկությունները բերված են աղ. 14-ում:

Աղյուսակ 14

Դարչնագույն անտառային հողերի քիմիական ու ֆիզիկաքիմիական հատկությունները

Հողատիպը և ենթատիպը	Խորությունը, սմ	Հումուսը, %	CO ₂ , %	Կլանված կատիոնների գումարը, մ/էկվ 100գ հողում	pH-ը ջրային քաշվածքում
1	2	3	4	5	6
Լվացված դարչնագույն անտառային	0-10	14.1	չկա	40.3	6.6
	10-26	3.7	չկա	39.1	6.7
	26-49	2.2	չկա	33.4	6.5
	49-64	1.4	չկա	38.6	6.8
	64-85	1.14	չկա	37.6	7.7
	85-107	0.8	չկա	38.9	7.3
Տիպիկ դարչնագույն	0-14	9.9	չկա	39.2	6.9
	14-35	3.4	3.1	35.1	7.5
	35-50	1.0	4.0	34.8	8.2

անտառային	50-94	0.9	3.9	33.8	8.2
	94-115	0.8	2.4	16.9	8.2
	115 -145	0.7	7.3	17.8	8.3
Կարբոնատային դարչնագույն անտառային	2-16	10.8	1.9	22.8	7.8
	16-31	4.5	5.2	15.6	8.0
	31-43	2.5	7.5	17.0	7.5
	43-120	1.2	8.9	19.8	7.9

Այս տիպի հողերը ունեն գլխավորապես կավավազային մեխանիկական կազմ: Կլանման տարողությունը բարձր է, կլանված կատիոններում գերակշռողը Ca-ն է: Ռեակցիան չեզոք է կամ թույլ հիմնային: Բնութագրվում են բարելավ ֆիզիկական և ջրաֆիզիկական հատկություններով, լավ արտահայտված ստրուկտուրայով (*աղ.15*):

Աղյուսակ 15

Դարչնագույն անտառային հողերի ջրաֆիզիկական հատկությունները

Խորությունը, սմ	Տոկոսներով հողի կշռի նկատմամբ				Ջրաթափանցելիությունը	
	առավելագույն խոնավ- ծծաբույս նյութային	թույլ նյութային	նվազագույն խոնավ- նյութային	լիքի խոնավ- նյութային	դիտումների ժամերը	սմ/րոպե
0-14	12.3	15.9	37.0	50.4	1-ին	1.08
14-35	10.9	14.3	33.6	45.5	2-րդ	0.93
35-50	10.6	12.0	31.4	36.8	3-րդ	0.88
50-94	9.7	12.3	30.2	36.2	4-րդ	0.88
94-115	6.1	11.3	27.8	35.8	-	-

Գետահովտադարավանդային հողերի առաջացումը կապված է մշտապես հոսող գետերի գործունեության հետ, գետափերի հարթ տարածություններում: Այս հողերում ծագումնաբանական հորիզոնները թույլ են արտահայտված: Ունեն պարզ շերտավոր կառուցվածք, մեծ հզորություն, թեթև մեխանիկական կազմ (ավազային, կավավազային) և հատիկակնձկային ստրուկտուրա: Հումուսի պարունակությունը 1,5-2-ից մինչև 4-6%:

Հողայն լուծույթի ռեակցիան հիմնականում չեզոք է կամ թույլ հիմնային: Կլանման տարողությունը մեծ չէ (15-25 մ.էկվ 100գ հողում), կլանված կատիոնների կազմում գերակշռողը կալցիումն է:

Հայցվող տեղամասի տարածքը համադրվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Ջիլ բնակավայրի՝ պետական սեփականության գյուղատնտեսական նշանակության արոտավայրերի (կադաստրային ծածկագրեր՝ 05-077-0201-0002, 05-077-0201-0001, 05-077-0214-0001, 05-077-0208-0001, 05-077-0203-0001),

դաշտային ճանապարհների (կադաստրային ծածկագրեր՝ 05-077-0715-0001, 05-077-0703-0001) ու գետի (կադաստրային ծածկագիր՝ 05-077-0704-0001) հետ:

Հայցվող տեղամասի մակերևույթը և հատկապես օգտակար հանածոյի մարմինը լերկացած է, հողաբուսական շերտը գրեթե ամբողջությամբ բացակայում է: Մակաբացման ապարներ (օգտակար հաստվածքը ծածկող) առկա չեն:

Ջիլ բնակավայրի վարչական ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն, հայցվող տեղամասը անտառային հողամասեր չի ներառում:

Հայցվող տարածքում խախտված հողեր, լցակույտեր, հանված, պահեստավորված հողաբուսական շերտ առկա չէ:

Նախագծված բացահանքի մակերեսը կազմում է 4.2հա իսկ լցակույտային տնտեսությանը՝ 4.8 հա:

Հանքավայրի տարածքի հողերը գտնվում են բնականոն վիճակում: Գոյություն չունեն հողն աղտոտող անթրոպոգեն կամ տեխնոգեն աղբյուրներ:

Հողային ծածկույթի վերաբերյալ այս բաժնում ներկայացված տեղեկատվությունը ընդունվում է որպես ելակետային:

5.10. Բուսական և կենդանական աշխարհ

5.10.1. Բուսական աշխարհ

Հանքավայրի շրջանը երիզող լեռնային բարձրավանդակների աշխարհագրական դիրքը նպաստում է բազմաբնույթ բուսական էկոհամակարգերի ձևավորման: Շրջանը գտնվում է ֆլորիստական տեսակետից միմյանցից խիստ տարբերվող Կովկասյան մեզոֆիլ, իրանական քսերոֆիլ և միջերկրածովյան ջերմախոնավասեր ֆլորիստիկ մարզերի շփման վայրում:

Ըստ բիոմորֆ հատկանիշների էկոհամակարգերի մեծ մասը (90%-ով) ունի խոտային կազմ: Ծառաթփային են միայն կաղնու, կեչու և գիհու մնացորդային անտառային խմբավորումները: Բնական էկոհամակարգերի կառուցվածքում գերիշխում են մարգագետինները, տափաստանները, մարգագետնատափաստանները [5-19]:

Ջրից ազատված ափամերձ բուսականությունն ունի երկրորդային ծագում: 1960 – 70թթ. ստեղծված արհեստական անտառմելիորատիվ տնկարկները (շուրջ 17 հազ. հա) կազմված են առավելապես սովորական սոճուց (*Pinus sylvestris*), չինական բարդուց (*Populus simoni*), չիչխանից (*Hippophae rhamnoides*), դեղին ակացիայից (*Caragana arborescens*) և բազմաթիվ այլ տեսակներից:

Դրանց խոտածածկում գերիշխում են ավազային համակեցություններին բնորոշ բուսատեսակները և տասնյակ մոլախոտային տեսակներ: Գերակշռող տեսակներից են թաթարական կաթնուկի, ավստրիական օշինդրի, մատնունու, իսկ առավել խոնավ աճատեղերում՝ բոշխի, բերենիկեի տարբեր տեսակները: Առափնյա ճահճացող մասերում և ջրափոսերում լողում են ջրոսպի կլորավուն կամ երկարավուն թիթեղանման բուսակները, գորտնուկի վառ կանաչ տերևներով և դեղին գեղեցիկ ծաղիկներով բուսակները:

Լեռնային տափաստանային համակեցություններում (ծովի մակարդակից 1900-2200մ) գերիշխում են շուղախոտ վալեսյան (*Festuca valesiaca*, **նկ.13**), բարակոսնուկ սանրաձև (*Koeleria cristata*, **նկ.14**), փետրախոտ տխուր (*Stipa tirsia*, **նկ.15**) և այլ հացազգիները: Դրանցում զգալի են տրագականտային աստրագալների և ուրցի

բազմաթիվ տեսակների մասնակցությունը: Բարձրության հետ տափաստանները փոխարինվում են լեռնային մարգագետնատափաստաններով, որտեղ համակեցություններում գերիշխում են շյուղախոտ վալեսյան (*Festuca valesiaca*), շյուղախոտ ոչխարային (*Festuca ovina*), բոշխ ցածր (*Carex humilis*), դաշտավլուկ մարգագետնային (*Poa pratensis*) և այլ տեսակները:



Նկ. 13: Շյուղախոտ վալեսյան (*Festuca valesiaca*)



Նկ.14: Բարակոտնուկ սանրաձև (*Koeleria cristata*)



Նկ.15: Փետրախոտ տխուր (*Stipa tirsia*)

Շուրի մակարդակից 2300 մետրից բարձր բուսականության բնույթն աստիճանաբար փոխվում է դեպի մերձալպյան մարգագետինները, որոնց առավել տիպիկ ներկայացուցիչներից են բարակոտնուկ սանրաձև (*Koeleria cristata*), դաշտավլուկ ալպյան (*Poa alpina*), գարի մանուշակագույն (*Hordeum violaceum*),

բրոմոպսիս խայտաբղետ (*Bromopsis variegata*), քոսքոսիկ կովկասյան (*Scabiosa caucasica*), ոգնախոտ կծկավոր (*Dactylis glomerata*), զանգակ խմբված (*Campanula glomerata*), թթվիճ խոշորածաղիկ (*Betonica macrantha*), երեքնուկի (*Trifolium*) տարբեր տեսակներ և այլն:

2700-3200մ բարձրությունները զբաղեցնում են ալպյան ցածրախոտ մարգագետինները և ալպյան գորգերը, ուր հաճախ հանդիպում են եռատամ (*Campanula tridentata*), խատուտիկ Ստևենի (*Taraxacum stevenii*), բերենիկե բոգային (*Veronica gentianoides*), ջուղախոտ ռիսարային (*Festuca ovina*), բոշխ տխուր (*Carex tristis*) և մի շարք այլ տեսակներ: Լեռնային լանջերի որոշ ձորերում հանդիպում են թփուտներ՝ կազմված հիմնականում մասրենու (*Rosa spinosissima*, *R.canina*) և ասպիրակի (*Spiraea crenata*) տեսակներից:

Թփուտները լավ են արտահայտված լճի հյուսիս-արևելյան ափին, Սևանի և Արեգունու լեռնաշղթաների լանջերին և Արտանիշ թերակղզում: Այդպիսիք են՝ արոսենու (արոսենի Կուզնեցովի (*Sorbus kuznetsovii*), արոսենի, ծտախնձոր (*S.aucuparia*), արոսենի Հայաստանի (*S.hajastana*), արոսենի հունական, ասպապ (*S.graeca*), մասրենու (*Rosa spinosissima*, *R.canina*), ասպիրակի (*Spiraea crenata*), ալոճենու (*Crataegus orientalis*), ուռենու (*Salix caprea*) և մի շարք այլ թփատեսակների համակեցությունները:

Ջրի Կոնգլոբրեկչիանների հանքավայրի շրջանը գտնվում է տափաստանային բուսածածկի սահմաններում (**նկ.16**):

5.10.2. Կենդանական աշխարհ

Կենդանական աշխարհը բազմազան է, հարուստ էնդեմիկ տեսակներով:


«Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում հաշվարկվում են խիտունջների և լորձնամույրուսկների խմբին պատկանող փափկամարմինների 43 և հողվածոտանիների 639 տեսակներ [20-22]:

Երկկենցաղները ներկայացված են 4 տեսակներով, որոնք պատկանում են Ցատկողների (*Salientia*) կարգին՝ լճագորտ (*Rana ridibunda*, **նկ.17**), փոքրասիական գորտ (*Rana macrocnemis*), կանաչ դոդոշ (*Bufo viridis*, **նկ.18**), Շելկովնիկովի ծառագորտ (*H.a.shelkovnikovi*):

Շրջանում հանդիպում են սողունների 16 տեսակներ, որոնցից 11-ը պատկանում են մողեսների (*Lacertilia*, **նկ. 19**), իսկ 5-ը՝ օձերի (*Serpentes*) կարգին:

ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված է Հայկական տափաստանային իժը (*Vipera (Pelias) eriwanesis*, **նկ.20**), որը հանդիպում է ՀՀ Գեղարքունիքի մարզում: Այս տեսակը հանդիպում է հանրապետության հյուսիսարևմտյան, կենտրոնական և հարավային շրջաններում, հիմնականում լեռնատափաստանային լանդշաֆտներում և բարձրադիր մարգագետիններում՝ ծ.մ. 1200–3000 մ. բարձրության վրա:

Հայաստանում բնակեցվում է խիստ քարքարոտ, լեռնաքսերոֆիտային տափաստաններում և ալպիական մարգագետիններում: Հանդիպում է նաև լեռնային նոսրանտառներում, լեռնալանջերի քարերի ցրվածքների, սրածայր աստրազալների և այլ չորային բույսերի արանքներում:



ԲՆԱԿԱՆ ԲՈՒՍԱԾԱԾԿԻ ՏԻՊԵՐ

- Մարգագետնային բուսականություն
 - 1 Յաճրալայյան (էնթալայյան) հացազգիների և տարախոտա-հացազգային մասնակցությամբ *Bromopsis variegata* (Bieb.) Holub, *Hordeum violaceum* Boiss. et Huet, *Anemonastrum fasciculatum* (L.) Holub, *Betonica macrantha* C. Koch, *Veronica*, *Gentiana*, *Cephalaria*, *Inula*, *Myosotis* ցեղի տեսակների հետ համատեղ
 - 2 Անտառային խառը մշակարույսեր, մասնակցությամբ՝ (*Pinus pallasiana* D. Don, *P. banksiana* Lamb., *Fraxinus excelsior* L., *Hippophae (S) rhamnoides* L., տեսակներ *Salix*, *Acer*, *Ulmus* և ավազուտային տարախոտերի
- Քսերոֆիլ նոսրանտառային բուսականություն
 - 3 Գիհու խառը, մասնակցությամբ՝ *Juniperus polycarpus* C. Koch, *J. oblonga* Bieb., *J. hemisphaerica* J. et C. presl, *J. foetidissima* Willd., *J. Sabina* L., *Ephedra procera* Fisch. et Mey.
- Տափաստանային բուսականություն
 - 4 Հացազգային, տարախոտա-հացազգային, մասնակցությամբ՝ *Festuca valesiaca* Gaudin, *F. ovina* L., *Koeleria albovii* Domin, *K. cristata* (L.) Pers., *Bothriochloa ischaemum* (L.) Keng, *Stipa capillata* L., *S. lessingiana* Trin. et Rupr., *S. tirsia* Stev., *Elytrigia trichophora* (Link) Nevski, *Galium verum* L., տեսակներ *Agropyron*, *Andropogon*, *Scabiosa*, *Veronica*, *Artemisia*, *Achillea*, *Astragalus*
- Գյուղատնտեսական ակտիվ օգտագործվող (վարելահող, բազմամյա տնկարկ) տարածքներ

Նկ.16: Բնական բուսածածկերի տիպերի սխեման:

Հազվադեպ հանդիպում են նաև մշակվող լանդշաֆտներում՝ քարերի կույտերի տակ: Որպես թաքստոցներ օգտագործում է կրծողների բները, քարերի տակի դատարկությունները, տարբեր թփերի մերձարմատային մասերը, ժայռերի և հողի ճեղքերը և այլն (Econews.am):

Ջիլի հանքավայրի տարածքում այս տեսակը չի հայտնաբերվել: ՀՀ Գեղարքունիք մարզի Կախակն և Կուտակյան գյուղերի շրջանում հանդիպել են երկու անգամ:

Կաթնասունները ներկայացված են 44 տեսակով, այդ թվում միջատակերներ 7 տեսակ, կրծողներ 15 տեսակ, նապաստակներ 1 տեսակ, չղջիկներ 7 տեսակ, զիշատիչներ 11 տեսակ, ամբակավոր կաթնասուններ 3 տեսակ:

Սևանա լճի ձկները ներկայացված են սաղմոնազգի - Salmonidae, սիգազգի - Coregonidae և ծածանազգի - Cyprinidae ընտանիքներով:

Տարածքի կաթնասունների տեսակը որոշվել է ակնադիտորեն հանդիպելու ժամանակ, սննդի մնացորդների և կղանքի հետքերով:

Թռչունները որոշվել են ակնադիտորեն և արձակված ձայներով: Թռչուններից հանդիպել են լորը (*Coturnix coturnix* L., **նկ. 21**), Սովորական հողմավոր բազե (*Falco tinnunculus* L. **նկ. 22**), Սովորական կկու (*Cuculus canorus* L.), Սև ագռավ (*Corvus corax* L.) Սովորական կաշաղակ (*Pica pica* L.) Սովորական սարյակ (*Sturnus vulgaris* L.) Ժայռային ծիծեռնակ (*yonoprogne rupestris* Scop.):

Գրականության տվյալների համաձայն Սևանի հյուսիս – արևելյան ափի շրջանում՝ մինչև Սոթքի լեռնանցք, գրանցված են կարմիրգրքային տեսակներ, մասնավորապես՝ Տափաստանային մկնաճուռակ (*C.macrourus*Gm.), Մարգագետնային մկնաճուռակ (*C. pigargus* L.), Տափաստանային արծիվ (*Aquila nipalensis* Hodgs.) Քարարծիվ (*A. chrysaetus* L.), Բվեճ (*Bubo bubo* L.) [15]

Սողուններն ու երկկենցաղները անմիջական դիտարկմամբ:

Կենդանական աշխարհի վերաբերյալ տեղեկատվությունը ստացվել են նաև տեղի մասնագետների, որսորդների և հովիվների հետ խորհրդակցելով:

Կաթնասուններից երկու անգամ հանդիպել է **աղվեսը (*Vulpes vulpes*):** Հանդիպման վայրը արձանագրվել է Ծափաթաղ բնակավայրից հյուսիս:

Նապաստակը (*Lepus europaeus*) գրանցվել է հանքավայրի հյուսիսային շրջաններում:

Գայլ (*Canis lupus*) չի հանդիպել, սակայն հետքերը վկայում են դրա գոյության մասին:

Պարբերաբար հանդիպում են **սովորական և թփուտային** դաշտամուկ, բները հանդիպում են հացահատիկա-տարախոտային բուսականությամբ պատված վայրերում:

Լեռնատափաստանային գոտու հիպսոմետրի բարձրադիր գոտիները ու լեռնային մարգագետինները բնութագրվում են կենդանիների ավելի աղքատ տեսակային կազմով, քան Հայաստանի այլ լանդշաֆտային գոտիները: Հանքավայրի շրջանում հավաքվել և դիտարկվել են անողնաշարավորների սահմանափակ թվով տեսակներ:

Դրանք հիմնականում ներկայացված են Սևանի լեռնաշղթայի տվյալ լանդշաֆտներին բնորոշ փափկամարմիններով և միջատների փոքրաթիվ տեսակներով: Դիտարկված միջատների հիմնական մասը դեռևս հունիս ամսին ներկայացված էին թրթուրային փուլերով, քանի որ երկարատև զով զարնան

պայմաններում միջատների զգալի մասի անհատական զարգացման տևողությունը ավելացել է:



Նկ.17: Լճազորս (*Rana ridibunda*)



Նկ. 18: Կանաչ դոդոշ (*Bufo viridis*)



Նկ.19: Մողես (*Lacertilia*)



Նկ.20: Հայկական տափաստանային իծ (*Vipera eriwanesis*)



Նկ.21: Լոր (*Coturnix coturnix L.*)



Նկ.22: Սովորական հողմավոր բազե (*Falco tinnunculus L.*)

Այս տարածքում ուղղաթևերից հանդիպել են՝ *Calliptamus italicus*, *Tettigonia viridissima*, *Grillus* spp. տեսակների ներկայացուցիչներ, բզեզներից՝ *Carabidae*,

Scarabaeidae, Meloidae, Silphidae ընտանիքների մի քանի տեսակ, թիթեռներից՝ Papilionidae, Lycaenidae, Nymphalidae ընտանիքների երեք տեսակ:

Ի տարբերություն միջատների, զով և խոնավ կլիմայական պայմանները նպաստավոր են փափկամարմինների համար:

Տվյալ լանդշաֆտային գոտուն բնորոշ են փափկամարմինների 21 տեսակներ ([Акрамовский Н.Н. Фауна Армянской ССР, Моллюски. Ереван 1976] չնայած մեր կողմից հավաքվել են դրանցից 10-ը)՝ *Vertigo substriata*, *Columella edentula*, *Truncatellina cylindrical*, *Truncatellina callicratis*, *Orcula doliolum*, *Pupilla muscorum*, *Pupilla inops*, *Vallonia costata*, *Vallonia pulchella*, *Nesovitrea petronella*, *Nesovitrea hammonis*, *Cionella lubricelia*, *Pyramidula rupestris*, *Phenacolimax annularis*, *Limax flavus*, *Vitrinoides monticola*, *Deroceras melanocephalum*, *Hyrcaolestes orientalis*, *Euomphalia selecta*, *Fruticocampylaea narzanensis*, *Imparietula brevior*:

Դիտարկված փափկամարմինների բոլոր տեսակները պատկանում են տարածաշրջանի լեռնատափաստանային և լեռնամարգագետնային գոտիներին բնորոշ տեսակների շարքին:

Դրանց մի մասը՝ *Columella edentula*, *Pupilla muscorum*, *Vallonia costata* և *Nesovitrea petronella*, լայնորեն տարածված են ողջ հանրապետության տարածքում և համապատասխան գոտիներում բավականին մեծաքանակ են:

5.11. Վտանգված էկոհամակարգեր, հատուկ պահպանվող տարածքներ

Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնման ու պահպանման նպատակով 1978թ ստեղծվել է «Սևան» Ազգային պարկը, որի տարածքում կան 4՝ «Նորաշենի», «Լիճք-Արգիճի», «Գիլլի», «Արտանիշի» արգելոցներ և 3՝ «Գավառագետի» և «Գիլիկաղնուտային ռելիկտային» և «Նորաշենի» արգելավայրերը (<https://hy.wikipedia.org/wiki/>):

Մինչև 1997թ Սևան ազգային պարկի տարածքում գտնվող անտառային ֆոնդի հողերը տնօրինում էին Սևանի, Նորատուսի, Մարտունու, Վարդենիսի և Ճամբարակի անտառտնտեսությունները: Վերջիններս 1997 թ. լուծարվում են (բացի Ճամբարակի անտառտնտեսությունից) և դրանց գույքը, ինչպես նաև համապատասխան տարածքները հաշվեկշռից հաշվեկշիռ փոխանցվում է Սևան ազգային պարկին: Պարկին են հանձնվել նաև Սևանա լճի հանգստյան գոտու առափնյա տնտեսության տարածքները և գույքը:

Պարկի տարածքի բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության գիտական ուսումնասիրության, պահպանության, պաշտպանության, վերականգնման, վերարտադրության, հաշվառման, գույքագրման, դիտանցի, ինչպես նաև պարկի բնական պաշարների կայուն օգտագործման ապահովումը իրականացնում է «Սևան ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը: Այն շահույթ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող բնապահպանական, գիտահետազոտական, գիտաճանաչողական կազմակերպություն է, որը գործում է ՀՀ Սահմանադրության, «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքների, ՊՈԱԿ-ի կանոնադրության և այլ իրավական ակտերի հիման վրա:

«Սևանա լճի մասին» ՀՀ օրենքով (15-ը մայիսի 2001 թ.) ազգային պարկի տարածքը ամբողջությամբ մտել է Սևանի էկոհամակարգի Կենտրոնական գոտու մեջ, սահմանվելով որպես քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտ:

Սևան ազգային պարկի սահմաններում է գտնվում Հարավային Կովկասի խոշորագույն, բարձրադիր քաղցրահամ լիճը՝ Սևանը, որի ծավալը 33,2 կմ³ է, մակերեսը՝ 1238 կմ²: Լիճը Արտանիշի և Նորատուսի հրվանդանների միջև ձգված ստորջրյա պատնեշով՝ Շորժայի թմբով, բաժանվում է երկու մասի՝ հարավարևելյան կամ Մեծ Սևան (20.4 կմ³), հյուսիսարևելյան կամ Փոքր Սևան (12.8 կմ³): Լճի առավելագույն խորությունը 79.4 մ է (Փոքր Սևան), միջին խորությունը՝ 26.2 մ, ավի շրջագիծը մոտ 230 կմ:

Սևանա լիճ են թափվում 28 գետ և գետակներ, որոնցից 4-ը՝ Փոքր Սևան, 24-ը՝ Մեծ Սևան:

Լճից դուրս է գալիս մեկ գետ՝ Հրազդանը:

Սևան ազգային պարկի տարածքը բաժանվում է 4 տարածքագործառնական գոտիների՝ արգելոցներ, արգելավայրեր, ռեկրեացիոն և տնտեսական: Պարկի տարածքում կան 4 արգելոցներ՝ «Նորաշենի», «Լիճք-Արգիչի», «Գիլլի» և «Արտանիշի», որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 7464 հա, որից ցամաքային տարածքը՝ 4289 հա, իսկ ջրայինը՝ 3175 հա, 2 արգելավայրեր՝ «Գավառագետի» և «Գիհի-կաղնուտային ռելիկտային», որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 2652 հա, որից ցամաքային տարածքը՝ 2359 հա, իսկ ջրայինը՝ 293 հա, 4753 հա ընդհանուր մակերեսով ռեկրեացիոն և 11266 հա ընդհանուր մակերեսով տնտեսական գոտի:

«Սևան» ազգային պարկը տեղծվել է 1978 թ-ին, որի տարածքը՝ Սևանա լճի հայելու հետ միասին կազմում է 147,343 հա: Սևանա լիճը ամբողջությամբ ներառված է պահպանվող գոտու տարածքի մեջ, որը կազմում է 342,920 հա: Ստեղծման հիմնական նպատակն է պահպանել էկոհամակարգը, Սևանա լճի քաղցրահամ ջրային ռեսուրսները և էնդեմիկ ձկների (Սևանի իշխան, Սևանի բեղլու, Սևանի կողակ), բույսերի և կենդանիների տեսակները, այդ թվում ճայերն ու թռչունները:

«Գիհու նոսրանտառային» պետական արգելավայրը ստեղծվել է 1958 թ-ին և զբաղեցնում է 3312 հա տարածք: Այն գտնվում է Արեգունու և Սևանի լեռնաշղթաների հարավային լանջերին (1900մ-2200մ)՝ Ծափաթաղ գյուղի մոտակայքում: Արգելավայրի ստեղծման նպատակն է պահպանել գիհու տարբեր տեսակների բնական հազվագյուտ ռելիկտային անտառները:

Սևան ՋԿՏ-ն հարուստ է նաև բնության հուշարձաններով: Այստեղ կան 7 երկրաբանական, 6 ջրաերկրաբանական, 1 ջրաբանական և 1 կենսաբանական հուշարձաններ:

Նորաշենի արգելոց

«Նորաշենի» արգելոցը գտնվում է ազգային պարկի հյուսիսարևմտյան հատվածում և զբաղեցնում է 839 հա մակերես, որից ցամաքային տարածքը կազմում է 341 հա, իսկ ջրայինը՝ 498 հա: Սահմանի ընդհանուր երկարությունը 12.7 կմ է: Արգելոցի տարածքը ձգվում է մոտ 3.9 կմ երկարությամբ և 3.0 կմ լայնությամբ: Արգելոցի նպատակն է ապահովել թռչունների (մասնավորապես հայկական որորի, քանի որ այն այստեղ բնադրող միակ էնդեմիկ թռչունն է) բնականոն ապրելակերպն ու վերարտադրությունը:

Լիճք-Արգիշի արգելոց

«Լիճք-Արգիշի» արգելոցը գտնվում է ազգային պարկի հարավարևմտյան հատվածում՝ Ծակքար, Լիճք և Արգիշի գետերի գետաբերանային հատվածներում և զբաղեցնում է 1175 հա մակերես, որից ցամաքային տարածքը կազմում է 482 հա, իսկ ջրայինը՝ 693 հա: Սահմանի ընդհանուր երկարությունը 13.3 կմ է: Արգելոցի տարածքը ձգվում է մոտ 3.8 կմ երկարությամբ և 3.7 կմ լայնությամբ: Արգելոցի նպատակն է ապահովել Լիճքի հանքային աղբյուրների, Արգիշի և Լիճք գետերի գետաբերանային հատվածում մնացորդային լճակների ջրաճահճային և ջրային բուսականության, թռչունների բնադրավայրի պահպանությունը, ինչպես նաև արժեքավոր և հազվագյուտ ձկնատեսակների՝ Սևանի իշխանի, Սևանի կողակ և Սևանի բեղուի ձվադրումն ու զարգացումը:

Գիլլի արգելոց

«Գիլլի» արգելոցը գտնվում է ազգային պարկի հարավարևելյան հատվածում՝ Գիլլի ջրանցքի, Մասրիկ և Գեղամասար գետերի գետաբերանային հատվածներում և զբաղեցնում է 1810 հա մակերես, որից ցամաքային տարածքը կազմում է 1325 հա, իսկ ջրայինը՝ 485 հա: Սահմանի ընդհանուր երկարությունը 23.3 կմ է: Արգելոցի տարածքը ձգվում է մոտ 10.4 կմ երկարությամբ և 1.8 կմ լայնությամբ: Արգելոցի նպատակն է ապահովել Մասրիկ և Գեղամասար գետերի գետաբերանային հատվածների պահպանությունը՝ արժեքավոր և հազվագյուտ ձկնատեսակների ձվադրման և զարգացման համար, ինչպես նաև հարակից ճահճուտների պահպանությունը, որպես թռչունների բնադրավայր:

Արտանիշի արգելոց

«Արտանիշի» արգելոցը գտնվում է ազգային պարկի արևելյան մասում՝ ընդգրկելով է Արտանիշի թերակղզին (բացառությամբ ձախակողմյան հատվածի՝ Շորժայի համայնքային հողերը) և Արտանիշի լճախորշի թերակղզուն հարող մասը: Տարածքը զբաղեցնում է 3640 հա մակերես, որից 2142 հա ցամաքային տարածք, իսկ 1498 հա՝ ջրային: Սահմանի ընդհանուր երկարությունը 25.9 կմ է: Արգելոցի տարածքը ձգվում է մոտ 11.7 կմ երկարությամբ և 7.8 կմ լայնությամբ: Արգելոցի նպատակն է ապահովել Արտանիշ թերակղզու մինչսառցային ժամանակաշրջանի բազմազան ռելիեֆային բուսականության, գիհու նոսրանտառների և տափաստանների, ինչպես նաև որպես հազվագյուտ կենդանիների (գորշ արջ, այծյամ, վարազ, բեզուարյան այծ, ազնվացեղ եղջերու և այլն) միգրացիայի միջանցքի պահպանությունը:

Արգելավայրեր

Գավառագետի արգելավայր

«Գավառագետի» արգելավայրը գտնվում է ազգային պարկի Նորատուսի թերակղզու ավիամերձ և Գավառագետի գետաբերանային հատվածում, զբաղեցնում է 845 հա մակերես, որից ցամաքային տարածքը կազմում է 552 հա, իսկ ջրայինը՝ 293 հա: Սահմանի ընդհանուր երկարությունը 26.4 կմ է: Արգելավայրի տարածքը ձգվում է մոտ 7.5 կմ երկարությամբ և 0.5-3.5 կմ լայնությամբ: Արգելավայրի նպատակն է ապահովել Գավառագետի գետաբերանային հատվածում մնացորդային լճակների

պահպանությունը և Նորատուս թերակղզու ափամերձ հատվածի թռչունների բնադրավայրերը, ինչպես նաև արժեքավոր և հազվագյուտ ձկնատեսակների ձվադրումն ու զարգացումը:

Գիհի-կաղնուտային ռելիկտային արգելավայրը

«Գիհի-կաղնուտային ռելիկտային» արգելավայրը գտնվում է ազգային պարկի արևելյան մասում Դարանակ գյուղի շրջանում զբացեցնում է 1807 հա մակերես: Տարածքը կտրտված է, հանդես են գալիս տարբեր չափերի 5 հատվածներ, որոնց սահմանների ընդհանուր երկարությունը կազմում է 55.0 կմ: Արգելավայրի նպատակն է ապահովել Սևանա լեռնաշղթայի հարավարևմտյան լանջերի վրա տարածվող գիհու և կաղնու ռելիկտային բնական նոսր անտառների պահպանությունը:

Ռեկրեացիոն գոտիներ

Պարկի ռեկրեացիոն գոտիների ընդհանուր տարածքը կազմում է 4753 հա, որոնք առանձին հատվածներով տարածվում են լճի ափամերձ երկայնքով: Պարկի տարածքը ներառում է թվով 8 ռեկրեացիոն գոտիներ:

Տնտեսական գոտիներ

Տնտեսական գոտու տարածքներն ընկած են հետևյալ հատվածներում՝ Սևան քաղաքից Ծովագյուղ, Լճաշենից Հայրավանք, Նորատուս թերակղզուց Ծակքար գետ, Արգիշի գետից Ծովակ գյուղ և Գեղամասար գետից Արտանիշ թերակղզի, ինչպես նաև Արեգունու հարավարևմտյան լեռնալանջերի վրա: Այս հատվածներում տնտեսական գոտու ընդհանուր մակերեսը կազմում է 11.184 հա:


Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության համար Սևանա լիճը բնապահպանական, տնտեսական, առողջապահական, սոցիալական, գիտական, պատմամշակութային, գեղագիտական, կլիմայական, ռեկրեացիոն և հոգևոր արժեք ունեցող ռազմավարական նշանակության էկոհամակարգ է, այդ պատճառով սահմանվել է Սևանա լճի և դրա ավազանի վերաբերյալ մի շարք իրավական նորմեր: «Սևանա լճի մասին» օրենքի համաձայն, սահմանվել են 3 բնապահպանական գոտիներ (2001թ., Մայիսի 15)՝ կենտրոնական գոտի, անմիջական ազդեցության գոտի և ոչ անմիջական ազդեցության գոտի (**նկ.23**):

Կենտրոնական գոտին «Սևան» ազգային պարկի տարածքն է, որի տարանջատման նպատակն է վերականգնել և պահպանել Սևանա լճի էկոհամակարգի բնական վիճակը՝ ջրի որակը, լճի և ափամերձ ցամաքային տարածքների բնական ու արհեստական լանդշաֆտները և կենսաբազմազանությունը: Կենտրոնական գոտու տարածքը համապատասխան ռեժիմով պահպանվող սահմանափակ տնտեսական և քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտ է:

Անմիջական ազդեցության գոտին ընդգրկում է կենտրոնական գոտու սահմաններից դուրս գտնվող ջրհավաք ավազանը՝ մինչև ջրբաժան, որտեղ ցանկացած գործունեություն ուղղակի կամ անուղղակի ճանապարհով ազդում է Սևանա լճի, նրա մեջ թափվող գետերի հիդրոֆիզիկական, հիդրոքիմիական, հիդրոկենսաբանական, սանիտարաթունաբանական, հիգիենիկ և այլ որակական ու քանակական

ցուցանիշների վրա: Ջիլի կոնգլոբրեկչիանների հանքավայրը գտնվում է Անմիջական ազդեցության գոտու սահմաններում:

Ոչ անմիջական ազդեցության գոտին Սևանա լճի ջրհավաք ավազանից դուրս գտնվող լճի վրա հնարավոր ազդեցություն ունեցող Հայաստանի Հանրապետության տարածքն է: Ոչ անմիջական ազդեցության գոտու տարանջատման նպատակը Սևանա լճի վրա հնարավոր բացասական ազդեցության կանխումն է:



Նկ.23: Սևան ՋԿՏ (Ջրավազանային կառավարման պլան)-ի ջրհավաք ավազան (թեմատիկ ամփոփագիր euwi-east-am-04)

Ջիլի կոնգլոբրեկչիանների հանքավայրը գտնվում է անմիջական ազդեցության գոտու սահմաններում:

Արդյունահանման աշխատանքների համար հայցվող տարածքում իրականացված հետազոտությունը ցույց է տվել, որ.

Ա. տարածքը տեղակայված չէ պատմամշակութային հուշարձանների սահմաններում, հատուկ պահպանվող, անտառային, կամ ընդհանուր օգտագործման կանաչ տարածքներում,

Բ. Հանքավայրի տարածքում Կարմիրգրքային բուսական և կենդանական տեսակներ չեն հայտնաբերվել:

Արտանիշի արգելոցից հանքավայր գտնվում է մոտ 7 կմ հեռավորության վրա :

5.12. Պատմամշակութային և բնական հուշարձաններ

Գեղարքունիքի մարզը և Սևանի ավազանը հարուստ են բնական հուշարձաններով: Կան 15 բնության հուշարձաններ, որից 7-ը՝ երկրաբանական, 6-ը՝ ջրաերկրաբանական, 1-ը՝ ջրագրական և 1-ը՝ կենսաբանական. - Վարդենիսի լեռնաշղթայի հրաբխային և խարամային կոները(Աժդահակ,Կարմրասար, Սպիտակասար լեռնագագաթները), - Լանջաղբյուր, Կարմիր գյուղ, Գեղարքունիք գյուղերի շրջակայքի ժայռային մերկացումները, - Սևանի լեռնաշղթայի լանջերի (Շորժա գյուղի շրջակայքում) օֆիոլիտային ապարների մերկացումները, - Արտանիշի թերակղզու կրաքարերի մերկացումները, - Սպիտակասար լեռնագագաթի արևելյան մասում օբսիդիանների մերկացումները, - Լճաշեն գյուղի, Գավառքաղաքի շրջակայքի էյուվիալ քարացրոնները (չինգիլներ), - Գրիձոր, Արգիշի գետերի կիրճերը, - Մարտունի, Գրիձոր, Գեղարքունիք, Աստղածոր, Վարդենիս գետերի վերին հոսանքների տաշտակաձև հովիտները, - Արեգունի լեռնաշղթայի կաղնու և գիհու նոսր անտառները, Արեգունու, Սևանի, Փամբակի լեռնաշղթաների անտառային տարբեր մնացուկային ձևերը, - Մասրիկ, Վարդենիս գետեր հովիտների ճահճոտմարգագետինները և եղեգնուտները, - Գեղամա լեռնաշղթայի արևելյան լանջերի քարացրոնները՝ «լուսնային լանդշաֆտ»-ը, - Արգիճի գետիոլորաններ և ճահճոտհովիտը, Վարդենիսի լեռնաշղթայի հյուսիսային լանջերից հոսող գետերի կիրճերը՝ անտառային մնացուկային ձևերով: Նախատեսվող գործունեության տարածքին ամենամոտ բնության հուշարձանը՝ Արտանիշի թերակղզու կրաքարերի մերկացումները, գտնվում են մոտ 8 կմ հեռավորության վրա:

Շողակաթ համայնքում կան հետևյալ բնական, պատմական, մշակութային հուշարձանները (**աղ.16**). Սուրբ Աստվածածին եկեղեցի 17-րդ դար, գերեզմանոց խաչքարերով՝ 10-18-րդ դար, Դամբարանադաշտ՝ ք.ա. 2-1 հզմ, Մատուռ՝ 10-14-րդ դար: Սևանա լճի ափամերձ գյուղերում և շրջակայքում պահպանվել են մ.թ.ա. հզմ բերդի ավերակներ, դամբարաններ /մ.թ.ա. 2-1-ին հզմ/, եկեցեղի /17-րդ դար/, մատուռներ և այլ հնություններ:

Աղյուսակ 16

Շողակաթ համայնքի պատմամշակութային հուշարձանների ցանկ				
1	2	3	4.	5.
1.	Գերեզմանոց	16-17-րդ դդ.	գ. մ.	դպրոցից 200մ հս-ամ ճանապարհի եզրին(3կմ)
2.	Դամբարանադաշտ	մթա 2-1 հզմ	հս մասում	Շորժա-Աղբերք ճանապարհի 2 կողմերում, հայկական և ադրբեջանական գերեզմանոցների միջակայքի սարալանջին(4,5կմ)
3.	Դամբարանադաշտ	մթա 2-1 հզմ	1կմ հավ-աե	Ավազահանքերի մոտ, Արտանիշ թերակղզի տանող դաշտամիջյան ճանապարհից ձախ (2կմ)
4.	Եկեղեցի	17-րդ դ.	աե դամասում	Գյուղի եզրին, սարիստորոտին (4,58կմ)
5.	Խաչքար	10-րդ դ.		Ագուցված հս պատին, արտաքուստ
6.	Խաչքար	10-11-րդ դդ.		Ագուցված ամ պատին, արտաքուստ, հորիզոնական դիրքով

7.	Խաչքար	10-11-րդ դդ.		Ագուցված ամ պատին, արտաքուստ
8.	Խաչքար	13-14-րդ դդ.		Եկեղեցու ներսում, դրված գլխիվայր, արձանագիր
9.	Գերեզմանոց	10-17-րդ դդ.		Եկեղեցու շուրջը
10.	Խաչքար	12-րդ դ.		վերնջնամասը՝ չի պահպանվել
11.	Խաչքար	միջնադար	գյուղի աեղամասում, 17դ. եկեղեցու մոտ տարածվող գերեզմանոցում	Թևավոր
12.	Խաչքար	1550թ.	գ. մ.	Մերգեյ Սարգսյանի տնամերձում
13.	Մատուռ	10-14-րդ դդ.	աեղամասում	գյուղի աե եզրին, եկեղեցուց 200մ հվ-աե, բլրի գագաթին(4,38կմ)
14.	Ամրոց դամբարանա դաշտ	Ք. ա. 2-1 հազ		Արտանիշի արգելոցի տարածքում 0.7հա(1,01կմ)
15.	Խաչքար	17-րդ դ.		Մերգեյ Սարգսյանի տնամերձում 5.7քմ
Զիլ բնակավայրի պատմամշակութային հուշարձանները (Հայաստանի կառավարության որոշում N 80, 9 հունվարի 2003 թ.)				
1.	Գերեզմանոց	15-18 դդ	հս-աե մասում	գյուղի եզրին, բարձունքին
2.	Խաչքար	15-16 դդ.		հենած գանգվածեղ ժայռաբեկորին, արձանագիր
3.	Խաչքար	15-16 դդ		խրված հողի մեջ
4.	Եկեղեցի	16-17 դդ	հս մասում	գյուղի հս եզրին, թեք սարավանջին
5.	Խաչքար Դլմիկի	15-16 դդ	գյուղի եզրի գերեզմանոցում, հիմնահողային ճանապարհի և աղբյուրի մոտ	արձանագիր
6.	Խաչքար	13-14 դդ.	Արտանիշ տանող ճանապարհից ձախ. մայրուղուց մոտ 30 մ հվ. խնձորենու տակ	տեղափոխված է Ղուշչի գյուղից

Հանքավայրի տարածքում և հարևանությամբ պատմամշակութային հուշարձաններ գրանցված չեն և չեն հայտնաբերվել (հավելված 1):

Զիլ բնակավայրի պատմամշակութային հուշարձանները գտնվում են գյուղի տարածքում, հանքավայրին ամենամոտ գտնվում է 15-18րդ դարի գերեզմանոցը, որի հեռավորությունը հանքավայրից կազմում է 4,0 կմ:

Մարզի գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողերի 16.9 տոկոսը (*աղ.17*): Մարզն իր մեջ ներառում է 5 քաղաք՝ Գավառ, Ճամբարակ, Մարտունի, Սևան, Վարդենիս և 87 գյուղական բնակավայրեր:

Աղյուսակ 17

*Մարզի հողային ֆոնդը ըստ նպատակային նշանակության**

Նպատակային նշանակություններ	Ընդամենը /հա/	Տոկոսային հարաբերությունը /%/
1. Գյուղատնտեսական նշանակության հողեր	345528.0	64.6
2. Բնակավայրերի հողեր	21530.9	4.02
3. Արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության	3690.7	0.69
4. Էներգետիկայի, կապի, տրանսպորտի և այլ կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների	1381.4	0.26
5. Հատուկ պահպանվող տարածքների հողեր	148600.1	27.78
6. Հատուկ նշանակության հողեր	259.6	0.05
7. Անտառային հողեր	11985.1	2.24
8. Ջրային հողեր	1321.0	0.25
9. Պահուստային հողեր	620.0	0.11
Ընդամենը հողեր	534916.8	100

**Աղբյուրը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի հողային հաշվեկշիռ:*

Ամենախոր իջվածքը Գետիկ գետի կիրճն է (1325մ), ամենաբարձր կետը՝ Ածղահակ լեռան գագաթը (3598մ): Բարձր լեռներ են Սպիտակասարը (3555մ), Վարդենիսը (3522մ), Գեղասարը (3446մ): Ամենաերկար գետերն են Արգիճին (51կմ), Գավառագետը (47կմ) և Մասրիկը (45կմ), առկա են նաև խառնարանային լճեր՝ Ածղահակ և Արմաղան (մինչև 50մ տրամագծով և 15մ խորությամբ):

ՀՀ Գեղարքունիքի մարզում է գտնվում բարձր լեռնային (բարձրությունը ծովի մակերևույթից 1900մ) եզակի էկոհամակարգով Սևանա լիճը, որի մակերեսը կազմում է 1.26 հազ. քառ. կմ ծավալը 35.8 մլրդ. խմ: Սևանա լիճը Հարավային Կովկասի քաղցրահամ ջրերի ամենամեծ ավազանն է, որը հանրապետության համար ունի առանձնահատուկ կարևորություն: Լիճը էական ազդեցություն ունի ողջ մարզի ոչ միայն բնապահպանական հավասարակշռության, այլ նաև տնտեսության վրա: Կենսաբանական բազմազանության պահպանությունն ուղղված է Սևանա լճի ավազանի բնական պաշարների երկարաժամկետ օգտագործման կարգավորմանը, որը կնպաստի ոչ միայն ավազանի, այլև ողջ հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացմանը:

Մարզի տարածքում է գտնվում «Սևան ազգային պարկը» (կազմավորվել է 1978թ-ին):

Այն զբաղեցնում է Սևանի միջլեռնային գոգավորության հատակը կազմող Սևանա լճի և դրա հատակից ազատված տարածքները: Մակերեսը կազմում է 145.9

հազ. հա, որից 24.9 հազ. հա. առափնյա ցամաքային տարածքներ են: Այստեղ պահպանվել են բույսերի 1600 և կենդանիների 330 տարատեսակներ:

Տարածքում շատ են հրաբխային կոները, որոնցից հայտնի են հատկապես Արմաղանն ու Աժդահակը, որոնց խառնարաններում գտնվում են համանուն լճերը: Գլխավոր լեռնաշղթաներն են Գեղամա, Արեգունի, Արևելյան Սևանի, Վարդենիսի: Սևանի ավազանն արգավանդ հողերով հարուստ է, հատկապես կարևոր է Մասրիկի դաշտը՝ 1900-2200 մ բարձրություններում: Այն կազմում է շուրջ 10000 հեկտար՝ մարզի վարելահողերի մոտ 12.3%:

Կլիման բարեխառն լեռնային է, ձմեռները ցուրտ են, առաջանում է կայուն ձնածածկույթ: Հունվարյան միջին ջերմաստիճանը -5° - -10° է: Ամառները տաք են, արևոտ: Միջին ջերմաստիճանն հասնում է $+18^{\circ}$ - $+20^{\circ}$: Տեղումները քիչ են՝ 400-450 մմ, իսկ բարձրադիր շրջաններում մինչև 1000 մմ, արևային օրերի քանակը կազմում է 125 օր:

Արդյունաբերության հիմնական ուղղությունը հանքագործական արդյունաբերությունն է: Օգտակար հանածոներից մեծ արժեք են ներկայացնում ոսկու (Սոթք), քրոմիտի (Շորժա), տորֆի, բազալտի, բնական շինանյութերի, հանքային ջրերի (Գավառ, Լիճք) և այլ պաշարները: Մետաղական հանքաքարերի արդյունահանման ոլորտում առաջավոր դիրք է զբաղեցնում «ԳԵՈՂՐՈՍՄԱՅՆԻՆԳ ԳՈԼԴ» ՍՊԸ-ն: Սոթքի ոսկու հանքավայրից տարեկան ստացվում է 4-5 տ ոսկի:

Գեղարքունիքի մարզն ունի առավելապես գյուղատնտեսական ուղղվածություն: Մարզում գյուղատնտեսությունում աշխատում է շուրջ 66 000 բնակիչ: Տարածաշրջանում լայն տարածում է գտել անասնաբուծությունը, մեղվաբուծությունը, ձկնարդյունաբերությունը /հիմնական հենքը Սևանա լիճն է/, և բուսաբուծությունը՝ հատկապես կարտոֆիլի ու հացահատիկի մշակությունը:

Գեղարքունիքի մարզը իրենից ներկայացնում է Հայաստանի ոչ խիտ բնակեցված մարզերից մեկը, բնակչության խտությունը կազմում է 44.5 մարդ/1ք.կմ: Մարզում բնակվում է 231.800.0 մարդ /01.01.2016թ./, որոնց մեծ մասը՝ /162,6/ հազար մարդ կամ 70,2%-ը գյուղական, իսկ 69,2 հազար մարդ կամ 29,8%-ը քաղաքային բնակավայրերում: Բնակչության թվաքանակում տղամարդիկ կազմում են 116,5 հազար մարդ, որը ընդհանուր բնակչության նկատմամբ՝ 50.2%, իսկ կանայք՝ 115,2 հազար մարդ, որը ընդհանուր բնակչության նկատմամբ՝ կազմում է 49.8%-ը:

Գեղարքունիքի մարզի բնակչության գերակշռող մասը գտնվում է 16-62 տարիքային սահմանում:

2020 թ. դրությամբ մարզում տարրական կրթություն ունեն 8086 մարդ, որը կազմում է բնակչության՝ 3,5 %-ը, հիմնական կրթություն ունեն 21170 մարդ՝ 9,0 %, միջնակարգ կրթություն ունեն 95513 մարդ՝ 41%, միջնակարգ մասնագիտական կրթություն ունեն 28330 մարդ՝ 12,2%, բարձրագույն կրթություն ունեն 30687 մարդ՝ 13,2%:

ՀՀ Գեղարքունիքի մարզի բնակչությունը հիմնականում հայեր են, որոնք կազմում է ընդհանուր բնակչության 99%-ը: Կան նաև ռուսներ, հույներ, եզդիներ և այլ ազգեր: Ազգային փոքրամասնությունները հիմնականում ունեն ամուսնական կապեր հայերի հետ և տեղի է ունեցել ազգային առաձևահատկությունների միաձուլում հայկական ազգային ավանդույթների հետ:

6.2. Ճամբարակ Համայնք

Ճամբարակ խոշորացված համայնքը Գեղարքունիքի մարզի 5 համայնքներից մեկն է: Համայնքը խոշորացվել է «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում 09.06.2017թ. ՀՕ-93-Ն կատարված փոփոխության արդյունքում՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ քաղաքային, Վահան, Թթուջուր, Գետիկ, Մարտունի, Այգուտ, Դպրաբակ, Չորավանք, Կալավան, Անտառամեջ գյուղական համայնքների և Արծվաշեն բնակավայրի միավորումից:

Համայնքի կենտրոնը Ճամբարակ քաղաքն է: Արծվաշենը Ղարաբաղյան պատերազմից հետո գտնվում է Ադրբեջանի վերահսկողության ներքո: Ճամբարակ համայնքը զբաղեցնում է 37860.68 կմ² տարածք: Բնակչությունը՝ 12416 մարդ:

Ճամբարակ քաղաքը ձևավորվել է երեք բնակավայրերի միացումից, դրանք են Կրասնոսելսկը, Վերին Ճամբարակն ու Ներքին Ճամբարակը (*նկ.25*): Կրասնոսելսկի նախկին անվանումներից են եղել՝ Միխայլովկան, Կարմիրը և Կրասնոսելսկը: Միխայլովկա գյուղը հիմնադրվել է 1740-1785 թվականներին Ռուսաստանի՝ Սամարայի և Սարատովի նահանգներից վերաբնակեցված Մոլդկանների կողմից: Մինչև 1988-1989 թվականները բնակչության հիմնական մասը կազմել են հայերը, որոնք բնակվել են հիմնականում Վերին և Ներքին Ճամբարակ գյուղերում, որը իր հերթին կազմավորվել է տավուշի մարզի Ներքին Կարմիր գյուղի անասնապահների կողմից: Համայնքում հայերից բացի բնակվել են նաև մալդկաններ, ադրբեջանցիներ, քրդեր, մորդովացիներ: Շրջանում բնակվող ադրբեջանցիների և մոլդկանների հեռանալուց հետո համայնքը վերաբնակվեցի Արծվաշենից, Բաքվից, Կիրովաբադից, Սումգայիթից, Շամխորից և Ադրբեջանի այլ շրջաններից տեղահանված փախստական հայերով:

Ճամբարակ համայնքում առկա է 1 գրադարան, մեկ արվեստի դպրոց, մեկ երաժշտական դպրոց, չորս նախադպրոցական հիմնարկներ, տասներկու հանրակրթական դպրոց:



Նկ.25: Ճամբարակ համայնքի համայնապատկերը

6.2.1. Ջիլ բնակավայր

Գտնվում է Սևանա լճի հյուսիս-արևելյան հատվածում՝ Ճամբարակից Վարդենիս տանող ճանապարհի միջնամասում (**Նկ.26**): 1988 թվականից հետո գյուղը հիմնականում վերաբնակեցվել է Ադրբեջանի Դաշքեսանի, Խանլարի և Շամքորի շրջանի գյուղերից բռնագաղթված բնակիչներով:

Ըստ ՀՀ 2011 թ. մարդահամարի արդյունքների՝ Ջիլի մշտական բնակչությունը կազմել է 615: Ներկայումս գյուղում առկա բնակչության թիվը՝ 587 է: Բնակիչները էթնիկ հայեր են:

Զբաղվածությունը հիմնականում անասնապահությունն է և հողագործությունը: Գործում է միջնակարգ դպրոց, մսուր - մանկապարտեզ և բուժկետ:

Ջիլի բնակավայրը Վարդենիս-Ճամբարակ M 14 մայրուղու հետ կապված է 2.4 կմ երկարությամբ անբարեկարգ ճանապարհով: Բնակավայրի ներսում գրունտե ճանապարհներ են: Բարեկարգման կարիք ունեն ճանապարհները, մանկապարտեզը, դպրոցը ինչպես նաև վարչական շենքը:



Նկ.26: Ջիլ բնակավայրի համայնապատկերը:

Ջիլի հանքավայրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտն ու հաշվետվությունը համայնքի բնակիչներին ներկայացվել է հանրային երեք քննարկումների ժամանակ: Այդ քննարկումներին ներկա են եղել համայնքի բնակիչներ, համայնքապետարանի և ՀՀ Գեղրաքունիքի մարզի մարզպետարանի ներկայացուցիչներ, որոնց «ԱՐԱՄ-ՇԻՆ2007» ՍՊ Ընկերության ներկայացուցիչները մանրամասն ներկայացրել են նախատեսվող աշխատանքների ծավալները, մեթոդիկան, շրջակա միջավայրին հասցվելիք վնասների չափը, դրանց մեղղման միջոցառումների ծրագիրը, սոցիալ – տնտեսական ծրագրերը ու աշխատատեղերի ստեղծման հարցը: Քննարկվել են

համայնքում առկա խնդիրները, որոնք ակնկալվում է լուծել ընկերության մասնակցությամբ:

Համայնքում իրականացված քննարկումները տեսաձայնագրվել են և կազմվել է արձանագրություն: Նախնական փուլի հանրային քննարկումների տեսաձայնագրություններն ու արձանագրությունները ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

Ջիլի կանգլոբրեկշիանների հանքավայրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը և դրան կից փաստաթղթերի փաթեթը կներկայացվի ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, ընդերքօգտագործման իրավունք հայցելու դիմումի հետ միասին:

7. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՊՈՏԵՆՑԻԱԼ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՄՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում հնարավոր են տեխնածին ճնշումներ մթնոլորտի, մակերևութային ջրերի, հողային ծածկույթի, բուսական և կենդանական աշխարհի, ինչպես նաև լանդշաֆտային ամբողջականության վրա:

7.1. Արտանետումները մթնոլորտ

Բացահանքից մթնոլորտ են արտանետվում փոշի և գազեր: Դրանց աղբյուրներն են հանդիսանում /ըստ նախագծի/`

- բացահանքը
- տրանսպորտը
- լցակույտերը

Օդային ավազան արտանետվող վնասակար նյութերն են`

- անօրգանական փոշի /օգտակար հանածոյի անջատումը զանգվածից, բուլդոզերայի, բարձման և տրանսպորտի աշխատանքներից, լցակույտերից/
- ազոտի և ածխածնի օքսիդներ և ածխաջրածիններ /դիզելային և բենզինային վառելիքով աշխատող մեքենաներից/

ա/ փոշու արտանետում

1.Բացահանքում կատարվում է օգտակար հանածոյի անջատումը զանգվածից հիդրավլիկ մուրճի օգնությամբ, որի ընթացքում առաջանում է 1440գ/ժամ փոշի: Երկու հիդրավլիկ մուրճ 6 ժամ անընդհատ աշխատանքի դեպքում փոշու քանակը կլինի`

$$Q_1 = 1440 \times 6 \times 2 = 17280 \text{ գ/ժամ կամ } 17280 : 3600 = 4.8 \text{ գ/վրկ:}$$

Տարեկան քանակը կլինի`

$$Q_{1տ} = 4.8 \times 3600 \times 260 \times 7 \times 0.3 \times 10^{-6} = 9.43 \text{ տ/տարի}$$

2.Բուլդոզերի աշխատանքից առաջացած փոշու քանակը չոր ապարների վրա կազմում է 900 գ/ժամ: Բուլդոզերի անընդհատ աշխատանքի տևողությունը հերթափոխում վերցվում է 4ժամ: Հետևապես կստանանք փոշու քանակը`

$$900 \times 4 = 3600 \text{ գ/ժամ, կամ } Q_2 = 3600 : 3600 = 1.0 \text{ գ/վրկ:}$$

Տարեկան քանակը կկազմի`

$$Q_{2տ} = 1.0 \times 7 \times 3600 \times 260 \times 0.3 \times 10^{-6} = 1.96 \text{ տ/տարի:}$$

3.Բացահանքում ավտոինքնաթիով դատարկ ապարների տեղափոխման ժամանակ փոշեառաջացման ծավալը որոշվում է հետևյալ բանաձևով`

$$Q_3 = \frac{C_1 \times C_2 \times C_3 \times N \times L \times x_{q1} \times C_6 \times C_7}{3600} + C_4 \times C_5 \times C_6 \times q_2 \times F_0 \times n_1, \text{ գր/վրկ}$$

Որտեղ` C₁- միավոր ավտոտրանսպորտի միջին բեռնունակությունը, C₁= 1.0;

C₂– տեղանքում տրանսպորտի տեղաշարժման միջին արագությունը հաշվի առնող գործակից C₂ = 1.0;

- C₃- ճանապարհների վիճակը հաշվի առնող գործակից/աղ.11/ C₃ = 0.5;
- C₄ – թափքում բեռի պրոֆիլը հաշվի առնող գործակից /աղ. 11/ C₄=1.3;
- C₅ – նյութի շրջափչման արագության գործակից, C₅=1.0;
- C₆ – նյութի մերձակերևույթային շերտի խոնավության գործակից, C₆=0.6;
- N – տրանսպորտի երթերի թիվը ժամում, N=2.8;
- L – վազքի միջին երկարությունը L=0.5կմ;
- q₁ - 1կմ վազքի դեպքում փոշու արտանետումները,q₁=1450գ;
- q₂ -հարթակի վրա նյութի փաստացի մակերևույթի միավորից փոշեգոյացումը, q₂=0.002գ/մ². վրկ;
- F- հարթակի միջին մակերեսը, F =10մ²;
- n- բացահանքում աշխատող ավտոմեքենաների քանակը, n=1;
- C₇ – մթնոլորտ մուտք գործող փոշու քանակը հաշվի առնող գործակից, C₇= 0.01:

$$Q_3 = (1.0 \times 1.0 \times 0.5 \times 2.8 \times 0.5 \times 1450 \times 0.6 \times 0.001) / 3600 + 1.3 \times 1.0 \times 0.6 \times 0.002 \times 10 \times 1 \times 1 = 0.016 \text{ գր/վրկ}$$

$$\text{տարեկան կստացվի} \quad Q_{3\text{տ}} = 7 \times 3600 \times 260 \times 0.3 \times 0.016 \times 10^{-6} = 0.031 \text{ տ/տարի}$$

4. **Էքսկավատորի աշխատանքի ընթացքում** փոշին հիմնականում առաջանում է ավտոինքնաթափերի բեռնման ժամանակ: Փոշեառաջացման ծավալը որոշվում է ըստ հետևյալ բանաձևի՝

$$Q_4 = \frac{P_1 \times P_2 \times P_3 \times P_4 \times P_5 \times G \times 10^6 \times B \times P_6}{3600}, \quad \text{գր/վրկ}$$

- Որտեղ՝ P₁ - ապարում փոշու ֆրակցիայի բաժնեմասն է, P₁= 0.03;
- P₂– 0.50մկմ չափսերով մասնիկների բաժնեմասն է տարածված փոշու աերոզոլում, P₂= 0.01;
- P₃ - գործակից, որը հաշվի է առնում բարձիջի աշխատանքի գոտում քանու արագությունը ձեռնարկի /աղ 3./ P₃ = 1.2;
- P₄ – գործակից կախված նյութի խոնավությունից,, /աղ.4/ P₄= 0.4;
- P₅ - գործակից ,որը հաշվի է առնում տեղանքի պայմանները /աղ.3/ P₅= 0.4;
- P₆ - գործակից, որը հաշվի է առնում տեղանքի պայմանները /աղ.3/,P₆= 0,5;
- G - բարձվող ապարի քանակը, G = 71տ/ժ;
- B – նյութի բեռնաթափման բարձրությունը հաշվի առնող գործակից, /աղ 7/ B=0,5;

$$Q_4 = \frac{0.03 \times 0.01 \times 1.2 \times 0.4 \times 0.4 \times 71 \times 10^6 \times 0.5 \times 0.5}{3600} = 0.28 \text{ գր/վրկ}$$

$$Q_{4\text{տ}} = 7 \times 3600 \times 260 \times 0.28 \times 0.3 \times 10^{-6} = 0.55 \text{ տ/տարի}$$

Լցակույտի տարեկան գործող մակերեսը կազմում է 1000մ²: Փոշու արտանետման ծավալը որոշվում է՝

$$Q_5 = K_3 \times K_4 \times K_5 \times K_6 \times K_7 \times q_1 \times F \text{ գր/վրկ};$$

- Որտեղ՝ K₃= 1.2 գործակից, կախված քանու արագությունից
- K₄ = 0.5 գործակից, կախված տեղական պայմաններից
- K₅ = 0.6 գործակից, կախված ապարների խոնավությունից
- K₆ = 1.3 գործակից, կախված մակերևույթի պրոֆիլից
- K₇ = 0.4 գործակից, կախված նյութի մեծությունից
- q₁ = 0,002 - (1.0մ² փաստացի մակերևույթից փոշու անջատումը);
- F = 1000 մ² - փոշիացման մակերեսը:

Այսպիսով՝

$Q_5 = 1,2 \times 0,5 \times 0,4 \times 1,4 \times 0,5 \times 0,002 \times 0000 = 0,23 \text{ գր/վրկ};$
 Հաշվի առնելով, որ տարեկան 4 ամիս տարածքը գտնվում է խոնավ պայմաններում տարեկան արտանետումները կկանեն՝
 $Q_{5տ} = 0,23 \times 3600 \times 24 \times (365-120) : 10^6 = 4,87 \text{ տ/տարի}$

Մեքենայի բեռնաթափման ժամանակ առաջանում է փոշի, որի քանակը կարելի է հաշվել հետևյալ բանաձևով՝

$$Q_6 = \frac{k_1 \times k_2 \times k_3 \times k_4 \times k_5 \times k_6 \times B \times C_1 \times 10^6}{3600}, \text{ գ/վրկ}$$

- $k_1 = 0.05$ - փոշու ֆրակցիայի մասնիկի քաշն է
- $k_2 = 0.02$ - ամբողջ փոշուց աէրոզոլ գնացող փոշու մասնիկն է
- $k_3 = 1.1$ գործակից է, որը հաշվի է առնում քամու արագությունը աշխատանքային հրապարակում
- $k_4 = 1.0$ գործակից է, որը հաշվի է առնում փոշեառաջացման պայմանները
- $k_5 = 0.1$ գործակից է, որը հաշվի է առնում ապարների խոնավությունը
- $k_6 = 0.1$ որը հաշվի է առնում ապարների չափերը
- $B = 1.1$ գործակից է, որը հաշվի է առնում լցակույտի բարձրությունը
- C_1 - տեղափոխվող քանակը, 56տ/ժամ

$$Q_6 = \frac{0.05 \times 0.02 \times 1.1 \times 1.0 \times 0.1 \times 0.1 \times 1.1 \times 56 \times 10^6}{3600} = 0.19 \text{ գ/վրկ}$$

$$Q_{6տ} = 7 \times 3600 \times 260 \times 0.068 \times 0.19 \times 10^{-6} = 0.085 \text{ տ/տարի}$$

Այսպիսով՝ բացահանքից փոշու գումարային արտանետումների ծավալը կկազմի՝
 $\Sigma Q = Q_1 + Q_2 + Q_3 + Q_4 + Q_5 + Q_6 = 4.9 + 1.0 + 0.016 + 0.28 + 0.23 + 0.19 = 6.516 \text{ գ/վրկ}$ կամ 16.9 տ/տարի:

Փոշու արտանետումների քանակը խիստ նվազեցնելու նպատակով նախագծով նախատեսվում է ճանապարհների ջրցանում չոր եղանակներին, լցակույտերի վերակույտիվացիա: Այս միջոցառումները թույլ կտան փոշու արտանետումները կրճատել 70-80%-ով:

բ) Վնասակար գազային արտանետումներ.

- 1.** Դիզելային վառելիք
 - բուլդոզեր – **3,5**գ/վրկ,
 - ավտոինքնաթափ – **3,24**գ/վրկ,
 - էքսկավատոր - **3.1**գ/վրկ:

Հաշվի առնելով հերթափոխում մեքենաների և սարքավորումների աշխատանքի տևողությունը, վառելիքի ծախսը և օգտվելով ժամանակավոր մեթոդիկայի աղյուսակ **18**-ից, որտեղ բերված են **1**տ. վառելիքի այրումից վնասակար արտանետումների համապատասխան գործակիցները, հաշվարկվում են բացահանքի տարածքում այդ արտանետումների քանակը ըստ վնասակար նյութերի:

Վառելիքի այրումից վնասակար արտանետումների համապատասխան գործակիցները

N	Վնասակար նյութերի անվանումը	Վնասակար նյութերի անվանումը	
		Կարբյուրատորային շարժիչների դեպքում	Դիզելային շարժիչների դեպքում
1.	Ածխածնի օքսիդ	0,6 տ/տ	0,1 տ/տ
2.	ածխաջրածին	0,1 տ/տ	0,03 տ/տ
3.	Ազոտի երկօքսիդ	0,04 տ/տ	0,04 տ/տ
4.	մուր	0,58 կգ/տ	15,5 կգ/տ
5	Ծծմբային գազ	0,002 տ/տ	0,02 տ/տ
6.	կապար	0,3 կգ/տ	-

Հաշվարկված տվյալները բերված են աղ.19-ում:

Բացահանքում աշխատող տեխնիկական միջոցներից արտանետվող վնասակար նյութերի հաշվարկը

Վնասակար նյութեր արտանետողները	Վառելիքի ծախսը գ/վրկ	Վնասակար նյութեր տ/տարի				
		Ածխածնի օքսիդ	ածխաջրածին	Ազոտի երկօքսիդ	մուր	Ծծմբային գազ
1. Դիզելային						
- Էքսկավատոր	3,1	0.31	0.09	0.12	0,07	0.06
- բուլդոզեր	3,5	0.35	0.12	0.14	0,06	0.07
- Ավտոինքնաթափ	3,24	0.25	0.07	0.10	0,1	0.05
Ընդամենը բացահանքում	9.7	2.77	0.57	0.48	0,26	0.24

Ընդունելով աշխատանքային գոտու երկարությունը մոտ 60մ, լայնությունը 20մ, բարձրությունը (պայմանական) – 5մ, ծավալը կկազմի 6000մ³: Այդ ծավալում արտանետումների քանակը (միջինացված) կկազմի՝ գր/վրկ, մ³:

Ածխածնի օքսիդ	0,37 գ/վրկ
Ածխաջրածին	0,095 գ/վրկ
Ազոտի երկօքսիդ	0,080 գ/վրկ
մուր	0,043 գ/վրկ
Ծծմբային գազ	0,040 գ/վրկ

Վնասակար արտանետումները կրճատելու նպատակով նախագծում նախատեսվում են հետևյալ միջոցառումները՝

- Բոլոր մեքենաների և սարքավորումների արտանետիչների վրա պարտադիր տեղադրել գազագոծիչ սարքեր, որոնք կարող են 50-70%-ով պակասեցնել արտանետումների քանակը:
- Թույլատրել աշխատելու միայն լիովին սարքին մեքենաներին:

7.2. Ջրային ռեսուրսներ

Հանքավայրի շրջանում ստորերկրյա ջրային հոսքեր չկան: Մթնոլորտային տեղումները հեռանում են մակերևութային հոսքերի տեսքով, ունեն սեզոնային բնույթ: Հանքավայրի հարևանությամբ հոսում է Չինար գետը (Չինարագետ), որը Ջիլի վտակն է: Գետը սեզոնային է: Վարարումները սկսվում են ապրիլ ամսին հուլիս ամսից գետը ցամաքում է: Հանքավայրի հեռավորությունը Չինար գետից 20-100մ է: Հանքավայրի շահագործումից մակերևութային և ստորերկրյա ջրերի վրա ազդեցություններ չեն լինելու, քանի որ ջրային արտահոսքեր առկա չեն:

Հանքավայրի շահագործման ընթացքում ջրային արտահոսքեր տեղի չեն ունենալու: Մթնոլորտային տեղումներն ու փոշենստեցման նպատակով իրականացված ջրցանումը գոլորշանալու են և ներծծվելու հանքավայրի խորը հորիզոնները:

7.2.1. Ջրամատակարարումը և ջրհեռացումը

Բացահանքի մատակարարումը տեխնիկական ջրով կատարվում է օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների ժամանակ փոշեդադարեցման, աշխատանքային հրապարակների, ճանապարհների և լցակայանների ջրման նպատակով: Ջուրը բերվում է ZIL KO-713-01 (ZIL-431412) մակնիշի ջրցան-վաճող մեքենայով: Խմելու ջրի մատակարարումը կատարվում է IIIH-БЦБ-1.4 ջրի ցիստեռնով:

Հանքավայրի հիդրոերկրաբանական պայմանների համաձայն, գետնաջրերը բացակայում են: Հետևաբար բացահանքում ջրհեռացնող կառուցվածքներ չեն նախատեսվում: Անմիջապես բացահանքի տարածքը թափվող անձրևային ջրերը հեռացվում են ինքնահոս կերպով և ներծծվում ճաքերի միջով:

Աշխատողներին խմելու և կենցաղային նպատակներով ջրածախսը հաշվարկվում է հետևյալ արտահայտությունով՝

$$W = (n \times N + n_1 \times N_1) \times T$$

որտեղ՝ n - ԻՏ և գրասենյակային աշխատողների թիվն է - 3,

N - ԻՏՍ և գրասենյակային աշխատողների ջրածախսի նորման՝ - 0.016մ³,

n_1 - բանվորների թիվն է - 15,

N_1 - ջրածախսի նորման՝ - 0.025մ³/մարդ օր

T - աշխատանքային օրերի թիվն է - 260օր:

Այսպիսով՝ $W = (3 \times 0.016 + 15 \times 0.025) \times 260 = 109.98$ մ³/տարի, միջին օրեկան 0.423մ³: Կենցաղային կեղտաջրերը՝ $0.423 \times 0.85 = 0.36$ մ³ օրեկան լցվում են բետոնային լցարան, որտեղից պարբերաբար տեղափոխվում են սահմանված կարգով:

Տեխնիկական ջուրը ծախսվում է փոշենստեցման նպատակով: Փոշենստեցում կատարվում է տարվա չոր և շոգ եղանակներին, օրը 2 անգամ: Տարվա ընթացքում չոր և շոգ օրերի քանակը տվյալ շրջանում կազմում է 170 օր:

Փոշենստեցման ենթակա են՝ աշխատանքային հրապարակը՝ 1400մ², լցակույտը՝ 800մ², արտադրական հրապարակը՝ 250 մ² և ավտոճանապարհները՝ 8400մ², ընդամենը 10850մ²:

Ընդունված նորմատիվների համաձայն ջրի ծախսը 1մ² մակերևույթում փոշին նստեցնելու համար կազմում է 0.5լիտր (0.0005մ³):

Հաշվի առնելով վերը բերված ցուցանիշները՝ փոշենստեցման նպատակով ջրի տարեկան պահանջը կկազմի՝ (10850 x 0.0005)x2x170=1844,5մ³, օրեկան 5.0մ³:

Ջրցանումն նախատեսված է իրականացնել 5 տ ջրի տարողությամբ 1 ջրցան մեքենայով, որը օրեկան ջրի պահանջարկը կապահովի 1 երթով:

Խմելու ջուրը բացահանքում աշխատող անձնակազմի համար կվերցվի ՋԻԼ բնակավայրի ընդհանուր ջրամատակարարման ցանցից պայմանագրային հիմունքներով իսկ տեխնիկական ջուրը՝ ՋԻԼ գետից (օրեկան 5մ³, 0.005լ/վ):

Ընդերքօգտագործման իրավունք ձեռք բերելուց հետո ընկերությունը կդիմի Լիազոր մարմնին ջրօգտագործման թույլտվություն ստանալու համար:

7.3. Հողային ռեսուրսներ

Բացահանքի օտարման տարածքը կազմում է 4.2 հա, իսկ արտաքին լցակույտինը՝ 4.8 հա: Այդ հողատարածքները գյուղատնտեսական նպատակներով օգտագործման համար պիտանի չեն: Հանքավայրում արդյունահանման աշխատանքներն ավարտելուց հետո իրականացվելու է ռելիեֆի խախտված տեղամասերի կարգաբերում է վերականգնում:

7.4. Ազդեցությունը կենդանական և բուսական աշխարհի վրա

Հանքավայրի արդյունահանման և լեռնակապիտալ աշխատանքների իրականացման փուլերում տարածքի կենսաբազմազանության վրա վնասակար ազդեցություն կարող են ունենալ բացահանքից օգտակար հանածոյի հանման-բեռնման աշխատանքների աղմուկը, ցնցումները, փոշին, ինչպես նաև տեխնիկական միջոցների աշխատանքի ընթացքում մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերը և դիզելային վառելիքի, քսայուղերի թափվածքները:

Արդյունահանման աշխատանքների համար նոր ճանապարհներ չեն կառուցվելու: Օգտագործվելու է գոյություն ունեցող ճանապարհները նախապես դրանք բարեկարգելով:

Հայցվող տեղամասի շրջանում կենդանիների հանդիպելը գրեթե անհավանական է, քանի հանքավայրի տարածքում մշտապես երթնեկում են ՊՆ ավտոմեքենաներն ու տեխնիկական միջոցները, որոնց շահագործումից առաջացած վիբրացիայի և աղմուկի պատճառով դրանք հեռացել են:

Բնապահպանական միջոցառումների ցանկում նախատեսված են հատուկ միջոցառումներ, որոնք կբացառեն արդյունահանման աշխատանքների ազդեցությունը շրջակա տարածքների բուսատեսակների և կենդանիների վրա:

Ստորև բերվում է շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցության գնահատման մատրիցը (աղ.20)

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցության գնահատման մատրիցը

Շրջակա միջավայրի բաղադրիչներ	Գործողություններ	
	Մերձատար ճանապարհների վերանորոգում	Արդյունահանման աշխատանքներ
Մթնոլորտային օդ	Ցածր երկարատև	Ցածր երկարատև
հողեր	Ցածր երկարատև	Ցածր երկարատև
ջրեր	-	-
Կենդ. և բուսական աշխարհ	աննշան	աննշան
Պատմամշակութ. հուշարձաններ	-	-

7.5. Սոցիալական ազդեցության գնահատականը

Հանքավայրի շահագործման տևողությունը կազմում է 19 տարի: Գործունեության ընթացքում բացահանքն իր ազդեցությունն է ունենալու ոչ միայն շրջակա միջավայրի վրա, այլև մոտակա համայնքների սոցիալ-տնտեսական կյանքում:

Արդյունահանման աշխատանքները նախատեսվում է կատարել ՀՀ աշխատանքային օրենսդրության պահանջներին, աշխատանքների անվտանգության նորմատիվային փոստաթղթերին և այլ նորմատիվ ակտերին համապատասխան և ապահովեն բոլոր տեսակի աշխատանքների անվտանգ կատարումը:

Աշխատակազմը կունենա խմելու որակյալ ջրի և զուգարանների հասանելիություն, սնունդ ընդունելու և հանգստանալու համար անհրաժեշտ պայմաններ: Աշխատատեղերում, հասանելի վայրում, կլինեն առաջին օգնության բժշկական արկղիկներ և հակահրդեհային միջոցներ: Աշխատակազմը կապահովվի համազգեստով և անվտանգության անհրաժեշտ միջոցներով:

Անվտանգության սարքավորումների օգտագործումը կուսուցանվի, վերահսկվի և պարտադրվի: Աշխատանքի անվտանգության պահպանման համակարգը կնախատեսի հրահանգավորում, ուսուցում և գիտելիքների ստուգում:

Տիգրիկական ազդեցությունները /օրինակ՝ աղմուկը/ կանխելու նպատակով տեխնիկա - տրանսպորտային միջոցները կունենան համապատասխան խլացուցիչներ: Բոլոր աշխատակիցները կապահովվեն անհատական պաշտպանության միջոցներով:

Սպասարկող անձնակազմի ընտրության ժամանակ առաջնահերթություն է տրվելու տեղի բնակչությանը:

Բացահանքի աշխատանքներին մասնակցություն կունենան 18 մարդ, ինչը հնարավորություն կտա բարելավվել նրանց սոցիալական վիճակը:

Հանքավայրի շահագործման կամ փակման արդյունքում բնակչության տարահանման խնդիր չի առաջանա:

Աղյուսակ 21- ում ներկայացվում է Ջիլ բնակավայրի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում նախատեսվող տարեկան պարտավորությունների նախնական չափը և ժամկետները՝

Ընկերության ներկայացուցիչները պատրաստ են պարբերաբար հանդիպել համայնքի ղեկավարության հետ, քննարկելու անհրաժեշտ օգնության ծրագրերը և համապատասխան ֆինանսական ներդրումներ կատարել համայնքի բյուջե:

Աղյուսակ 21

Ջիլ բնակավայրի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում նախատեսվող տարեկան պարտավորությունների նախնական չափը և ժամկետները

Հ/հ	Պարտավորությունների անվանումը	Կատարման ժամկետը	Ներդրումների չափը, հազ. դրամ
1.	Համայնքի զարգացման սոցիալ-տնտեսական ծրագրերին մասնակցություն	Յուրաքանչյուր տարի	250.0
2.	Մանկապարտեզի, դպրոցի վերանորոգման աշխատանքներին ֆինանսական մասնակցություն	Յուրաքանչյուր տարի	150.0
3.	Միջհամայնքային նշանակության ճանապարհների վերանորոգման աշխատանքներին մասնակցություն	Ըստ անհրաժեշտության	Շինարարական տեխնիկայի տրամադրում

7.6. Աղմուկ

Հանքավայրի տարածքում աղմուկի առաջացման աղբյուրներն են բացահանքն ու լցակույտը:

Հանքավայրերում տեխնիկայի և բեռնատար տրանսպորտի աշխատանքներից գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը սահմանված է 797 ԲԱ (համաձայն գործող նորմերի): Հաշվի առնելով հանքավայրի հեռավորությունը մոտակա բնակավայրերից 2.6կմ, նախալեռնաթեքվածքային, ալիքաձև ձորակներով լավ մասնատված ռելիեֆը, մեկ հերթափոխով աշխատանքային ռեժիմը՝ գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը շրջակա բնակավայրերի տարածքում կլինի բնակելի գոտիների համար սահմանված նորմերի (45ԴԲԱ) սահմաններում:

7.7. Սանիտարա-պաշտպանիչ գոտի

Համաձայն 245-71 սանիտարական նորմերի, ոչ մետաղային հանքավայրերի համար սանիտարա-պաշտպանիչ գոտու մեծությունը կազմում է 50.0 մ:

Քանի որ մոտակա բնակավայրը գտնվում է շատ ավելի մեծ (2.6կմ) հեռավորության վրա, ուստի հատուկ միջոցառումներ չեն նախատեսվում:

7.8. Շրջակա միջավայրի վրա գումարային ազդեցությունը

Ազդեցության գումարային տեսակները ծագում են, երբ որևէ գործողության հետևանքով գումարվում կամ փոխազդում է նույն ժամանակահատվածում տվյալ տարածքի այլ գործողությունների հետևանքների հետ: հենց այդպիսի հետևանքների համակցությունը և իբրև արդյունք ստացվող էկոլոգիական վիճակի վատթարացումը, պետք է լինեն գումարային ազդեցության վերլուծության կենտրոնում:

Հանքավայրի շրջանում չկան շահագործվող հանքավայրեր, ձուլարաններ, մետաղներ վերամշակող կամ կորզող ֆաբրիկաններ կամ որևէ այլ ձեռնարկություն որը նույն ժամանակահատվածում գործունեության մեջ լինի, որի ազդեցությունը գումարվի կամ փոխազդի Ջիլի կոնգլոբրեկչիանների հանքավայրի հետ և շրջակա միջավայրի վրա ուժեղացնի ազդեցությունը:

Ելնելով շրջակա միջավայրի վրա ազդող այլ օբյեկտների բացակայությունից գումարային ազդեցություն չի գնահատվում: Սույն ՇՄԱԳ-ում շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվությունը ընդունվում է ելակետային և շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հանքավայրի փաստացի ազդեցությունը գնահատվելու է համեմատական մեթոդաբանությամբ:

8. ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Բացահանքի շահագործումը ուղղակի կամ անուղղակի ազդեցություն է գործում շրջակա միջավայրի բաղադրիչների վրա՝ հողաբուսական ծածկույթ, կենդանական և բուսական աշխարհ, օդային և ջրային միջավայր:

Բացահանքի, շահագործման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունը որոշվում է միջավայրին հասցված տնտեսական վնասով:

Տնտեսական վնասը, դա շրջակա միջավայրի աղտոտվածության հետևանքով առաջացած ծախսերն ու կորուստներն են արժեքային արտահայտությամբ:

Տարբերվում են 2 տեսակի ծախսեր, որոնք առաջանում են շրջակա միջավայրի աղտոտումից: Առաջին տեսակի ծախսերը առաջանում են այն դեպքում, երբ ձեռնարկությունը հանդիսանում է շրջակա միջավայրի բաղադրամասերի (օդ, ջուր, հող և այլն) աղտոտման աղբյուր, որոնք օգտագործվում են ուրիշ տնտեսական օբյեկտների կողմից և որոնց նորմալ գործունեության համար կպահանջվի կատարել հնարավոր տեխնիկական միջոցառումներ՝ այդ ազդեցությունը մասնակի կամ լրիվ կանխելու նպատակով: Երկրորդ տեսակի ծախսերը առաջանում են աղտոտված շրջակա միջավայրի ազդեցությունից ռեցիպիենտների վրա:

Տնտեսական վնասը շրջակա միջավայրի աղտոտումից համարվում է կոմպլեքս մեծություն և որոշվում է որպես վնասների գումար, որոնք հասցվում են ռեցիպիենտների առանձին տեսակներին աղտոտող գոտու սահմաններում:

Հիմնական ռեցիպիենտներ են համարվում բնությունը, գյուղատնտեսական հանդակները, անտառային ռեսուրսները, բուսական և կենդանական աշխարհը և այլն:

$$V = V_{\text{V}} + V_{\text{Q}} + V_{\text{Z}} + V_{\text{ZO}} + V_{\text{անտ.տնտ.}},$$

որտեղ՝ V_{V} -վնասակար նյութերի մթնոլորտ արտանետումներից հասցված տարեկան գումարային վնասն է,

V_{Q} - ջրավազաններ թափվող վնասակար նյութերից հասցված տարեկան գումարային վնասն է: Հանքավայրի բաց եղանակով մշակելիս որևէ կեղտաջրերի արտահոսք բաց ջրային օբյեկտներ բացառվում է: Բացահանքում արտադրական հոսքաջրեր չեն առաջանում: Կենցաղային կեղտաջրերի հավաքման համար նախատեսված է բետոնե լցարան, որտեղից կեղտաջրերը աղբատար մեքենայով պարբերաբար տեղափոխվելու են մոտակա մաքրման կայան:

V_{Z} - Հողերի դեգրադացիայից և աղտոտումից հասցված տարեկան վնասն է /հողատարածքները գյուղատնտեսական նպատակով օգտագործման համար պիտանի չեն/:

V_{ZO} - Հողերի օտարումից հասցված տարեկան վնասն է;

$V_{\text{անտ.տնտ.}}$ - անտառային տնտեսությանը հասցված վնասն է: Քանի որ անտառային ֆոնդից տարածք չի հատկացված, ապա $V_{\text{անտ.տնտ.}} = 0$

Այս բաժնում տնտեսական վնասի հաշվարկ կատարված է մթնոլորտային օդի աղտոտման և հողերի օտարման համար: Տնտեսական վնասի հաշվարկը կատարվում է գործող մեթոդակարգերի համաձայն:

8.1. Մթնոլորտային օդի աղտոտվածության հետևանքով տնտեսությանը հասցված տնտեսական վնասը

Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով հասված վնասը հաշվարկվում է համաձայն ՀՀ Կառավարության 25.01.2005թ թիվ 91-Ն որոշմամբ հաստատված կարգի:

Տնտեսական վնասը դա շրջակա միջավայրին հասցված վնասի վերացման համար անհրաժեշտ միջոցառումների արժեքն է արտահայտված դրամական համարժեքով:

Տնտեսական վնասը հաշվարկվում է համաձայն գործող մեթոդակարգի /ՀՀ Կառավարության 25.01.2005թ թիվ 91-Ն որոշում/:

Յուրաքանչյուր արտանետման աղբյուրի համար տնտեսությանը հասցված վնասը գնահատվում է 1-ին բանաձևով՝

$$U = \sum_{q=1}^n \Phi_q \cdot \sum_{i=1}^m (\Psi_i \cdot \Phi_i) \quad (1)$$

որտեղ՝ U -ն ազդեցությունն է, արտահայտված ՀՀ դրամով,

Φ_q -ն աղտոտող աղբյուրի շրջապատի (ակտիվ աղտոտման գոտու) բնութագիրն արտահայտող գործակիցն է, համաձայն նշված կարգի 9-րդ աղյուսակի արդյունաբերական ձեռնարկությունների տարածքների համար ընդունվում է $\Phi_q=4$, շարժական աղբյուրների (ավտոինքնաթափ և այլն) արտանետումներից վնասի հաշվարկման համար՝ $\Phi_q=5$:

Ψ_i – ն i –րդ նյութի (փոշու տեսակի) համեմատական վնասակարությունն արտահայտող մեծությունն է, որի արժեքը հաշվարկվում է համաձայն մեթոդակարգի 10-րդ և 11-րդ կետերի:

Φ_i – ն տվյալ (i –րդ) նյութի արտանետումների քանակի հետ կապված գործակիցն է:

Φ_q -ն փոխադրման ցուցանիշն է, հաստատուն է և ընտրվում է՝ ելնելով բնապահպանության գործընթացը խթանելու սկզբունքից: Մեթոդակարգի համաձայն $\Phi_q = 1000$ դրամ:

Φ_i գործակիցը որոշվում է 2-րդ բանաձևով՝

$$\Phi_i = q \cdot S_{wi} \quad (2)$$

S_{wi} – i նյութի տարեկան փաստացի արտանետումներն են՝ տոննաներով:

q - գործակից :

$q=1$ ՝ անշարժ աղբյուրների համար,

$q=3$ ՝ շարժական աղբյուրների (ավտոտրանսպորտի) համար:

Բացահանքի շահագործման ժամանակ, շարժական աղբյուրների /մեքենա-սարքավորում/ արտանետումներից տնտեսությանը հասցված տնտեսական վնասի հաշվարկը բերված է աղյուսակ 22-ում:

Ինչպես երևում է աղյուսակ 22 - ից, հանքավայրի շահագործման հետևանքով աղտոտող նյութերի արտանետումներից տնտեսությանը հասցված տնտեսական վնասը գնահատվում է տարեկան առավելագույնը՝ 1.94 մլն. դրամ:

Տնտեսական վնասի հաշվարկը

Վնասակար արտանետումների անվանումը	Մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակը տ/տարի, S _i	Գործակից Գ	Գործակից Բ _i Բ _i =S _i · Գ	Վ _i	Շգ	Տնտեսական վնաս ՀՀ դրամ U=1000·Շգ · Վ _i Բ _i
1	2	3	4	5	6	7
Լցակույտի մակերևույթ						
Փոշի	4.87	1	4.87	10	4	194800
Շարժական աղբյուրներ /մեքենա սարքավորումների օգտագործման գործակիցն ընդունվում է 0.8/						
Փոշի	9.6	3	28.8	10	5	1440000
Ածխածնի օքսիդ	2.22	3	6.66	1		33300
Ածխաջրածիններ	0.456	3	1.368	3		20520
Ազոտի օքսիդներ	0.384	3	1.152	12.5		72000
Մուր	0.21	3	0.63	41.5		130725
Ծծմբային գազ /անհիդրդ/	0.192	3	0.576	16.5		47520
Ընդհանուրն ըստ շարժական աղբյուրների						1744065
Ընդամենը						1938865

Ներկայացված գումարը չի առաջացնում որևէ ֆինանսական պարտավորություն:

8.2. Հողերի օտարումից տնտեսական վնասի հաշվարկը

Հողային ռեսուրսների վրա տնտեսական վնասը հաշվարկվել է համաձայն ՀՀ Կառավարության **25.01.2005 թ N 92**-Ն որոշմամբ հաստատված կարգի:

Բացահանքի օտարման տարածքը կազմում է 4.2 հա, իսկ արտաքին լցակույտին՝ 4.8 հա: Այդ հողատարածքները գյուղատնտեսական նպատակով օգտագործման համար պիտանի չեն:

Հողատարածքների կադաստրային արժեքը կազմում է **267.5** հազ.դր 1 հա տարածքի համար:

Հողային ռեսուրսների վրա ազդեցությունը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$U = \text{ԾՉՎ} + \text{ԱՎՀ} + \text{ԾՈԻՎ},$$

որտեղ՝

Ա-ն ազդեցությունն է,

ԾՉՎ -ն վնասված հողամասը նախնական տեսքի բերելու համար անհրաժեշտ ծախսերն են, (ընդունված է ռեկուլտիվացիայի համար անհրաժեշտ ծախսերի խոշորացված նախահաշվի չափով, 687.9 հազ.դր 1 հա տարածքի համար:)

ԱՎՀ -ն վնասված հողատարածքի ընդհանուր գույքի արժեքն է,

ԾՈԻՎ -ն ազդեցության հետևանքների ուսումնասիրության և վերլուծության հետ կապված ծախսերն են: Ըստ մասնագիտական կազմակերպությունների կողմից իրականացվող նույնանման աշխատանքների արժեքի անալոգիայով այն կազմում է 1.2 մլն. դրամ:

$$U = (4.2+4.8) \times 687.8 \text{ հազ.դր.} + (4.2+4.8) \times 267.5 \text{ հազ. դր} + 1200 \text{ հազ.դր} = 6190.2 + 2407.5 + 1200 = 9797.7 \text{ հազ. դրամ /տարի}$$

Ընդհանուր տնտեսական վնասը կկազմի՝

$$\text{Վ} = \text{ՎՄ} + \text{ՎՀՕ} = 1938865 + 9797700 = 11736565 \text{ դրամ/տարի}$$

9. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

9.1. Անվտանգության տեխնիկան և արդյունաբերական սանիտարիան

Բացահանքում կատարվող բոլոր լեռնային աշխատանքներն անհրաժեշտ է իրականացնել պահպանելով «Հանքավայրերը բաց եղանակով մշակելու անվտանգության միասնական կանոնների» և «Հանքավայրերի տեխնիկական շահագործման կանոնների» պահանջները՝ մասնավորապես, անհրաժեշտ է՝

- աշխատանքի ընդունվող բոլոր բանվորների հետ անցկացնել անվտանգության տեխնիկայի նախնական ուսուցում իր մասնագիտության գծով և, գիտելիքների ստուգման համար, ընդունել քննություն՝

- կատարել բացահանքի ճարտարագիտա-տեխնիկական անձնակազմի գիտելիքների ստուգում:

- եռամսյակը մեկ անգամ անցկացնել անվտանգության տեխնիկայի գծով հրահանգավորում,

- հերթափոխի պետի կողմից, աշխատանքներն սկսելուց առաջ, կատարել աշխատանքային տեղի զննում և տալ գրավոր առաջադրանք՝ կատարողի ստորագրությամբ,

- բանվորներին ապահովել սարքին գործիքներով և պաշտպանական միջոցներով,

- ավտոտրանսպորտային միջոցները թույլ տալ աշխատելու միայն այն դեպքում, երբ դրանք սարքին են և կանոնավոր գործում են դրանց վրա տեղադրված զազախառնուրդների չեզոքացման սարքերը,

- փոշենստեցման նպատակով, դրանց առաջացման բոլոր օջախները՝ մուտքային ավտոճանապարհները, աշխատանքային հրապարակները, հանքախորշերը կանոնավոր կերպով ջրել ջրցան մեքենայով:

Աշխատանքային պայմաններ

- Բացահանքի աշխատանքներին մասնակցություն կունենան 18 մարդ, ինչը հնարավորություն կտա բարելավել նրանց սոցիալական վիճակը:

- Սպասարկող անձնակազմի ընտրության ժամանակ առաջնահերթություն է տրվելու տեղի բնակչությանը:

- Բոլոր աշխատակիցները կապահովվեն համազգեստով և անհատական պաշտպանության միջոցներով:

- Ֆիզիկական ազդեցությունները /օրինակ՝ աղմուկը/ կանխելու նպատակով տեխնիկա-տրանսպորտային միջոցները կունենան համապատասխան խլացուցիչներ:

- Աշխատակազմը կունենա խմելու որակյալ ջրի, զուգարանների և լոգարանների հասանելիություն: Մնունդ ընդունելու և հանգստանալու համար անհրաժեշտ պայմաններ:

Աշխատակիցների համար տեղադրվելու են ստանդարտ տիպային-տնակներ, որոնք կահավորված կլինեն ճաշարանով, հանգստի սենյակներով, լոգարաններով և զուգարաններով: Կացարանները ապահովված կլինեն օդօրակիչներով: Ձմռան ցուրտ ամիսներին սենյակների նվազագույն ջերմաստիճանը պետք է լինի 20°C:

Տիպային տնակներում նախատեսված են յուրաքանչյուր անձի համար նվազագույն պայմանները, որը ներառում է առանձին մահճակալ և պահարան:

Մենյակում բնակվողների առավերագույն քանակը պետք է լինի 4 հոգի: Մահճակալները միմյանցից պետք է լինեն առնվազն 1 մ հեռավորության վրա:

Սննդի կազմակերպումը իրականացվելու է տեղում: Աշխատակիցների սննդի կազմակերպման հարցերով զբաղվելու է գործատու ընկերությունը: Մատակարարվող սննդամթերքի որակը պետք է համապատասխանի աշխատուժի պահանջներին:

Աշխատատեղերում՝ հասանելի վայրում, կլինեն առաջին օգնության բժշկական արկղիկներ և հակահրդեհային միջոցներ (կրակմարիչներ, ավազ, բահ և այլն):

Ընկերությունը աշխատակիցների նկատմամբ խտրական գործելակերպ և իրավունքների սահմանափակում չի կիրառելու:

Աշխատողների աշխատանքային պայմանների վիճակի վերահսկման նպատակով ներդրվելու է բողոքարկման մեխանիզմ:

9.2. Ինժեներա-տեխնիկական միջոցառումները

Ինժեներա - տեխնիկական միջոցառումներն ուղղված են բացահանքի աշխատողներին և նրանց ընտանիքի անդամներին պաշտպանելու գամմա ճառագայթների ազդեցությունից պատեազմի ժամանակ տեղանքի ռադիոակտիվ վարակման դեպքում:

Սույն նախագծով նախատեսվում է օգտվել մոտակա բնակավայրերի համար նախատեսված հակառադիացիոն թաքստոցներից:

10. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ, ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ՎԹԱՐԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑՈՂ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՂՄԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԵՎ ԾՐԱԳՐԵՐ

Հանքավայրում իրականացվելիք արդյունահանման աշխատանքների ընթացքում հնարավոր են վթարային իրավիճակներ, բնական աղետներ, և անբարենպաստ օդերևութաբանական պայմաններ: Բոլոր հնարավոր դեպքերում շրջակա միջավայրի լրացուցիչ աղտոտումը կանխելու կամ հնարավոր չափով նվազեցնելու համար ընկերությունը մշակել է գործողությունների ծրագիր, որը ներառում է մի շարք համապատասխան միջոցառումներ:

1. Անբարենպաստ օդերևութաբանական պայմաններում, որոնք նպաստում են գետնամերձ շերտում վնասակար նյութերի կուտակմանը, ցրման գործընթացների դանդաղեցման պատճառով հնարավոր են վնասակար նյութերի կոնցենտրացիաների զգալի բարձրացումներ:

Ընդունված են անբարենպաստ օդերևութաբանական պայմանների 3 կատեգորիաներ, սակայն դրանց հստակ չափորոշիչները բացակայում են և դրանք որոշվում են հետևյալ սկզբունքների հիման վրա՝

- Քամու արագության նվազում,
- Անհողմություն, չոր եղանակ,
- Անհողմություն, թանձր մառախուղ:

Նախատեսվում են հետևյալ միջոցառումները՝

- Ավելացվում են ջրցանի ծավալները:
- Կրճատվում է միաժամանակյա աշխատող մեխանիզմների քանակը:
- Դադարեցվում են արդյունահանման աշխատանքները:

2. Հրդեհներով պայմանավորված արտակարգ իրավիճակներ: Հանքավայրում գտնվող էլեկտրական ենթակայանը (դիզելային գեներատոր) ինչպես նաև վագոնակը պետք է համալրված լինի հակահրդեհային պարագաներով (կրակմարիչներ, ավազ, դույլ, բահեր): Դրանք օգտագործվելու են ձեռքով:

Հրդեհաշիջման սկզբնական միջոցները տեղադրվելու են շինարարական աշխատանքների տեղամասում, փակցվելու են հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:

Հրդեհի ժամանակ կհոսանքազրկվեն բոլոր էլեկտրական սարքերը, անձնակազմը կտեղափոխվի անվտանգ վայր:

Նշանակվելու է պատասխանատու, որի պարտավորությունների մեջ կմտնի հակահրդեհային միջոցառումների կիրառումը: Պատասխանատու անձը ամբողջ տարածքում անց է կացնելու տեսչական ստուգումներ որպես օրվա աշխատանքային պլանի մի մաս:

3. Երկրաշարժով պայմանավորված արտակարգ իրավիճակներ

Ըստ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր» N 102-Ն հրամանի Ջիլի կոնգլոբրեկչիանների հանքավայրը գտնվում է 2-րդ սեյսմիկ գոտում, որտեղ գրունտի սպասվելիք արագացումների մեծությունը գնահատվում է 0.4g: 2021թ. Փետրվարի 5-ին Շորժա գյուղի շրջանում տեղի ունեցած երկրաշարժի

ուժգնությունը գնահատվել է $M=4.7$ մագնիտուդ: Այս երկրաշարժը կապված էր Հայաստանի ամենաերկար Փամբակ-Սևան-Սյունիքի ակտիվ խզվածքի հետ:

Երկրաշարժի հետ կապված արտակարգ իրավիճակներում արագ արձագանքելու նապատակով նախատեսվում է հանքում աշխատող անձնակազմի համար կազմակերպել իրազեկման դասընթացներ և ներկայացնել գործողությունների համառոտ ծրագիրը: Երկրաշարժի դեպքում՝ ցնցումները զգալու ժամանակ հանքում աշխատող անձնակազմը պարտավոր է.

- անջատել բոլոր գործող սարքավորումները, մեխանիզմներն ու մեքենաները,
- հեռանալ մեքենաների և մեխանիզմների տեղակայման վայրից,
- դուրս գալ բացահանքից,
- դուրս գալ վագոն-տնակից,
- կանգնել բացօթյա տարածքում,
- կապ հաստատել կազմակերպության ղեկավարության հետ՝ իրազեկելով տարածքում գտնվող աշխատակիցների քանակի և ընդհանուր իրավիճակի վերաբերյալ,
- կապ հաստատել տարածքային կառավարման մարմինների հետ՝ իրազեկելով տարածքում գտնվող աշխատակիցների քանակի և ընդհանուր իրավիճակի վերաբերյալ,
- հանքի սպասարկող մեքենաներով ապահովել աշխատակիցների տարհանումը,
- տեղամասում տեղադրված վագոն-տնակում ապահովել առաջին բուժօգնության համար անհրաժեշտ դեղորայքի առկայությունը:

4. Ջրհեղեղներով, սելավներով և սողանքներով պայմանավորված արտակարգ իրավիճակների հավանականությունը գնահատվում է անհավանական, ուստի միջոցառումներ չեն **նախատեսվում**:

5. Պատերազմներ

Քանի որ տարածաշրջանը սահմանամերձ է ուստի հնարավոր են ռազմական բախումներ և ագրեսիա հարևան պետության կողմից: Ելնելով այդ հանգամանքից նախատեսվում է կառուցել թաքստոցներ:

Նման իրավիճակներ տեղի ունենալու պարագայում հետևել քաղաքցիական պաշտպանության միասնական հրահանգավորմանը:

11. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՎԱԶԵՑ-ՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- Նավթամթերքների պահեստավորում և պահում արտադրական հրապարակում հատուկ հատկացված տեղում (բացօթյա կամ ծածկի տակ պահեստ), որի տրվում է համապատասխան թեքություն, որն ապահովում է թափված նավթամթերքների հոսքը դեպի այն հավաքող բետոնապատված փոսը:
- Օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարրաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ երկրորդական վերամշակման համար:
- Հնամաշ դետալների ու մասերի հավաքում հատկացված առանձին տեղում և հանձնվում որպես մետաղական ջարդոն:
- Կենցաղային աղբի տեղափոխվում մոտակա աղբահավաք կետեր:
- Ծխագազերի և անօրգանական փոշու արտանետումների վերահսկման նպատակով մեքենաների տեխնիկական վիճակի նախնական և պարբերական ստուգումներ, շարժիչների աշխատանքի կարգավորում, արտանետման խողովակների վրա գտիչների տեղադրում:
- Փոշենստեցման նպատակով բացահանքից դուրս ճանապարհների ջրում:
- Կեղտաջրերի հավաքում հորատի պ գուգարանում, որը հետագայում դատարկում են հատուկ ծառայության ուժերով:
- Խախտված տարածքների ռեկուլտիվացիա:
- «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի N 781-Ն որոշման դրույթների ապահովում:

Նախատեսվում է կենդանական աշխարհի պահպանությանն ուղղված միջոցառումներ:

Պահպանության ենթակա բուսատեսակների պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում նախատեսվում է.

1) առանձնացնել պահպանվող գոտիներ, որոնք ունեն տեղական նշանակություն և անհրաժեշտ են կարմիր գրքում գրանցված բուսատեսակների՝ սույն կետում նշված նոր պոպուլյացիաների կենսունակության ապահովման նպատակով,

2) Ժամանակավորապես սահմանափակել առանձնացված պահպանվող գոտիներում տնտեսական գործունեության որոշ տեսակներ, եթե դրանք կարող են բերել նշված բուսատեսակների աճելավայրերի վիճակի վատթարացմանն ու պոպուլյացիաների կենսունակության խաթարմանը,

3) տեղափոխել պահպանվող բույսերի առանձնյակները տվյալ տեսակի համար նպաստավոր բնակլիմայական պայմաններ ունեցող որևէ բնության հատուկ պահպանվող տարածք կամ բուսաբանական այգիների տարածք, կամ կարմիր գրքում որպես տվյալ բույսի աճելավայրեր գրանցված որևէ տարածք, իսկ բույսերի սերմերը տրամադրում են համապատասխան մասնագիտացված կազմակերպությանը՝ գենե-

տիկական բանկում պահելու և հետագայում տեսակի վերարտադրությունը կազմակերպելու նպատակով:

Կենդանական աշխարհի պահպանությանն ուղղված միջոցառումներ՝

- արգելվելու է ցանկացած տեսակի որսը:
- Շին հրապարակը ցանկապատել:
- Սողուններ, թռչուններ կամ կենդանական աշխարհի որևէ այլ տեսակ հայտնաբերելիս դադարեցնել բոլոր տեսակի աշխատանքներն ու դիմել համապատասխան կառույցների մասնագետներին. դրանց պահպանության միջոցառումներ մշակելու և իրականացնելու նպատակով:

Պահանջվող ֆինանսական միջոցները կհատկացվեն ընկերության կողմից:

ՀՀ Գեղարքունիքի մարզի կոնգլոբրեկչիանների հանքավայրի շահագործման ընթացքում «ԱՐԱՄ – ՇԻՆ 2007» ՍՊ ընկերությունը իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

11.1. Մշտադիտարկումների պլան

Շրջակա միջավայրի մշտադիտարկումը շրջակա միջավայրի, այդ թվում շրջակա միջավայրի բաղադրիչների, բնական էկոլոգիական համակարգերի, նրանցում ընթացող գործընթացների, դրական և բացասական տեղաշարժերի, իրավիճակի համալիր դիտարկում է, որը թույլ է տալիս գնահատել և կանխատեսել շրջակա միջավայրի վիճակի փոփոխությունները:

Մշտադիտարկման նպատակներն են. շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը և նորմավորումը, ազդեցության աղբյուրների վերահսկումը (արտանետումները, ֆիզիկական ազդեցությունը, մնացորդային ազդեցությունը, վտանգները), շրջակա միջավայրի բաղադրիչների որակի վերահսկողությունը: Այս ամենը անհրաժեշտ է ազդակիր համայնքների բնակչության անվտանգության և առողջության, աղետների կանխման և կանխարգելման միջոցառումների մշակման, ռացիոնալ բնօգտագործում և բնապահպանություն ապահովելու:

Մշտադիտարկման պլանը հստակեցնում է դիտարկման օբյեկտը, չափվող կամ վերահսկվող պարամետրը, նրա թույլատրելի սահմանը, չափման կամ վերահսկման մեթոդը, հաճախականությունը և այլն:

Մշտադիտարկումն իրականացվում է շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների նկատմամբ՝ մակերևութային և ստորգետնյա ջրեր, մթնոլորտային օդ, հողեր, սոցիալական միջավայր, ֆիզիկական ազդեցություններ, հանքարդյունահանման համալիրի կառույցներ (լցակույտեր, բացահանք) և այլն: Եթե չափված պարամետրերը գերազանցում են ցույց տալիս կամ զարգացման դինամիկ միտում, ապա պարզվում են այդ գերազանցումների պատճառները, ճշտվում են հակազդեցության գործողությունները, միջոցները, և վերացվում են խախտումները՝ նախատեսված միջոցառումներին համապատասխան:

Շրջակա միջավայրի իրավիճակի մասին տեղեկատվությունը, թույլ է տալիս կանխարգելել կամ նվազեցնել շրջակա միջավայրի վրա նախաձեռնության ազդեցությունը, պլանավորել տարածաշրջանի բնապահպանական իրավիճակը և համապատասխան հետևություններ անել տարածաշրջանի կայուն զարգացման բնագավառում:

Տեղական բնապահպանական մշտադիտարկման արդյունքներով հետևություններ են անում տվյալ նեղ տարածաշրջանի, ազդակիր համայնքի սահմաններում, շրջակա միջավայրի, մարդու բնակության և գործունեության միջավայրի վրա համալիրի ազդեցության մասին:

Շրջակա միջավայրի մշտադիտարկման արդյունքները պետք է անհապաղ հրապարակվեն հասարակության և պետական լիազոր մարմինների համար ընդունելի ձևաչափով:

Դիտակետերի հենակետային ցանցում ընդգրկված մթնոլորտային օդի, հողի նմուշառման դիտակետերի տեղադիրքը ներկայացված է նկար 43-ում: Այդ կետերի մասին տեղեկությունը ներկայացվում է նաև աղյուսակի տեսքով: Մշտադիտարկման հենակետային ցանցում դիտակետերի քանակը և տեղադիրքը ընտրվում է հաշվի առնելով հանքավայրի հիդրոերկրաբանական և ինժեներաերկրաբանական առանձնահատկությունները և պայմանները:

«Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N 191-Ն որոշման համաձայն նախատեսվում է իրականացնել մշտադիտարկումներ:

Շահագործման ընթացքում իրականացվելու են աղյուսակ 23-ի մշտադիտարկումները.

1. մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, ՀՀ Կառավարության 22.02.2018թ.-ի N 191-Ն որոշման պահանջներին համապատասխան


2. լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական ստուգումներ, տարին մեկ անգամ հաճախականությամբ

3. օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ դրանց պահպանման համար նախատեսված տեղից դեպի հավաքող փոսը ուղղությամբ, տարին մեկ անգամ հաճախականությամբ:

Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման և աղտոտվածության ուսումնասիրության նպատակով վերցված նմուշների լաբորատոր հետազոտությունը նախատեսվում է իրականացնել հավատարմագրված, համապատասխան հավաստագրեր ունեցող լաբորատորիաներում:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության աղտոտման կանխարգելման մոնիտորինգի կետի տեղադիրքը և հանքավայրի հեռավորությունը զգայուն կլանիչներից ներկայացված են նկար 27-ում:

Բնապահպանական միջոցառումների (մշտադիտարկումների) համար նախատեսվում է տարեկան մասնահանել առնվազն 300.0 հազ.դրամ:



Նկ.27: Ջիլի կոնգլոբրեկցիանների հանքավայրի իրադրային սխեման: Մշտադիտարկման կետերի տեղադիրքը: 1. հողի և օդի մշտադիտ. կետ - $X = 8540158, Y = 4482751$, 2. Հողի, օդի և ջրի մշտադիտ. կետ - $X = 8540562, Y = 4482693$, 3. Հողի, օդի և ջրի մշտադիտ. կետ - $X = 8539395, Y = 4481125$, 4. Հողի օդի, աղմուկի մշտադիտ. կետ $X = 8541000, Y = 4482300$:

«ԱՐԱՄ-ՇԻՆ2007» ՄՊԸ արտադրական հրապարակում կնախատեսվի համապատասխան հաղորդակցման համակարգ (ինֆորմացիոն և շարժակալ կապ), որով հնարավոր է արտակարգ իրավիճակների ժամանակ կապ հաստատել ձեռնարկության վարչական կազմի, տեղական ինքնակառավարման մարմինների, շտապ օգնության հետ:

«Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N 191-Ն որոշման համաձայն ներկայացվում է մշտադիտարկումների աղյուսակը՝

Նախատեսվող բնապահպանական միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է աղ. 24-ում:

Մշտադիտարկումների պլանի կառուցվածքն ու բովանդակությունը

Մշտադիտարկումների օբյեկտը	Մշտադիտարկումների վայրը	Ցուցանիշը	Մշտադիտարկումների տեսակը	Նվազագույն հաճախականությունը
Մակերևութային ջրեր	շահագործական փորվածքների արտահոսքեր, հիդրոտեխնիկական կառույցների արտահոսքեր, ջրերի հեռացման համակարգեր, կենացաղային արտահոսքեր	ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75-Ն որոշմամբ սահմանված նորմեր	նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, հոսքի ուսումնասիրություն	շաբաթական մեկ անգամ
Ստորերկրյա ջրեր	հանքավայրի շրջակայքում առկա բնական աղբյուրների ելքեր, ստորգետնյա ջրերի հորիզոնների դիտակետեր	- ջրերի քիմիական կազմ, - մակարդակ	նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն	ամսական մեկ անգամ
Մթնոլորտային օդ	բացահանքի տարածք, ճանապարհներ, արտադրական հրապարակ, ընդերքօգտագործման թափոնների օբյեկտի տարածք, ազդակիր համայնքներ, ըստ քամիների վարդերի գերակշռող ուղղությունների արտանետումների աղբյուրից 5 կմ հեռավորություն	- հանքավոշի, այդ թվում՝ ծանր մետաղներ և կախյալ մասնիկներ (PM10 և PM2.5), ածխածնի օքսիդ, ածխաջրածիններ, ազոտի օքսիդներ, մուր, ծծմբային անհիդրիդ, բենզ (ա)պիրեն, մանգանի օքսիդներ, ֆտորիդներ, երկաթի օքսիդներ, ֆտորաջրածին	նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, չափումներ ավտոմատ չափման սարքերով	շաբաթական մեկ անգամ՝ 24 ժամ տևողությամբ
Հողային ծածկույթ	շահագործական փորվածքներ, արտադրական հրապարակ, ընդերքօգտագործման թափոնների օբյեկտի տարածք, վերամշակող գործարանների, արտադրամասերի շրջակայք	- հողերի քիմիական կազմը (pH, կատիոնափոխանակման հատկությունները, էլեկտրահաղորդականության հատկանիշներ, մետաղների պարունակությունը՝ Fe, Ba, Mn, Zn, Sr, B, Cu, Mo, Cr, Co, Hg, As, Pb, Ni, V, Sb, Se), - հողերի կազմաբանությունը՝ կավի պարունակությունը, բաշխումն ըստ մասնիկների չափերի, ջրակլանումը, ծակոտկենությունը, - հումուսի պարունակությունը, - հողերում նավթամթերքների պարունակությունը	նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, չափումներ ավտոմատ չափման սարքերով	- տարեկան մեկ անգամ - ամսական մեկ անգամ
Վայրի բնություն, կենսամիջավայր, կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակներ	ընդերքօգտագործման տարածքին հարակից շրջան	տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն	հաշվառում, նկարագրություն, քարտեզագրում	տարեկան մեկ անգամ

ՀՀ Գեղարքունիքի մարզի Ջիլի կոնգլոբրեկցիանների հանքավայրի արդյունահանման բնապահպանական կառավարման պլան

Գործողություն	Հնարավոր ազդեցություն	Մեղմման միջոցառում	Մեղմման հայտանիշ	Մեղմման համար պատասխանատու
1. Աշխատանքի անվտանգություն	Վնասվածքներ և պատահարների աշխատանքների կատարման վայրում	<ul style="list-style-type: none"> - Հանքի աշխատողներին համազգեստով և Անհատական Պաշտպանության Միջոցներով (ԱՊՄ) ապահովում - Հանքի սարքավորումների շահագործման և ԱՊՄ օգտագործման կանոնների խիստ պահպանում - Աշխատանքի պաշտպանության հրահանգների առկայություն 	<ul style="list-style-type: none"> - Ջնմման ընթացքում հանքի աշխատողները կրում էին համազգեստ և համապատասխան ԱՊՄ - Ջնմման ընթացքում սարքավորումների շահագործման և օգտագործման հրահանգների խախտումներ չեն արձանագրվել 	«ԱՐԱՄ-ՇԻՆ2007» ՍՊԸ
2. Արդյունահանման աշխատանքներ	Օդի աղտոտում փոշիով և արտանետումներով Ազդեցություն կենսաբազմազանության վրա	<ul style="list-style-type: none"> - Արդյունահանման աշխատանքներից առաջացած նյութի պահում հսկվող գոտում և ջրցանում փոշու առաջացումը նվազեցնելու համար - Փոշու առաջացման կասեցում պնևմատիկ փորումների ընթացքում շարունակական ջրցանման/կամ փոշուց պաշտպանող էկրանի տեղադրման միջոցով - Շրջակա միջավայրը պահել մաքուր բեկորներից փոշու առաջացումը նվեցնելու նպատակով 	<ul style="list-style-type: none"> - Չհսկվող տարածքում առանց ջրցանման բեկորներ չեն հայտնաբերվել - Ոչ մի պնևմատիկ փորում առանց շարունակական ջրցանման և/կամ փոշուց պաշտպանող էկրանի տեղադրման - Ջնմման ընթացքում շրջակա միջավայրը եղել է մաքուր բեկորներից - Ջնմման ընթացքում աշխատանքների կատարման վայրում նյութերի/ թափոնների բաց այրում չի հայտնաբերվել 	«ԱՐԱՄ-ՇԻՆ2007» ՍՊԸ

		<ul style="list-style-type: none"> - Աշխատանքների կատարման վայրում նյութերի/թափոնների բաց այրման արգելում - Հանքի տեխնիկան և մեքենաները պահել պատշաճ տեխնիկական վիճակում՝ բացառելով ավելորդ արտանետումները - Հանքի մեքենաները չպահել ավելորդ պարապ ընթացքի մեջ - կենդանիների և թռչունների բներ հայտնաբերելիս դադարեցնել տեղնիկաների և տրանսպորտային միջոցների աշխատանքը և դիմել համապատասխան մասնագետներին միջոցառումներ նախատեսելու նպատակով 	<ul style="list-style-type: none"> - Ջննման ընթացքում հանքի տեխնիկան և մեքենաները շահագործվել են առանց հավելյալ արտանետումների - Մոտակայքի բնակիչներից բողոքներ չեն եղել 	
աղմուկ		<ul style="list-style-type: none"> - Սահմանված աշխատանքային ժամերի պահպանում - Գեներատորների, օդի կոմպրեսորների և այլ ուժային մեխանիկական սարքավորումների շարժիչների ծածկերի փակում շահագործման ընթացքում, և սարքավորումների՝ բնակելի տարածքներից հնարավորինս հեռու տեղադրում - Աղմկախլացուցիչների տեղադրում շարժական կայան- 	<ul style="list-style-type: none"> - Աշխատանքային ժամերից հետո ոչ մի աշխատող սարքավորում չի հայտնաբերվել - Ջննման ընթացքում հանքի սարքավորումները եղել են բավարար տեխնիկական վիճակում - Ջննման ընթացքում միացված չօգտագործվող սարքավորումներ չեն հայտնաբերվել - Մոտակայքի բնակիչներից 	«ԱՐԱՄ-ՇԻՆ2007» ՍՊԸ տնօրեն

		ների և սարքավորումների վրա - Սարքավորումների կանխարգելիչ վերանորոգում արմուկը նվազեցնելու նպատակով - Ոչ անհրաժեշտ և չօգտագործվող սարքավորումների անջատում	բողոքներ չեն եղել	
3. Հանքանյութի տեղափոխում հանքի տեխնիկայի տեղաշարժ	- Աղտոտում մեքենաների, մեխանիզմների ոչ պատշաճ տեխնիկական վիճակի Աղմուկի և փոշու պատճառով տեղի բնակչությանը պատճառած անհարմարություն	- Մեքենաների և սարքավորումների պատշաճ տեխնիկական վիճակի ապահովում - Փոխադրման հաստատված ժամերի և երթուղիների պահպանում	- Ձևման ընթացքում մեքենաները և տեխնիկական վիճակում - Ձևման ընթացքում չծածկված բեռներ չեն հայտնաբերվել - Աշխատանքային ժամերից հետո ոչ մի աշխատանք չի իրականացվում, որը կարող է խանգարել մոտակայքի բնակչությանը - Մոտակայքի բնակիչներից բողոքներ չեն եղել	«ԱՐԱՄ-ՇԻՆ2007» ՍՊԸ տնօրեն
4. Հանքի տեխնիկայի շահագործում	- Շրջակա միջավայրի աղտոտում արտանետումներով և արտահոսքերով - Մոտակայքի բնակչությանը պատճառած անհարմարություն	- Հանքի սարքավորումների պատշաճ տեխնիկական վիճակի ապահովում - Ոչ մի հավելյալ արտանետում - Վառելիքի և քսայուղերի ոչ մի արտահոսք - Աշխատանքային ժամերի պահպանում	- Ձևման ընթացքում մեքենաները և տեխնիկական եղել են պատշաճ տեխնիկական վիճակում - Հաստատված աշխատանքային ժամերից հետո ոչ մի շահագործվող ծանր տեխնիկա կամ մեքենա չի հայտնաբերվել - Մոտակայքի բնակիչներից բողոքներ չեն եղել	«ԱՐԱՄ-ՇԻՆ2007» ՍՊԸ տնօրեն

<p>5. Արդյունահանման սարքավորումների սպասարկում</p>	<ul style="list-style-type: none"> - Սարքավորումների շահագործման հետևանքով մակերևութային և ստորգետնյա ջրերի և հողի աղտոտում նավթաթերթերով - Վնաս հրդեհի դեպքում 	<ul style="list-style-type: none"> - Մեքենաների և տեխնիկայի լվացում բնական հոսքերից առավելագույն հեռավորության վրա - Հանքի տեխնիկայի յուղում և լցավորում նախապես որոշված լցավորման կայաններում/ սպասարկման կետերում 	<ul style="list-style-type: none"> - Մեքենաների լվացման արդյունքում ոչ մի ուղղակի արտահոսք դեպի ջրային ավազաններ - Հանքի տարածքի սահմաններում կամ մոտակայքում հողի վրա վառելիքի կամ քսայուղերի հետքեր չեն հայտնաբերվել - Հրդեհի մարման հիմնական միջոցների առկայություն հանքի տարածքում 	<p>«ԱՐԱՄ-ՇԻՆ2007» ՍՊԸ տնօրեն</p>
<p>6. Անվտանգ թափոնների գոյացում</p>	<ul style="list-style-type: none"> - Պատահարներ հանքի տարածքում ապարների բեկորների ցրված մասնիկների պատճառով - Հանքի տարածքի և շրջապատի գեղագիտական տեսքի վատացում 	<ul style="list-style-type: none"> - Դատարկ ապարների պահեստավորում հատուկ հատկացված վայրերում - Դատարկ ապարների լցակույտերի պարբերական ջրցանում փոշու գոյացումը նվազացնելու նպատակով 	<ul style="list-style-type: none"> - Հանքի տարածքում դատարկ ապարները կուտակված են հատկացված վայրերում - Հանքի տարածքում փոշու արտանետումների բացակայություն 	<p>«ԱՐԱՄ-ՇԻՆ2007» ՍՊԸ տնօրեն</p>
<p>7. Հեղուկ թափոնների գոյացում</p>	<ul style="list-style-type: none"> - Աշխատանքների կատարման վայրում սանիտարահիգիենիկ պայմանների վատացում 	<p>Հանքի տարածքում զուգարանների տեղակայում և պահպանում սանիտարական նորմերին համապատասխան</p>	<p>Հանքի տարածքում պատշաճ սանիտարական պայմաններում գտնվող զուգարանների առկայություն</p>	<p>«ԱՐԱՄ-ՇԻՆ2007» ՍՊԸ տնօրեն</p>
<p>8. Բանեցված յուղերի հեռացումից գոյացող թափոններ</p>	<p>-Արդյունահանման աշխատանքների կատարման վայրի և շրջապատի գեղագիտական տեսքի վատթարացում</p>	<ul style="list-style-type: none"> - Յուղերի անվտանգ փոխադրում պահեստային տարածք - Յուղերի անվտանգ պահեստավորում - Յուղերի հեռացում լիցենզավորված կազմակերպության կողմից 	<ul style="list-style-type: none"> - Փոխարինված յուղերը պատշաճ կերպով պահեստավորված են - Փոխարինված յուղերը հեռացված են լիցենզավորված կազմակերպության կողմից 	<p>«ԱՐԱՄ-ՇԻՆ2007» ՍՊԸ տնօրեն</p>
<p>9. Երթևեկության և հետիոտների անվտանգություն</p>	<p>Ուղղակի և անուղղակի վտանգներ երթևեկությանը և հետիոտներին հանքի շահագործման աշխատանքների</p>	<ul style="list-style-type: none"> - Նախագուշացնող նշաններ, արգելքներ և երթևեկության ուղղության փոփոխում - Երթևեկության կառա- 	<ul style="list-style-type: none"> - Հանքի ապահով տարածք - Աշխատանքների հստակ տեսանելի տարածք, հանրության զգուշացում հնա- 	<p>«ԱՐԱՄ-ՇԻՆ2007» ՍՊԸ տնօրեն</p>

	<p>Ժամանակ</p>	<p>վարման համակարգ և անձնակազմի ուսուցում, հատկապես հանքի մուտքի մոտ և մոտակա ինտենսիվ երթևեկության կառավարման համար: Անվտանգ անցումների ապահովում հետիոտների համար այն վայրերում, որտեղ անցնում են հանքը սպասարկող մեքենաները</p> <ul style="list-style-type: none"> - Աշխատանքային ժամերի հարմարեցում տեղի երթևեկության պայմաններին, օրինակ՝ խուսափում խոշոր փոխադրումներից ինտենսիվ երթևեկության ժամերին, - Տարածքում երթևեկության ակտիվ կառավարում պատրաստված և տեսանելի արտահագուստով անձնակազմի կողմից, եթե դա պահանջվում է մարդկանց անվտանգ ու հարմարավետ տեղաշարժի համար 	<p>րավոր վտանգների վերաբերյալ -Կարգավորված երթևեկություն</p>	
--	----------------	--	--	--

<p>10. Վտանգավոր թափոնների (յուղոտ լաթեր, յուղով աղտոտված ավազ) առաջացում</p>	<ul style="list-style-type: none"> - Անձնակազմի ռոդջությանը սպառնացող վտանգ - Հանքի տարածքի և շրջապատի հողերի, մակերևութային և ստորգետնյա ջրերի աղտոտում 	<ul style="list-style-type: none"> - Վտանգավոր թափոնների առանձնացում ենթակայանում առաջացած այլ տեսակի թափոններից - Պատշաճ կերպով փակվող և պահպանվող պահեստային տարածքի առկայություն վտանգավոր նյութերի համար - Համաձայնություն լիցենզավորված կազմակերպությունների հետ ազգային օրենսդրությանը և լավագույն ազգային պրակտիկային համապատասխան վտանգավոր թափոնները տարածքից դուրս բերելու և վերամշակելու / հեռացնելու վերաբերյալ 	<p>Պատշաճ սանիտարական պայմաններ հանքում և դրա շուրջ</p>	<p>«ԱՐԱՄ-ՇԻՆ2007» ՍՊԸ տնօրեն</p>
---	--	--	---	----------------------------------

12. ՀԱՆՔԻ ՓԱԿՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Հանքի փակման ծրագրի կազմման հիմնական նպատակը օգտակար հանածոների արդյունահանման ընթացքում խախտված/վտանգված շրջակա միջավայրի բնական բաղադրիչների (հողային և ջրային ռեսուրսներ, մթնոլորտային օդ, բուսական և կենդանական աշխարհ) վերականգնման և հետագա մոնիտորինգի իրականացման սկզբունքային հիմնահարցերի ձևակերպումն է:

Փակման ծրագրում պետք է ներկայացված լինի տեղեկատվություն օգտակար հանածոյի հանքավայրի շահագործման ավարտից հետո կատարվելիք բոլոր միջացառումների վերաբերյալ: Այս միջոցառումներն ընդհանրացված համատեքստում նպատակաուղղված պետք է լինեն հետևյալ խնդիրների լուծմանը.

ա. ենթակառուցվածքների, մեքենաների, սարքավորումների և շինությունների ապամոնտաժում,

բ. օգտակար հանածոյի արդյունահանման հետևանքով խախտված հողատարածքների ռեկուլտիվացիայի ծրագիր,

գ. աշխատուժի սոցիալական մեղմացման ծրագիր,

դ. օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, հանքավայրի շահագործման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի, դրանց հարակից համայնքների անվտանգության և բնակչության առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման ծրագիր:

Ծրագիրը պարբերաբար կթարմացվի՝ արտացոլելով բացահանքի աշխատանքային փուլերում շահագործման կամ շրջակա միջավայրի փոփոխությունները:

Շահագործման աշխատանքների ավարտից 2 տարի առաջ կմշակվի հանքի փակման ծրագրի վերջնական տարբերակը:

Ելնելով նախագծում ընդունված մշակման եղանակից, ինչպես նաև լեռնաերկրաբանական պայմաններից ընտրված է դատարկ ապարների արտաքին լցակույտ-առաջացում: Ընդհանուր ծավալը կազմում է 935348մ³:

Դատարկ ապարները տեղադրվում են բացահանքից հյուսիս-արևմուտք 500մ հեռավորության վրա ձևավորվող արտաքին լցակույտ: Արտաքին լցակույտի զբաղեցրած տարածքը կազմում է 4.8հա, վերին հարթակի մակերեսը – 3,0հա, վերին հարթակի նիշը – 2480մ: Լցակույտի առավելագույն բարձրությունը – 75մ, շեյի թեքման անկյունը – 33°:

Բացահանքը վերջնական դիրքում ունի հետևյալ պարամետրերը՝

- Ամենամեծ երկարությունը – 245մ

- Ամենամեծ լայնությունը – 175մ

- Բացահանքի օտարման մակերեսը կազմում է 4.2հա:

Հանքավայրի շահագործումից հետո կատարվելու է խախտված ռելիեֆի վերականգնում: Ռելիեֆի վերականգնումը կատարվելու է հարթեցմամբ: Հարթեցումը կկատարվի բացահանքի հատակի ողջ մակերեսով՝ 1180մ², ինչպես նաև արտադրական հրապարակը 300մ² և լցակույտի վերին հարթակը 30000մ²: Ընդհանուր մակերեսը կլինի՝ 31480մ²:

12.1. Մշտադիտարկումների ծրագիր

Օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, լցակույտի և դրան հարակից տարածքներում մշտադիտարկումների իրականացումը հնարավորություն կընձեռնի ստեղծելու տեղեկատվական հենք փակված հանքի երկրաբանական միջավայրի, հիդրոերկրաբանական և ինժեներաերկրաբանական պայմանների փոփոխության վերաբերյալ:

12.1.1. Մշտադիտարկումների կետերի տեղադիրքը, հաճախականությունը և տևողությունը

Մշտադիտարկումների իրականացման դիտակետեր նախատեսվում է տեղադրել՝

1. Օգտակար հանածոյի արդյունահանված տարածքում՝ բացահանքի կողերի դեֆորմացիաները (սողանքներ, փլուզումներ) գնահատելու նպատակով:

2. Օգտակար հանածոյի արդյունահանված տարածքում՝ վերակուլտիվացիոն աշխատանքների արդյունքների գնահատման համար:

3. Բացահանքի հարակից տարածքում՝ ռելիեֆի հնարավոր դեֆորմացիաները գնահատելու նպատակով:

4. Լցակույտի տարածքում՝ լցակույտի կողերի դեֆորմացիաները (սողանքներ, փլուզումներ) գնահատելու նպատակով:

2. Լցակույտի տարածքում՝ վերակուլտիվացիոն աշխատանքների արդյունքների գնահատման համար:

3. Լցակույտի հարակից տարածքում՝ ռելիեֆի հնարավոր դեֆորմացիաները գնահատելու նպատակով:

Մշտադիտարկումների պարբերականությունը՝ տարին 1 անգամ:

Մշտադիտարկման ձևը՝ տեղագնություն:

Մշտադիտարկումների իրականացման ծրագիրը շահագործման աշխատանքների ավարտից 2 տարի առաջ ենթակա է վերանայման՝ ներկայացվող հանքի փակման վերջնական ծրագրին համապատասխան:

Մշտադիտարկումներն իրականացվելու են 5 տարի տևողությամբ, մինչև երկրադինամիկ, հիդրոդինամիկ և շրջակա միջավայրի հնարավոր աղտոտվածությունը բնութագրող ցուցանիշների կայունացումը:

Մշտադիտարկումների վրա տարեկան նախատեսվում է ծախսել 120.0 հազ. դրամ:

12.2. Աշխատուժի մեղմացումը

Արդյունահանման աշխատանքներին մանակցելու են 18 մարդ, որոնք ներգրավված են լինելու համայնքից:

Շահագործման աշխատանքների ավարտին բոլոր աշխատակիցներին կվճարվի ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրամական փոխհատուցում:

Հանքավայրի շահագործման ավարտից 2 տարի առաջ կներկայացվի հանքի վերջնական փակման ծրագիրը:

Ընկերությունը պարտավորվում է հանքի փակումից հետո՝

- աշխատուժի սոցիալական մեղմացման նպատակով տրամադրել շուրջ 650 հազ. ՀՀ դրամ աշխատողների վերավորակավորման և այլ ճյուղերում աշխատանքի տեղավորելու համար:

- հանքի անմիջական ազդեցության գոտում գտնվող համայնքների սոցիալ-տնտեսական մեղմացման նպատակով նախատեսվում է ցուցաբերել մասնակցություն համայնքի ծրագրերին տրամադրելով շուրջ 750 հազ. դրամ:

Վերոհիշյալ պարտավորությունները կվերանայվեն հանքի վերջնական փակման ծրագրում:

12.3. Ֆինանսական երաշխիքները

Հանքավայրում օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներն ավարտելուց հետո կատարվելու է հանքի փակման գործընթաց, որն իր մեջ ներառում է խախտված տարածքների լեռնատեխնիկական վերակուլտիվացում, արտադրական հրապարակի ապամոնտաժում և տեղափոխում, բացահանքի և լցակույտի տարածքների մշտադիտարկում, շրջակայքում նախազգուշացնող, արգելափակող միջոցների տեղադրում և աշխատավարձի ֆոնդի ստեղծում: Դրանց համար ընկերությունը կատարել է ֆինանսական ծախսերի հաշվարկ, որը ներկայացվում է ստորև:

Հանքարդյունահանման աշխատանքների ժամանակ խախտված հողեր են հանդիսանում բացահանքի և արտաքին լցակույտերի տարածքները:

Բացահանքի հատակի, արտադրական հրապարակի և լցակույտի վերին հարթակի մակերևույթի լեռնատեխնիկական վերականգնումները իրականացվելու է բացահանքի շահագործման ավարտից հետո՝ բուլդոզերով հարթեցման միջոցով:

Հարթեցումը կկատարվի բացահանքի հատակի ողջ մակերեսով՝ 1180մ², ինչպես նաև արտադրական հրապարակը 300մ² և լցակույտի վերին հարթակը 30000մ²: Ընդհանուր մակերեսը կլինի՝ 31480մ²:

Հանքի փակման ծրագրով նախատեսված աշխատանքների ծախսերի խոշորացված հաշվարկը բերված է 25-29 աղյուսակներում:

Աղյուսակ 25

Խախտված հողատարածքների վերականգնման ծախսերի խոշորացված հաշվարկները անհրաժեշտ նյութերի ծախսը

N	Աշխատանքի անվանումը (օգտագործվող սարքավորումները)	Աշխատանքի տևողությունը, ժամ	Ծախսվող նյութերի անվանումը	Նյութերի ծախսը		Նյութերի արժեքը,	
				Միավոր ժամանակում	ընդամենը	Միավորի, ՀՀ դրամ	Ընդամենը հազ.ՀՀ դրամ
1.	Ապարների վերջնական փոում հարթեցում	և 56	Դիզ.վառ	37.4	2094.4	450	942.48
			Դիզ.յուղ	2.1	117.6	500	58.8
			Այլ քսուկներ	4.1	229.6	550	126.28
ընդամենը							1127.56

Սարքավորումների ամորտիզացիոն ծախսերի հաշվարկը

N	Սարքավորումների անվանումը	Քանակը, հատ	Միավորի արժեքը, հազ. ՀՀ դրամ	Ամորտիզացիոն ծախսը, %	Ընդհանուր գումարը, հազ. ՀՀ դրամ
1.	բուլդոզեր	1	8500.0	0.2	17.0
	ընդամենը				17.0
2.	վերանորոգում			50	8.5
	ամբողջը				25.5

Աշխատավարձի ֆոնդի հաշվարկը

N	Պաշտոնը կամ մասնագիտությունը	Աշխատողների քանակը, մարդ	Աշխատաժամերի քանակը, ժամ	Մեկ ժամվա աշխատավարձը, ՀՀ դրամ	Աշխատավարձի չափը, հազ. ՀՀ դրամ
1.	Բուլդոզերի մեքենավար	1	70	3500	245
	ընդամենը				245

Բացահանքի մշակված տարածության լեռնատեխնիկական վերակուլտիվացիայի համար անհրաժեշտ ծախսերի խոշորացված նախահաշիվը

N	Ծախսերի հոդվածներ	նորմը, %	Գումարը, հազ. ՀՀ դրամ
1.	Նյութեր	-	1127.56
2.	Ամորտիզացիա և վերանորոգում		25.5
3.	Աշխատավարձ	-	245
4.	Սոց. ապահովման փոխանցումներ	20.5	50.23
	Ընդամենը ուղղակի ծախսեր		1448.29
5.	Այլ ծախսեր	10	144.8
	ամբողջը		1593.09
6.	Անուղղակի ծախսեր	5.3	84.43
	Ամբողջը		1677.52
7.	Շահույթահարկ	10	167.8
	Բոլորը		1845.32

8.	Վերակուլտիվացված միավոր տարածքի համար անհրաժեշտ ծախսերը		58.6
9.	Օգտակար հանածոյի միավոր զանգվածի արդյունահանման համար վերակուլտիվացիայի անհրաժեշտ ծախսերը		5.9

Լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայից հետո իրականացվելու է բիոլոգիական ռեկուլտիվացիա, որի համար նախատեսվում է 100000 դրամ 1հա մակերեսի համար: Ընդհանուրը կլինի 314800դրամ:

Ամբողջ ռեկուլտիվացիայի արժեքը կկազմի 2160120դրամ:

Աղյուսակ 29

Հանքի փակման համար անհրաժեշտ ծախսերի նախահաշիվ

Ծախսերի հոդվածները	Գումարը, հազ. դրամ
Խախտված տարածքների լեռնատեխնիկական վերակուլտիվացման համար անհրաժեշտ ծախսը	2160.12
Արտադրական հրապարակի ապամոնտաժում, տեղափոխում	250.0
Բացահանքի տարածքի մոնիտորինգ	600.0
Նախազգուշացնող, արգելափակող միջոցների տեղադրում	120.0
Ամբողջը	3130.12

Համաձայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների, ընդերքօգտագործման իրավունքի տրամադրումից հետո, մեկ ամսվա ընթացքում՝ ընկերությունը պետք է վճարի հանքավայրի տարածքի ռեկուլտիվացիայի և մշտադիտարկումների համար հաշվարկված գումարի 15%-ը, ինչպես նաև, որպես հանքի փակման աշխատանքների ֆինանսական երաշխիք, անձեռնամխելի գումար կհատկացվի հանքի ֆիզիկական փակման, աշխատուժի մեղմացման համար՝ աշխատակիցների մեկամսյա աշխատավարձի չափով:

Ֆինանսական երաշխիքը ուժի մեջ է այնքան ժամանակ, մինչև մոնիտորինգի արդյունքները կվկայեն, որ ֆիզիկական փակումը, շրջակա միջավայրի վերականգնումը և աշխատուժի մեղմացումը բավարար են:

Նախատեսվող աշխատանքների կատարման ժամկետները՝

1. Բացահանքի, լցակույտի և արտադրական հրապարակի տարածքների վերականգնում – 7օր
2. Արտադրական հրապարակի ապամոնտաժում, սարքավորումների տեղափոխում – 2օր
3. Նախազգուշացնող, արգելափակող միջոցների տեղադրում – 5օր
4. Բացահանքի տարածքի մոնիտորինգ – 5 տարի:

Նյութերի արժեքների և սարքավորումների շուկայական գների փոփոխության հետ
զուգընթաց հանքի փակման համար անհրաժեշտ ծախսերի նախահաշիվը ենթակա է
ինդեքսավորման:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Խաչատրյան Ռ. Գ., Գրիգորյան Մ. Ա., Մինասյան Ռ. Ս. ՀՀ տարածքի սողանքների դասակարգման եվ շրջանացման հարցի վերաբերյալ: ԵՊՀ Գիտական տեղեկագիր: Երկրաբանություն և աշխարհագրություն, 2015, № 2, էջ. 39–43:
2. Հակոբյան Թ. Խ., Մելիք-Բախշյան Ստ. Տ., Բարսեղյան Հ. Խ. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 4 [Ն-Վ] (խմբ. Մանուկյան Լ. Գ.), Երևան, «ԵՊՀ Հրատարակչություն», 1986, էջ 305 — 804 էջ:
3. Հակոբյան Լ., Գևորգյան Յու. Հաշվետվություն ՀՀ Գեոարքունիքի մարզի Ջիլի կոնգլոբրեկչիանների հանքավայրում կատարված երկրաբանահետախուզական աշխատանքների արդյունքների վերաբերյալ 01.10.2011թ. դրությամբ պաշարների հաշվարկմամբ: Երևան, 2011, 56 էջ, «Երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ ինվենտար համար 6766:
4. Հայաստանի Հանրապետության Ֆիզիկաաշխարհագրական օբյեկտների համառոտ տեղեկատու - բառարան, Ե, «Գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն ՊՈԱԿ», 2007, էջ 99 — 150 էջ,
5. Հայաստանի ազգային ատլաս, հ. Ա, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 2006, 232 էջ:
6. Հայաստանի բույսերի Կարմիր Գիրք.– 2010թ.
7. Հայաստանի կենդանիների Կարմիր Գիրք.– 2011թ.
8. «Հայաստանի թռչուններ» Մարտին. Ադամյան, Դանիել Քլեմ Կրոսեր, Երևան 2000թ.,
9. «Հայաստանի բնաշխարհ» խմբագր. հանձնաժողով. Հ.Մ. Այվազյան գլխ. խմբագիր և ուրիշ. Երևան 2006 թ, էջ- 641 (քարտեզներ):
10. Հայրապետյան Է.Մ. Հողագիտություն: Դասագիրք Հայկական գյուղատնտեսական ակադեմիայի ուսանողների համար: Երևան, «Ասողիկ», 2000թ, 456 էջ:
11. Մուրադյան Վ. Ս. Հողերի աշխարհագրություն: Դաշտային պրակտիկայի կազմակերպման ուսումնամեթոդական ուղեցույց: Երևան., ԵՊՀ հրատ., 2016, 52 էջ:
12. Շրջակա միջավայրի վիճակի մասին տեղեկագիր: ՇՄՆ «Հիդրոթերմոլեոբանություն և մոնիտորինգի կենտրոն» (2020թ.):
13. «ՀՀ բնակավայրերի մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաները» ուղեցույց – ձեռնարկ:
14. Սարգսյան Հ.Հ.: Հայաստանի ռեգիոնալ երկրատեկտոնիկա: Երևան, ԵՊՀ հրատ., 1989, 300 էջ:
15. Սոթքի բացահանքի և ստորգետնյա հանքի նախագծի Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն: «ԱԿՈՒՆՔ-ՖԻՐՄԱ» ՍՊԸ, Երևան, 2022թ., 450 էջ :
16. Փանոսյան Ա, Խարազյան Է.Խ. 2007-2010 թթ.. ՀՀ տարածքի առավել վտանգավոր սողանքների ամփոփագրիկազմման աշխատանքների հաշվետվություն (5 հատոր): Երևան, 2010, «Երկրաբանական ֆոնդեր» ՊՈԱԿ, ինվենտար համար 6695:
17. Бойнагрян В.Р., Степанян В.Э., Хачатрян Д.А., Ядоян Р.Б., Аракелян Д.Г., Гюрджян Ю.Г. Оползни Армении. Ер., 2009, 310 с.
18. Бойнагрян В. Р. Оползни армянского нагорья. Ученые записки ЕГУ. Геология и география, 2017, 51(2), с. 103–109.
19. Габриелян А.А., Саркисян О.А., Симонян Г.П. Сейсмоструктура Армянской ССР. Ереван, ЕГУ, 1981, 284 с.

20. Животный мир Армянской ССР. Даль С.К ,1954
21. Карташян Н. Г. (2014) Флора и растительность восточной части Иджеванского флористического района Армении. Автореф. дис.канд. биол. наук, Ереван, 25 с.
22. Почвы Армянской ССР. Ред./ Р.А. Эдилян, Г.П. Петросян, Н.Н. Розов. Ереван: “Айастан”, 1976 г.
23. Файвуш Г. М. Эндемичные растения флоры Армении. Флора, растительность и растительные ресурсы Армении. Ереван, 2007,16, с. 62–68
24. Файвуш Г.М., Алексанян А.С. Местообитания Армении/ Г. М. Файвуш, А. С. Алексанян. – Ер.: НАН РА, Институт ботаники, 2016. – 360 с.,

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ ՊՈԱԿ

REPUBLIC OF ARMENIA
NATIONAL ACADEMY OF SCIENCES
INSTITUTE OF ARCHAEOLOGY
AND ETHNOGRAPHY SONP



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ
И ЭТНОГРАФИИ ГНКО

26. 04. 2023 թ.

N 2470 - 113

«ԱՐԱՄ-ՇԻՆ 2007» ՍՊԸ տնօրեն պրն. Կ. Մելքոնյանին

Հարգելի պրն. Մելքոնյան ,

Ի պատասխան Ձեր 31/03/2023 գրությունների ՀՀ Գեղարքունիքի մարզի Ջիլ համայնքի գտնվող հանքավայրի շրջանում գտնվող պատմամշակութային հուշարձանի հնարավոր առկայության մասին, կցում ենք համապատասխան մասնագիտական կարծիքը:

Առդիր 1 փաստաթուղթ:

ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՏՆՕՐԵՆ՝



Ա. ԲՈԲՈՔՅԱՆ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԶԻԼ ԳՅՈՒՂԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ
ՏԵՂԱԶՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՑՈՒՆՔՆԵՐԸ

Ապրիլի 24-ին <<ԱՐԱՄ-ՇԻՆ 2007>> ՍՊԸ պատվերով տեղագնություն իրականացրեցինք Գեղարքունիքի մարզի (Ճամբարակի տարածաշրջան) Զիլ գյուղի վարչական տարածքում: Այստեղ նախատեսված է շահագործել քարհանք, որը գտնվում էր գյուղից մոտ 3 կմ դեպի հյուսիս, դաշտամիջյան ճանապարհի մոտ (կոորդ.՝ 40.477789, 45.47935): Շահագործվելիք հանքի տարածքը բլրաշատ, բնակության համար ոչ պիտանի քարքարոտ, աղքատ բուսականությամբ մի վայր էր, որտեղ ամենուր ժայռերից թափված խոշոր քարեր էին ընկած:

Տեղագնության ընթացքում այստեղ պատմամշակութային հուշարձանների հետքեր չեն նշմարվել, չեն հայտնաբերվել նաև վերգետնյա հնագիտական գտածոներ:



Հարություն Բաղայան

ԳԱԱ Հնագիտության և ազգագրության

ինստիտուտի աշխատակից

ОТЧЕТ

Расчёт загрязнения атмосферы унифицированной программы расчёта
загрязнения атмосферы УПРЗА «ЭКО центр»

Объект: «ԱՐԱՄ-ՇԻՆ2007» ՍՊԸ

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԶԻԼԻ ԿՈՆԳԼՈՒՐԵԿՉԻԱՆՆԵՐԻ
ՀԱՆՔԱՎԱՅՐ

Расчёт загрязнения атмосферы выполнен в соответствии с ОНД-86 «Методика расчета концентраций в атмосферном воздухе вредных веществ, содержащихся в выбросах предприятий», с использованием унифицированной программы расчёта загрязнения атмосферы УПРЗА «ЭКО центр».

1.1 Исходные данные для проведения расчета загрязнения атмосферы

порог целесообразности по вкладу источников выброса: **0,05**;

площадь города (для экстраполяции фона), км²: **20000**;

расчетный год **2023**.

Метеорологические характеристики и коэффициенты:

коэффициент, зависящий от температурной стратификации атмосферы: **200**;

средняя температура наружного воздуха, °С: **16,9**;

коэффициент рельефа: **1,45**.

Параметры перебора ветров:

направление, метео °: **0 - 360** (шаг 1);

скорость, м/с: **0,5 - 24** (шаг 0,1).

Основная система координат - правая с ориентацией оси ОУ на Север.

Количество загрязняющих веществ в расчете - 6 (в том числе твердых - 2; жидких и газообразных - 4), групп суммации - 2. Перечень и коды веществ и групп суммации, участвующих в расчёте загрязнения атмосферы, с указанием класса опасности и предельно-допустимой концентрации (ПДК) либо ориентировочного безопасного уровня воздействия (ОБУВ), приведен в таблице 1.1.1.

Таблица № 1.1.1 - Перечень загрязняющих веществ и групп суммации

Загрязняющее вещество		Класс опасности	Предельно-допустимая концентрация, мг/м ³			
код	наименование		максимально -разовая	средне- суточная	ОБУВ	используется в расчете
1	2	3	4	5	6	7
2908	Пыль неорганическая: SiO ₂ 20-70%	3	0,3	0,1	-	0,3
337	Углерод оксид	4	5	3	-	5
301	Азота диоксид	3	0,2	0,04	-	0,2
2754	Алканы C12-19	4	1	-	-	1
2902	Взвешенные вещества	3	0,5	0,15	-	0,5
330	Сера диоксид	3	0,5	0,05	-	0,5
6204	Азота диоксид, серы диоксид					1,6

Примечание – Для групп суммации в графах 4-6 ПДК не указывается, а графе 7 приведен коэффициент комбинированного действия.

Сведения о концентрациях загрязняющих веществ на фоновых постах, используемых в расчете загрязнения атмосферы, приведены в таблице 1.1.2.

1.2 Расчет загрязнения по веществу «2908. Пыль неорганическая: SiO₂ 20-70%»

Полное наименование вещества с кодом 2908 – Пыль неорганическая, содержащая 70-20% двуокиси кремния (шамот, цемент, пыль цементного производства - глина, глинистый сланец, доменный шлак, песок, клинкер, зола кремнезем и др.). Максимально разовая предельно допустимая концентрация составляет 0,3 мг/м³, класс опасности 3.

Количество источников загрязнения атмосферы, учтенных в расчёте составляет - 1 (в том числе: организованных - 1, неорганизованных - нет). Распределение источников по градациям высот составляет: 0-10 м – 1; 11-20 м – нет; 21-29 м – нет; 30-50 м – нет; 51-100 м – нет; более 100 м – нет.

Суммарный выброс, учтенных в расчёте источников, составляет 6,516 грамм в секунду и 14,47 тонн в год.

Расчётных точек – 9, расчётных площадок - 1 (узлов расчётной сетки - 2006).

Максимальная расчётная приземная концентрация (См), выраженная в долях ПДК населенных мест, по расчётной площадке № 1 составляет:

- на границе СЗЗ **0,039**, которая достигается в точке № 3 X=652,38 Y=177,07, при направлении ветра 304°, скорости ветра 24 м/с, в том числе: вклад источников предприятия 0,039.

Сведения о типе и координатах точек, в которых выполнялся расчет загрязнения атмосферы, приведены в таблице 1.2.2.

Таблица № 1.2.2 - Параметры расчетных точек

Наименование	Координаты			Тип точки
	X	Y	высота, м	
1	2	3	4	5
Расчетная площадка 1(СК Основная СК)				
1	342,25	641,21	2	Точка на границе ОСЗЗ
2	636,42	502,08	2	Точка на границе ОСЗЗ
3	652,38	177,07	2	Точка на границе ОСЗЗ
4	311,53	15,86	2	Точка на границе ОСЗЗ
5	62,87	264,52	2	Точка на границе ОСЗЗ
6	219,87	430,59	2	Точка в промзоне
7	332,36	493,2	2	Точка в промзоне
8	544,1	247,45	2	Точка в промзоне
9	463,35	177,87	2	Точка в промзоне

Сведения о координатах расчетных площадок, шаге расчетной сетки, каждый узел которой образует расчетную точку, приведены в таблице 1.2.3.

Таблица № 1.2.3 - Параметры расчетных площадок

Наименование	Координаты срединной линии				Ширина, м	Высота, м	Шаг сетки, м	Шаг СЗЗ, м
	точка 1		точка 2					
	X ₁	Y ₁	X ₂	Y ₂				
1	2	3	4	5	6	7	8	9
1	-5434,95	184,18	6203,86	184,18	6654,977	2	200	-

Для каждого источника определены опасная скорость ветра, максимальная концентрация выброса в долях ПДК и расстояние, на котором достигается максимальная концентрация.

Параметры источников загрязнения атмосферы, учитываемых в данном варианте расчета, приведены в таблице 1.2.4.

Таблица № 1.2.4 - Параметры источников загрязнения атмосферы

№ ИЗА	Тип	Высота, м	Диаметр, м	Параметры ГВС			Координаты			К рел	Опас. скор. ветра, м/с	Загрязняющее вещество			Макс. конц-я, д.ПДК	Расст. до максима, м
				скорость, м/с	объем, м³/с	темп., °С	X ₁	Y ₁	ширина, м			код	масса выброса, г/с	К ос.		
1	2	3	4	5	6	7	8	9		10	11				12	13
Объект: 1. Объект №1 ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻԻ ՄԱՐԶԻ ՋԻԼԻ ԿՈՒՎՈՐԵԿՉԻՐԱՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 1. Площадка №1																
Цех: 1. Цех №1																
1	4	4	100	4	31415,9	16,9	503,73 291,98	212,66 458,41	106,6	1,45	286	2908	6,516	3	1,18	364,86

Значения приземных концентраций в каждой расчетной точке в атмосферном воздухе представляют собой суммарные максимально достижимые концентрации, соответствующие наиболее неблагоприятным метеорологическим условиям. Значения максимальных концентраций в расчетных точках приведены в таблице 1.2.5.

Таблица № 1.2.5 - Значения максимальных концентраций в расчетных точках

Наименование	Тип	Координаты			Расчетная концентрация		Фон, д.ПДК	Вклад предприятия, д.ПДК	Ветер: направление; скорость, °м/с	Пл., Цех, ИЗА	Вклад ИЗА	
		X	Y	Высота, м	д.ПДК	мг/м³					д. ПДК	%
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
Расчетная площадка 1(СК Основная СК)												
1	ОСЗЗ	342,25	641,21	2	0,033	0,0098	-	0,033	166 ↑ 24	1.1.1	0,033	100
2	ОСЗЗ	636,42	502,08	2	0,017	0,0051	-	0,017	251 → 24	1.1.1	0,017	100
3	ОСЗЗ	652,38	177,07	2	0,039	0,0117	-	0,039	304 ↘ 24	1.1.1	0,039	100
4	ОСЗЗ	311,53	15,86	2	0,025	0,0075	-	0,025	7 ↓ 24	1.1.1	0,025	100
5	ОСЗЗ	62,87	264,52	2	0,024	0,0073	-	0,024	87 ← 24	1.1.1	0,024	100
6	Пром.	219,87	430,59	2	0,027	0,0081	-	0,027	123 ↖ 24	1.1.1	0,027	100
7	Пром.	332,36	493,2	2	0,024	0,0073	-	0,024	152 ↖ 24	1.1.1	0,024	100
8	Пром.	544,1	247,45	2	0,024	0,0073	-	0,024	307 ↘ 24	1.1.1	0,024	100
9	Пром.	463,35	177,87	2	0,024	0,0073	-	0,024	332 ↘ 24	1.1.1	0,024	100

Результаты расчета по расчетной площадке № 1 приведены в таблице 1.2.6.

Таблица № 1.2.6 - Значения максимальных концентраций в узлах сетки расчетной площадки № 1

